

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

№ 2(44)
2024

«Բանբեր Երևանի համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета». Three issues of “Journal of Yerevan University. Philosophy, Psychology” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Редакционная коллегия:

Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Հարությունյան Էդվարդ (փ.գ.դ., պրոֆ.,
edvardharutyunyan@ysu.am)

Арутюнян Эдуард (д.флс.н., проф.)

Harutyunyan Eduard (Sc. D. in Philosophy,
Professor)

Ավանեսյան Հրանտ (հ.գ.դ., պրոֆ.,
avanesyanh@ysu.am)

Аванесян Грант (д.псих.н., проф.)

Avanesyan Grant (Sc. D. in Psychology,
Professor)

Բաղրամյան Մարիա (փ.գ.դ., պրոֆ., Բրաուն-
դիս, maria.baghratian@ucd.ie)

Баграмян Мария (д.флс.н., проф., Ирландия)

Baghratyan Maria (Sc. D. in Philosophy,
Professor, Ireland)

Բարսեղյան Հակոբ (փ.գ.դ., Կոնստանտինոպոլիս,
hakob.barseghyan@utoronto.ca)

Барсегян Акоп (д.флс.н., Канада)

Barseghyan Hakob (Sc. D. in Philosophy,
Canada)

Գոսсерիես Աքսել (փ.գ.դ., պրոֆ., Բելգիա,
axel.gosseries@uclouvain.be)

Госсериес Аксель (д.флс.н., проф., Бельгия)

Gosseries Axel (Sc. D. in Philosophy, Professor, Belgium)

Չարսիսյան Մելան (փ.գ.դ., պրոֆ., szakarian@ysu.am)

Закарян Сейран (д.флс.н., проф.)

Zakaryan Seyran (Sc. D. in Philosophy,
Professor)

Շեմոյտել-Պյոտրովսկա Մագդալենա

(հ.գ.դ., պրոֆ., Լեհաստան, m.zemojtel-piotrowska@uksw.edu.pl)

Жемойтель-Петровска Магдалена

(д.псих.н., проф., Польша)

Zemojtel-Piotrowska Magdalena (Sc. D. in
Psychology, Professor, Poland)

Լուբովսկի Լյուբովսկի (հ.գ.դ., պրոֆ.,

Ռուսաստան, lubovsky@yandex.ru)

Лубовский Дмитрий (д.псих.н., проф.,
Россия)

Lubovski Dmitri (Sc. D. in Psychology, Professor, Russia)

Խաչատրյան Նարինե (հ.գ.թ., դոց., n_khachatryan@ysu.am)

Хачатрян Нарине (к.псих.н., доц.)

Khachatryan Narine (PhD in Psychology,
Associate Professor)

Մարկոշյան Մարիաննա (փ.գ.դ., պրոֆ.,
UUG, markosh@uga.edu)

Кожкарян Марианна (д.флс.н., проф., США)

Koshkaryan Marianna (Sc. D. in Philosophy, Professor, USA)

Շահվերդյան Գայանե (հ.գ.դ., պրոֆ.,
gayaneshahverdyan@ysu.am)

Шавердян Гаяне (д.псих.н., проф.)

Shahverdyan Gayane (Sc. D. in Psychology, Professor)

Պետրոսյան Սիլվա (պրոֆ. քարոզչական,
փ.գ.թ., դոց., silva.petrosyan@ysu.am)

Петросян Сильва (отв. секретарь, к.флс.н., доц.)

Petrosyan Silva (Executive Secretary, PhD, Associate Professor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ФИЛОСОФИЯ

PHILOSOPHY

<i>Սեյրան Չարարյան</i> – Հայկ Ասատրյանի գաղափարախոսության փիլիսոփայական հիմքերը	5
<i>Сейран Закарян</i> – Философские основы идеологии Айка Асатряна	
<i>Seuran Zakaryan</i> – Philosophical Foundations of Hayk Asatryan's Ideology	
<i>Հրիսիմե Չարարյան</i> – Երկխոսայնությունից մինչև միջտեքստայնություն (ժամանակակից եվրոպական մշակույթի ուղիները)	19
<i>Рипсима Закарян</i> – От диалогизма к теории интертекстуальности (пути современной европейской культуры)	
<i>Hripsime Zakaryan</i> – From Dialogism to the Theory of Intertextuality (the path of modern European culture)	
<i>Նելլի Ալավերդյան</i> – Պատմական հիշողությունը որպես հասարակության արժեքանորմատիվային համակարգի բաղադրիչ	32
<i>Нелли Алавердян</i> – Историческая память как компонент ценностно-нормативной системы общества	
<i>Nelli Alaverdyan</i> – Historical Memory as a Component of Society's Value-Normative System	
<i>Ղազար Ավետիսյան</i> – Վիրտուալության և իրականության փոխհարաբերության գոյաբանական հիմնախնդիրը	43
<i>Казар Аветисян</i> – Онтологические проблемы взаимосвязи виртуальности и реальности	
<i>Ghazar Avetisyan</i> – Ontological Problems of the Relationship Between Virtuality and Reality	

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ПСИХОЛОГИЯ

PSYCHOLOGY

- Нелли Ароян*** – Понимание «страдания», «боли» и «человеческого бытия» в психоанализе и философии **51**
- Նելլի Հարոյան*** – «Տառապանք», «ցավ» և «մարդկային գոյություն» հասկացությունները հոգեվերլուծության և փիլիսոփայության մեջ (ռուս.)
- Nelli Haroyan*** – Understanding of «Suffering», «Pain» and «Human Existence» in Psychoanalysis and Philosophy (in Russian)
- Սվետլանա Բաղդասարյան*** – Տեղեկութահոգեբանական ներգործությունը որպես զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող կարևոր գործոն **60**
- Светлана Багдасарян*** – Информационно-психологическое воздействие как важный фактор, определяющий степень боевой активности военнослужащих
- Svetlana Baghdasaryan*** – Information-Psychological Impact as an Important Factor Determining the Degree of Combat Activity of Servicemen
- Karlen Voskanyan*** – On the Problem of Rationality of Economic Choice in the Context of Psychological Factors..... **70**
- Քարլեն Ոսկանյան*** – Տնտեսական ընտրության արդյունավետության հիմնախնդիրը հոգեբանական գործոնների համատեքստում (անգլ.)
- Карлен Восканян*** - О проблеме рациональности экономического выбора в контексте психологических факторов (англ.)

ՀԱՅԿ ԱՍՏՏՐՅԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

XX դարի առաջին կեսի հայ փիլիսոփայության նշանավոր դեմքերից է փիլիսոփա, ազգային գործիչ, «Տարոնականություն» շարժման համահիմնադիր Հայկ Ասատրյանը (1900-1956), որը փիլիսոփայությունը գերազանցապես ծառայեցնում է իր ազգայնական գաղափարախոսության հիմնավորմանը: Հռչակածում առանձնացվում են Հ. Ասատրյանի գաղափարախոսության հիմքում ընկած տեսական-փիլիսոփայական հետևյալ դրույթները՝ ա) հայոց ազգի անցյալին, ներկային ու ապագային աղերսվող կենսական հարցերը՝ նա դիտարկում է ցեղագիտության պրիմորդիալիստական տեսության սոցիալ-կենսաբանական ուղղության ուսույնակով, բ) նա կենսաբանականացնում է նաև ճանաչողական գործընթացը՝ այն դիտելով որպես կենսաբանական երևույթ, միջավայրին հարմարվելու մեխանիզմ, իսկ ճշմարտությունը՝ որպես հաջողության հասնելու գործիք, գ) հակառակվելով էթնիկական հանրությունների պատմական զարգացման գիտական համարվող ըմբռնմանը՝ նա ստեղծում է ցեղի մասին առասպելական մի պատկերացում, որում ցեղն է համարվում «ազգութեան եւ ժողովրդի գոյութեան նախապատճառը եւ հիմքը», իսկ ցեղային բնության ձևավորման գործում բացարձակացնում է ոչ միայն ժառանգական տվյալները, այլև բնական միջավայրի դերը, դ) ընդունում է առասպելական «ազգային ոգու» գոյությունը, որը փոխանցվում է ժառանգաբար «արյան» միջոցով, և որի մեջ գործում է Աստծո կամքը, ե) պատմաիմաստասիրական նյութի հիման վրա վերլուծելով հայոց պատմական ընթացքը և հայոց հոգեբարոյական նկարագիրը՝ նա հայոց ճախողումների և ողբերգությունների հիմնական պատճառ է համարում սուբյեկտիվ գործոնները: Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար Ասատրյանը առաջարկում է ազգայնական գաղափարախոսության միջոցով սրբագրել ինքնութենական թերիները և վերափոխել ազգի «վատասերված» բնությունը: Եթե վերանանք Հ. Ասատրյանի ցե-

* **Սեյրան Զաքարյան** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի վարիչ

Сейран Закарян – доктор философских наук, профессор, заведующий кафедрой истории, теории философии и логики ЕГУ

Seyran Zakaryan – Sc. D. in Philosophy, Professor, Head of YSU Chair of History, Theory of Philosophy and Logic

Էլ. փոստ՝ szakaryan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0000-0003-3743-0381>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 05.03.2024

Գրախոսվել է՝ 02.04.2024

Հաստատվել է՝ 12.07.2024

© The Author(s) 2024

դի, ոգու մասին ժամանակավրեպ ու առասպելախառն պատկերացումներից, կարող ենք ասել, որ այսօր էլ արդիական են մնում նրա բազում գաղափարներ և հետևյալ հորդորը. արդի մարտահրավերներին դիմակայելու, դժվարությունները հաղթահարելու և հայկականությունը պահպանելու համար հարկավոր է համախմբվել համազգային նպատակի շուրջը և հենվել ազգային արժեքների վրա:

Բանալի բառեր – *Հայկ Ասատրյան, Գարեգին Նժդեհ, ցեղակրոնություն, տարոնականություն, փիլիսոփայություն, ազգայնական գաղափարախոսություն, էթնիկական հանրություններ, ազգային ոգի, ազգային ինքնություն*

XX դարի առաջին կեսի հայ փիլիսոփայության նշանավոր դեմքերից է փիլիսոփա, ազգային գործիչ, «Տարոնականություն» շարժման համահիմնադիր **Հայկ Ասատրյանը**: Հ. Ասատրյանը փիլիսոփայության դոկտոր էր (նրա դոկտորական թեզը վերաբերում էր Հեգելի փիլիսոփայությանը), բայց նա չի գրել զուտ փիլիսոփայական երկեր, այլ ավելի շուտ փիլիսոփայությունը ծառայեցրել է իր ազգայնական գաղափարախոսության հիմնավորմանը: Ինչպես Գարեգին Նժդեհի, այնպես էլ Հ. Ասատրյանի փիլիսոփայական մտածումների կիզակետում Հայրենիքին, հայոց ազգի անցյալին, ներկային ու ապագային, հայոց ինքնությանն աղերսվող կենսական հարցերն են, որոնք նա հիմնականում դիտարկում է ցեղագիտության պրիմորդիալիստական կամ էությունապաշտական (էսենցիալիստական) տեսության սոցիալ-կենսաբանական ուղղության ուսանյակով: Այդ տեսությունը¹ մարդկանց կենսաբանական (ժառանգական) տվյալների առանձնահատկություններով փորձում է բացատրել էթնիկական

¹ Ժամանակակից գիտությունը (գիտնականների մեծ մասը) մերժում է ցեղի, տեսակի, ռասայի մասին նման տեսությունները, քանի որ, **նախ** գիտական տվյալները հերքում են գտարյուն ռասայի գոյության հնարավորությունը, **երկրորդ** ընդունվում է, որ մարդը ոչ այնքան կենսաբանական, որքան պատմամշակութային էակ է, և որ **մարդու կենսաբանության մեջ չկա որևէ բան, որը մարդուն կդարձնի մարդ: Երրորդ** բոլոր մարդիկ պատկանում են Homo Sapiens տեսակին, իսկ ազգերի միջև տարբերությունները պայմանավորված են ո՛չ միայն և ո՛չ այնքան կենսաբանական, այլև որքան տնտեսական, սոցիալական, կրոնական, քաղաքական, մշակութային և այլ գործոններով: **Չորրորդ** դրանք հիմք են ստեղծում ռասայական խտրականությունն քարոզող զանազան ուսմունքների՝ ռասիզմի, ֆաշիզմի առաջացման համար: Երկրորդ աշխարհամարտից հետո ռասայական տեսությունները թե՛ գիտնականների մեծ մասի և թե՛ միջազգային կառույցների կողմից դատապարտվել է: 1950 թ. ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) «Ռասայի հարցի» («The Race question») մասին հայտարարության մեջ նշվում է, որ պետք է տարբերել կենսաբանական ռասան և «ռասայի» մասին առասպելը. «ռասան» ոչ այնքան կենսաբանական երևույթ է, որքան **սոցիալական առասպել**: Իսկ 1978 թ. ռասայի և ռասայական նախապաշարմունքի մասին հայտարարության մեջ նշվում է. «Բոլոր մարդիկ պատկանում են մեկ տեսակի և սերում են մեկ ընդհանուր ցեղից: Նրանք ծնվում են արժանապատվությամբ և իրավունքներով, և բոլորը կազմում են մարդկության անբաժանելի մասը» («Декларация о расе и расовых предрассудках». Принята Генеральной конференцией ООН по вопросам образования, науки и культуры на ее двадцатой сессии 27 ноября 1978 года), https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/racism.shtml

հանրայինների միջև գոյություն ունեցող վարքագծի և մտածելակերպի տարբերությունները, ցեղի մասին մերձգիտական (առասպելական) պատկերացման հիման վրա՝ ներկայացնում էթնիկական հանրայինների (ցեղ, ազգ, ժողովուրդ) հոգեբարոյական նկարագրերի և պատմական ընթացքի առանձնահատկությունները: Ըստ Հ. Ասատրյանի՝ ցեղերն իրարից տարբերվում են իրենց կենսաբանական-մարդաբանական հատկություններով՝ կազմվածքով, արյամբ, ոգով, մտածելակերպով, ինչի հետևանքով «ցեղաբանական տարբերությունները պատճառում են հոգեբանական խորթություն, իսկ վերջինս՝ արժեքմոտմաների հակամարտություն»²: Ավելին, հետևելով Էվոյուցիոնիստական իմացաբանությանը, ի մասնավորի Ֆ. Նիցշեի «կյանքի փիլիսոփայության» և Ու. Ջեմսի պրագմատիզմի տեսությանը, Հ. Ասատրյանը կենսաբանականացնում է նաև ճանաչողությունը՝ այն մեկնաբանելով որպես շրջակա միջավայրին հարմարվելու կենսաբանական գործառույթ, իսկ ճշմարտությունը դիտում է որպես հաջողության հասնելու գործիք: Ըստ Նիցշեի, գրում է նա, ճշմարտությունը մի տեսակ մոլորություն է, առանց որի, սակայն, մարդը չի կարող «կենսաբանօրէն նպատակայարմար» մի քայլ անել: Պաշտպանելով ճշմարտության սուբյեկտիվիստական տեսությունը՝ նա ճշմարտությունը համարում է մտակառուցման արգասիք, սուբյեկտի էության, «ներհոգեւոր ոգորումների, դեգերումների, գործունեութեան» դրսևորում. «Մենք ենք ստեղծում, կառուցում մեր ճշմարտությունները, ապա դրանք դարձնում մեր գլխին պատուհաս կամ օրհնաբեր նաճումների միջոց» (էջ 18): Ճշմարտությունը մտքի և կամքի փոխկապակցված ու համատեղ գործունեության արգասիք է, որում միտքը պայմանավորում է ճշմարտության ձևական, իսկ կամքը՝ բովանդակային կողմը: Արդյունավետ կամ «ամբողջական» են այն ճշմարտությունները, որոնց բանաձևումների հիմքում ընկած են «ճշմարտագործ ենթակայի բանական իրաունքներն եւ կենսաբանական շահերը» (էջ 18): Այս իմաստով ճշմարտությունները միշտ էլ ունենում են օգտապաշտական բնույթ, որովհետև դրանց գործնական արժեքը չափորոշվում է այն բանով, թե ինչքան և ինչպե՛ս են ծառայում անհատի կենսաբանական նպատակներին. «Արժեքատր է ամէ՛ն ճշմարտութիւն, որ կենսաբանօրէն նպատակայարմար է: Անարժեք եւ անիմաստ է ամէ՛ն ճշմարտութիւն, որ կենսաբանօրէն նպատակայարմար չէ» (էջ 19): Ըստ այդմ, մարդիկ, ցեղերն ու ազգերը ապրում են իրենց «կառուցած ճշմարտութեանց ոյժով» և մեռնում «սրանց անուժական, անգործնական նկարագրի հետևանքով»: Անշուշտ, մարդկային ճանաչողությունը կատարում է հարմարվողական գործառույթ ինչպես բնական, այնպես էլ սոցիալական աշխարհի նկատմամբ, սակայն իմացությունը միայն կենսաբանական երևույթ չէ, այլև սոցիալական, և այն կոչված է բավարարելու մարդու ճանաչողական պահանջմունքը: Իմացության միջոցով մարդիկ ոչ այնքան հարմարվում են միջավայրին, որքան փոխում են

² Հ. Ասատրյան, Հատընտիր, Եր., 2004, էջ 74 (այսուհետև այս գրքից մեջբերումների հղումների էջերը կտրվեն տեքստում):

այն՝ հարմարեցնելով իրենց կարիքներին ու պահանջներին: Ի դեպ, այս միտքը պաշտպանում է նաև Հ. Ասատրյանը՝ կարծելով, որ մարդիկ (ցեղերը) ոչ միայն հարմարվում են բնական պայմաններին, այլև իրենց մշակութաստեղծ գործունեությամբ դրանք հարմարեցնում են իրենց կենսական պահանջունքներին: Ավելին, ժամանակի հոլովություն գոյատևում են այն ժողովուրդները, որոնք «ցեղորեն օժտված են միջավայրը իրենց պատշաճեցնելու եւ նրան յարմարվելու ընդունակութեամբ»: Օրինակ՝ ըստ նրա՝ հայերը կարողացան աշխարհաքաղաքացիական բովանդակություն ունեցող քրիստոնեական կրոնը «ազգայնացնել», ինչի հետևանքով քրիստոնեությունը ձուլվեց հայ ազգային «տառապապաշտ» ոգուն, և հոգեբանական յուրահատուկ համադրումով ի հայտ եկավ քրիստոնյա մարդու մի տիպար՝ «հայ քրիստոնյան»: Այնուհանդերձ, մշակութային այդ «հարմարեցումը» նա կապում է ցեղի կենսաբանական հատկությունների հետ՝ կարծելով, որ մշակութային ձևերը չեն փոխում ժառանգաբար տրվածը: Մինչդեռ, **նախ**՝ մշակույթը վերկենսաբանական երևույթ է, իսկ կենսաբանականն ընդամենը նախադրյալ է, **երկրորդ**՝ ազգը (ժողովուրդը) ազգ է դառնում ոչ թե իր կենսաբանական հատկությունների շնորհիվ, այլ երբ կարողանում է էթնիկական-ազգագրական մշակույթի բազմազանության վրա բարձրացնել մշակույթի վերին՝ արդեն ընդհանրական շերտի՝ գրական լեզվի, գրի ու գրչության, գրատպության, արվեստի ու գրականության, փիլիսոփայության, գիտության, կրթական համակարգի, շինարարական արվեստի ու ճարտարապետության, այդ թվում հասարակական-պետական կյանքի կազմակերպման ընդհանրական իրավաքաղաքական ձևերը³:

Հ. Ասատրյանի «կառուցարկած» ճշմարտությունը խարսխվում է հայոց օրհասական վիճակը բնութագրող «տխուր» փաստերի վրա, և նպատակ ունի ցուցանելու այդ իրավիճակից դուրս գալու ճանապարհը: Ըստ նրա՝ ցեղապանված, հայրենագրկված ու աշխարհով մեկ սփռված հայոց ազգը կանգնած է նոր մարտահրավերների առջև, որոնցից առաջնահերթը ազգային ինքնությունն ու մշակութային ինքնատիպ դիմագիծը կորցնելու, ուժանալու, որպես տեսակ վերանալու վտանգն է: Ողբերգականը ոչ այնքան այն է, որ հայ ազգի վիճակը ողբերգական է (ունենք **«թափառական ժողովուրդ էւ քաղաքականապէս յոշոտած հայրենիք»**), որքան այն, որ նա չի փնտրում ուղիներ այդ վիճակից դուրս գալու համար, չունի ինքնակազմակերպման ու վերանվաճողական համազգային ճիգ: Ավելին՝ **«Ուրիշ ժողովուրդներ ոտքի են ելնում վտանգից առաջ, մենք՝ մրափում ենք աղէտից յետոյ էլ»** (էջ 13): Որո՞նք են այս տարօրինակ ու անհասկանալի իրավիճակի պատճառները: Հ. Ասատրյանի համոզմամբ՝ պատճառները հիմնականում ենթակայական (սուբյեկտիվ) են՝ պայմանավորված այն բանով, որ՝ ա) հայ մտավորականությունը հոգևոր ծուլության կամ

³ Տե՛ս Հ. Ա. Գևորգյան, Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ, Եր., 2005, էջ 510-511:

մտավոր մակերեսության պատճառով «**ո՛չ ցեղի ամոթանքն ապրելու առաքինությունն ունի**», ո՛չ «ինքնափրկութեան հավատ», ո՛չ էլ ինքնաճանաչողական խոկում: Իսկ ընդհանրապես մեր բոլոր գաղափարական խարխափանքները, քաղաքական սխալները, կազմակերպական թերիները պայմանավորված են այն բանով, որ մենք չունենք **«հայկականօրէն հիմնաւորած աշխարհայեցողութիւն»**, անցյալ ու ներկա իրականության մասին համակարգված, պատճառագիտորեն հիմնավորված հայեցակարգ: Իսկ այն մշակելու համար հարկավոր է առնվազն անել հետևյալ քայլերը՝ ա) համակարգել հայ մտածման ու իմաստասիրման արդյունքները, այսինքն՝ ցուցահանել հայ փիլիսոփայության գծերը, ուսումնասիրել ներկայի հայի հոգևոր խմորումները, վերլուծել հայոց մեջ տարածված հոսանքների գաղափարական դրույթները, բ) լույս սփռել հայոց հոգեբանական առանձնահատկությունների վրա, միջոցներ առաջարկել մեր հոգեբանական թերիները սրբագրելու, հոգեբանորեն կազմակերպել ազգի ինքնապաշտպանության և վերափոխման գործը, գ) մշակել հայոց պատմության փիլիսոփայությունը, ուսումնասիրել մեր պատմական կյանքի միջավայրը՝ Հայկական բարձրավանդակը, ցույց տալ դրա ազդեցությունը հայոց հոգեգծերի ձևավորման գործում, դ) հետազոտել հայոց պատմական կյանքի օրինաչափությունները, հայոց ողբերգությունների, այդ թվում ցեղասպանության արտաքին ու ներքին պատճառները, արժեքավորել հնագույն և նորագույն «յեղափոխությունները», մատնանշել մեր քաղաքական-հասարակական վերածնության և հոգեկորոզման ուղիներն ու կարելիությունները:

Հ. Ասատրյանը **«հայկականօրէն հիմնաւորած աշխարհայեցողութեան»** իր տեսլականի հիմքում դնում է նախածին առաքինություններով ու արտակարգ հատկություններով օժտված ցեղի մասին միֆը՝ **ցեղակրոնությունը** (որն ավելի ուշ վերանվանվում է տարոնականություն⁴)՝ որպէս բնագանգական և կենսաբանական բովանդակությամբ հազեցած տեսություն: Յեղակրոնության բնագանցությունը ենթադրում է գոյի խորհուրդի, «գոյութեան հանելուկի», տիեզերաբանական ուժերի ու երևույթների (Բացարձակ, Ոգի, ճակատագիր, պատճառ, հետևանք, պատահականություն, արկած և այլն), մարդկային կեցության առեղծվածի վերծանում և մարդու մեջ բանականի ու անբանականի, գիտակցականի ու անգիտակցականի, կամքի ու էության, մտքի ու զգացմունքի, ճշմարտության ու մոլորության հարաբերության պարզաբանում: Բնագանցությունը, գրում է նա, որը տարբեր տեսությունների միջոցով փորձում է հասկանալ Ես-ի և բնության, ոգու և նյութի, կյանքի և առարկայի իմաստը, առայժմ հանգել է այն մտքին, որ դրանց միջև եղած «կապն ու անկապը» շատ ավելի խորհրդավոր է, քան կարող է ըմբռնել մարդկային ողջախոհությունը, կամ քան կարող են սահմանել «ճշգրիտ գիտութիւնները»: Ըստ Հ. Ասատրյանի՝ գո-

⁴ Անվանափոխության պատճառների մասին տե՛ս Մ. Լալայան, Տարոնական շարժումը. Հայկ Ասատրյան, Եր., 2002; **Խույնի**՝ Յեղակրոն և տարոնական շարժումները, Եր., 2011:

յություն ունի Բացարձակը (Աստված), որի կամքը պատճառ է արարչագործության, և առանց որի հնարավոր չէ պատկերացնել գոյի ընթացքը և մարդու գոյության իմաստը: Մարդն անիմանալի ձևով զոդված է Բացարձակին, հետևաբար պետք է լինի Նրա կամքի արտահայտիչը, պետք է ձև տա իր մեջ ապրող հավիտենականությանը և մասնակից լինի արարչագործությանը: **«Մարդն իր համար ճակատագրական մի անասուն է, կենդանական մի անցում, և նրա գոյութիւնը արժէք է ստանում միմիայն աստուածայինի հետ հաղորդակից դառնալու տենչով»** (Էջ 53): Իսկ հավերժականը տեսակն է՝ ցեղայինը, որն անհատականացվում է յուրաքանչյուր մարդու մեջ: Անհատները հաղորդակցվում են հավիտենականի հետ՝ Աստծո կամք արարված իր տեսակը հավերժացնելու նպատակով: Պատմության ընթացքում հաղթում են այն տեսակները, որոնք առաջնորդվում են Աստծո կամքով: Յեղը Աստծո և մարդու միջև եղած կամուրջն է: Յեղին վերագրվում է ճակատագրական դեր, քանի որ ցեղը միայն կարող է փոխել պատմության ընթացքը: Ի դեպ, ցեղն աստվածածին է, սակայն ո՛չ թե Աստծուց կանխորոշված է մնալու հավերժ, այլ կարող է վերանալ՝ կախված գոյության կովում նրա կենսունակությունից և Աստծո հետ հաղորդության կերպից: Բացի դրանից, ցեղային բնատուր հատկությունները թեև անփոփոխ են, սակայն ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով կարող են այլասերվել, կորցնել իրենց ցեղային դրոշմը: Նման բացատրությունը հակասում է Հ. Ասատրյանի ամեն ինչի «կենսաբանական արմատի» կամ «գենետիկական ժառանգականության» մասին մտքերին: Եթե ցեղային հատկանիշները անփոփոխ են, և դրանք անփոփոխ ձևով փոխանցվում են անհատներին (այսինքն՝ ցեղի բոլոր ներկայացուցիչները պետք է ունենան նույն մտածելակերպը և գործելակերպը), ապա, նախ, ինչպե՞ս է տեղի ունենում անհատականացումը և առհասարակ փոփոխությունը, որը ենթադրում է նաև շեղում, երկրորդ, ինչո՞ւ պետք է «լավ» ցեղերը այնպես վատասերվեն, որ ցեղայինից գրեթե բան չմնա: Օրինակ, ըստ Հ. Ասատրյանի՝ հայը լավ ցեղ է, բայց վատ ժողովուրդ, որովհետև չի կարողացել իրեն հարմարեցնել Հայկական բարձրավանդակի առավելությունները, չի կարողացել պահպանել իր ցեղային հատկությունները և այլն: Այդ դեպքում ո՞ւր մնացին հայի կենսաբանական արտակարգ հատկությունները. ուրեմն՝ կա՛մ դրանք առասպելական ինքնավերագրումներ են, անպատմական անցյալի կամ «բնագանցական» հայի իդեալականացված հատկություններ, կա՛մ էլ հայի ցեղային վատասերման ու պատմական ձախողումների պատճառը ոչ թե կենսաբանական-ժառանգական հատկություններն են, այլ վերկենսաբանական բազմաթիվ գործոններ և առաջին հերթին փոփոխվող սոցիոմշակութային և ռազմաքաղաքական պայմաններում համարժեք ձևերով հարմարվելու անկարողությունը և քաղաքական առումով ինքնակազմակերպական մշակույթի գրեթե բացակայությունը:

Իսկ ցեղակրոնության կենսաբանական ըմբռնումը ենթադրում է ցեղի ա-

ռաջացման, ցեղի բնության, դրա առանձնահատկությունների, Աստծո ու ցեղի, անհատի ու ցեղի, բնական միջավայրի և ցեղի բնության, ժառանգականության և մշակույթի փոխհարաբերության հարցերի պարզաբանում: Հ. Ասատրյանը, հետևելով գերմանացի մարդաբան Օ. Ֆիշերի տեսությանը, տարբերակում է **ցեղ, ազգ և ժողովուրդ** հասկացությունները՝ կարծելով, որ ազգի և ժողովրդի ճակատագիրն «ամենաուժեղ եւ ամենավճռական» կերպով գտնվում է իրենց ցեղային բնության ազդեցության տակ. **«Ցեղը կենսաբանական ըմբռնում է, ազգութիւնը՝ պատմական, ժողովուրդը՝ ընկերային: Որով ցեղն է ազգութեան եւ ժողովրդի գոյութեան նախապատճառը եւ հիմքը: Ցեղը ուժածին գործօն է, ազգութիւնը եւ ժողովուրդը՝ նրա արդիւնքները»** (էջ 27): Ինչպես Նժդեհը, այնպես էլ Հ. Ասատրյանը գիտականորեն չեն սահմանում ցեղը, ուստի անհասկանալի է մնում, թե ի՞նչ է ցեղը՝ էթնիկական հանրո՞ւյթ, որից ձևավորվում է ազգը, երբ միավորվում են մի քանի ցեղեր (այդ դեպքում պարզ չէ, թե ցեղակրոնությունում ո՞ր ցեղի պաշտամունքի մասին է խոսքը), թե՞ ցեղը դիտվում է որպես արդեն ձևավորված ազգին բնորոշ բնատուր (կենսաբանական) հատկությունների ամբողջություն, առասպելական-իդեալական մի գոյացություն, որն իբր մարմնավորում է գուտ ցեղայինը: Թերևս վերջինը, բայց Հ. Ասատրյանը նաև ընդունում է ցեղաբանական գրականության մեջ տարածված այն ըմբռնումը, ըստ որի՝ ցեղը ժառանգական ընդհանուր ստացվածքով օժտված մարդկային մի խմբակցություն է: Ժառանգականությունը կենսաբանական գորութենականությամբ պայմանավորված այն օրենքն է, որով տեսակները սերնդագործման միջոցով ձգտում են հավիտենականացնել իրենց գոյությունը: Ցեղը բնության պահպանման գորություն է, խառնվածք, նկարագիր, ոգի և արյուն, կամք և բանականություն: Ցեղի բնության պահպանումը հնարավոր է դառնում անհատների միջոցով, որոնք կրում են տվյալ ցեղը հատկորոշող մարմնական և հոգեկան բնածին գծերը: Ցեղը գոյության մարգում կենսաբանորեն նպատակահարմարը ստեղծելու և խնամելու գորույթ է, ինչի պատճառով պատմության մարգում ցեղը դառնում է ժողովուրդների գոյության պայքարի առաջնորդն ու զենքը. **«Ազգերի պատմութիւնը գրում է ցեղի արիւնով եւ ոգու տանջանքով, բայց ո՛չ ժողովրդի քրտինքով եւ հացի ժխտով»** (էջ 113): Տիեզերքը հասկացվում և հաղթահարվում է «յաւիտենազգաց ոգու» գործունեությամբ: Ի հավելումն ցեղի մասին կենսաբանական-առասպելական ըմբռնմանը՝ Հ. Ասատրյանը պնդում է, որ ցեղը և Հայրենիքն անբանական (իրոացիոնալ) ուժեր են և գտնվում են հոգեկանի անգիտակցական կամ ենթագիտակցական շերտում, որը տարբերվում է գիտակցականից այն բանով, որ ոչ թե իմացաբանական, այլ կենսաբանական երևույթ է, ոչ թե մտքի ընդունակություն է, այլ արյան: Անգիտակցականն ազգակից է բնությանը և ըստ էության բնատարերքի շարունակությունն է կենսաբանական էակների մեջ: Այս հարցում Հ. Ասատրյանը հետևում է գերմանական մերձփիլիսոփայական

շրջանակներում տարածված այն տեսությանը, ըստ որի՝ գոյություն ունի «ազգային ոգի» (*Volksgeist*)՝ իռացիոնալ, գերբնական մի սկզբունք, որը մարմնավորված է ազգի ներկայացուցիչների մեջ, և որի ինքնատիպությունն արտահայտվում է «արյան» և ռասայի միջոցով: Այս իմաստով խորհրդագագացական (միստիկական) «ազգային ոգին» փոխանցվում է ժառանգաբար «արյան» միջոցով, իսկ ազգը հասկացվում է որպես ընդհանուր նախնիներից սերված համայնք՝ միահյուսված ազգակցական-արյունակցական կապերով:

Հայ մտածողի կարծիքով՝ ցեղերի ձուլումից ստեղծվում է ազգությունը, որը, ընկերային հավաքականություն դառնալով, վերածվում է ժողովրդի: Ցեղը՝ որպես կենսաբանական երևույթ, միաձույլ է, իսկ ազգը և ժողովուրդը որպես պատմական և ընկերային երևույթներ, բաժանվում են շերտերի դասերի, դասակարգերի: Ուստի նա հորդորում է հրաժարվել այդ սոցիալական բաժանումներից. «Մի՛ ըսեր «հայ աշխատավորություն», «հայ քաղքենիություն», «հայ ավատատեր», «հայ կղեր», ազգը մի՛ պատկերեր ներքուստ պառակտված, այլ ըսե՛ «հավիտենական հայկականություն», «հայություն»» (էջ 94): Մինչդեռ ցանկացած քիչ թե՛ շատ զարգացած հասարակություն անկարելի է պատկերացնել առանց սոցիալական բաժանումների՝ շերտերի, դասերի և սոցիալական այլ խմբերի: Չնայած իր հորդորին՝ այնուամենայնիվ Նժդեհի նման Հ. Ասատրյանը հայությունը բաժանում է երեք շերտի՝ ա) ցեղայինը մարմնավորող ընտրանի, բ) ցեղայինին մասամբ հաղորդ ժողովուրդ և գ) ցեղայինին առհասարակ անհաղորդ ամբոխ: Ազգայինի նկատմամբ տարբերակված մոտեցումը միանգամայն բնական երևույթ է, որի անտեսման դեպքում ուռճացվում է ազգայինի նշանակությունը, ավելին՝ ազգայինը (նույնականացումը) ընդունվում է որպես մարդկանց բաժանման հիմք, և սոցիալականի ամբողջ բովանդակությունը հանգեցվում է դրա մի մասին՝ ազգայինին, ինչը դառնում է թյուրըմբռնումների պատճառ: Հարկ է նշել, որ ցեղի, ազգի և ժողովրդի վերաբերյալ ասատրյանական դատողությունները նույնպես չեն համընկնում այսօրվա այն գիտական պատկերացմանը, ըստ որի՝ ազգը էթնիկական հանրույթների զարգացած ձևն է, ավելի շուտ՝ քաղաքական (պետականություն ունեցող) հանրույթ, իսկ ցեղը ընդամենը ազգի զարգացման նախնական փուլերից է: Բացի դրանից, եթե ցեղերի միաձուլումից առաջանում է ազգը որպես էթնիկական նոր հանրույթ, որն իր կենսագործունեության ընթացքում ձեռք է բերում արդեն ազգային հատկանիշներ, ապա ի՞նչ իմաստ ունի խոսելու այլևս գոյություն չունեցող ցեղի մասին:

Հ. Ասատրյանն աշխարհագրական դետերմինիզմի ոգով պնդում է, որ ցեղային բնության ձևավորումը մեծապես կախված է բնական միջավայրից՝ երկ-

րաբանական կազմից, աշխարհագրական դիրքից, կլիմայական պայմաններից, կենդանական և բուսական աշխարհի առանձնահատկություններից⁵: Օրինակ՝ Հայկական բարձրավանդակի՝ հայոց ազգի ծննդյան միջավայրի բնորոշ գիծը հրաբխականությունն է, որը խառնել է երկրաբանական բոլոր շերտերը և իր ազդեցությունը թողել հայոց խառնվածքի ձևավորման վրա (հայոց պատերազմի աստված Վահագնի ծնունդը հիշեցնում է Հայոց աշխարհի երկրաբանական ծնունդը): Այդ ազդեցության դրոշմն են՝ ա) հայր նախ և առաջ ոգու մարդ է՝ օժտված կենսաբանական գերաստիճան դինամիկայով, զգացական-իմացական էակ, որի մեջ «**յայտնութեան ոյժը գործում է զգացումների տարերային պոթելումով**», բ) ցեղատիպ հայի մարմնակերպությունը կրում է իր երկրի բարձրավանդակային բնության կնիքը. նա լեռնահովտական մարդ է և իր «արեան շաղախը եւ ոգու բնագծումը» ստացել է Հայկական բարձրավանդակում, հետևաբար ունի **լինելիական** նկարագիր⁶: Իսկ լինելիական հայը «յաւիտենատենչ մարդն է, յաւիտենական հայը», որի հոգում եռում է «գալիքի խորհուրդը», գ) հայի ոգում իդեալիստական և խորհրդապաշտական, բանապաշտական ու զգայապաշտական գծերն այնպես են խառնվել իրար, ինչպես հայոց աշխարհի հովիտները, լեռները և կիրճերը: Ընդ որում, դրանք դեռ խառն են, այսինքն՝ դեռ չկա ներքուստ ամբողջացած հայը, հայը դեռ լինելիական է, նրանում դեռ ընթանում է հակադիր ոգիների պայքարը: Ցեղը ձևավորվում ու կայանում է որոշակի բնական միջավայրում, սակայն ցեղի հանճարն այն չէ, որ հարմարվի միջավայրի բնական պայմաններին, այլ որ այդ պայմանները «պատշաճեցնի իր գոյութեան», իր հոգեկերտվածքին համապատասխան կերտի իր Հայրենիքը: Իսկապես, զգալի է բնական միջավայրի ազդեցությունը ցեղային բնության ձևավորման վրա (քանի ցեղի գոյության ժամանակներում անմիջական էր բնություն-մարդ հարաբերությունը), սակայն նույնը չենք կարող ասել արդեն ազգի պարագային, որի «բնության» կայացման գործում ավելի մեծ դեր են խաղացել քաղաքակրթական ու սոցիալ-մշակութային գործոնները:

⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս **Ա. Ա. Մարգսեան**, Աշխարհիմաստությունն իբրև հայոց ինքնութեան ուսումնասիրման եւ կառուցարկման գործօն (Հայկ Ասատրեանի օրինակով), «Էջմիածին», 2018, թիվ է, էջ 121-135:

⁶ Այս կապակցությամբ Հ. Ասատրյանը, համեմատելով գերմանացիների և հայերի հոգեգծերը, տեսնում է մի շարք ընդհանրություններ (որոնք խորթ են թուրքերին): Հավանաբար նա անտեղյակ էր, որ իր ժամանակին արյունաբերու Աբդուլ Համիդը նույնպես հոգեհարազատ գծեր էր տեսնում գերմանացիների և թուրքերի նկարագրերի միջև. «Յաճախ մեզ անուանում են Արեւելքի գերմանացիներ, - գրում է սուլթանը, - ինչպես որ ասում են, թե յոյները Արեւելքի ֆրանսիացիներն են: Ճիշդ է, մենք բնաորությամբ շատ նման գծեր ունենք գերմանացիների հետ: Մենք երկուսս էլ բաւականաչափ ծանրաշարժ ենք եւ երկար ժամանակ է հարկաւոր մեզ տաքացնելու համար: Համբերութեամբ մենք թոյլ ենք տալիս մեզ տանջել, սակայն դրանից մեր հարուածի թափը միայն աւելի է ուժեղանում: ...Քաջութիւնն ու պատուասիրութիւնը, ասպետական բնագոյներն ու հիւրասիրութիւնը միաժամանակ թե՛ գերմանացիների եւ թե՛ թուրքերի առաքինութիւնն են կազմում» («**Թուրքերը թուրքերի մասին**»/կազմող Ս. Հ. Պետոյան, Եր., 2011, էջ 183):

Հ. Ասատրյանի փիլիսոփայական դատողություններն անմիջականորեն առնչվում են հայոց հոգեբարոյական նկարագրի և ինքնության վերաբերյալ նրա մտածումներին, որոնք աչքի են ընկնում դիպուկ բնորոշումներով և խորիմաստ բանաձևումներով: Նժդեհի նման նա նույնպես պատմափմաստասիրական վերլուծությունների հիման վրա փորձում է թվարկել հայոց ազգի նկարագրի առավելություններն ու թերությունները, ցույց տալ հայոց ինքնութենական այն գծերը, որոնք բացասական ազդեցություն են թողել մեր պատմական ընթացքի վրա, դարձել մեր աղետների ներքին պատճառները: Հայր, գրում է նա, թերևս նկատի ունենալով «բնագանցական» հային, մտածումով, հղացումով, լեզվով ու ռազմական կորովով արիացի է, իսկ աշխարհապրումով՝ ալպիական. «Այդ պատճառով անհունօրէն խոր է նրանց նուիրումի զգացումը, զօրաւոր՝ տոկալու կամքը, անխախտ՝ համոզումը, իմաստալից՝ ստեղծագործական երկունքը, խիզախ՝ մարտական ոգին եւ խանդալից՝ հայրենասիրությունը» (էջ 408): Սակայն ժամանակի ընթացքում խաթարվել է հայի ազգային ոգին, վատասերվել նրա բնատուր հատկությունները, ինչի հետևանքով նրա կյանքը վերածվել է ողբերգությունների անվերջանալի շղթայի: Հ. Ասատրյանը նախ շեշտում է այն միտքը, որ հայը չկարողացավ օգտվել իր բնօրրանի առավելություններից, որովհետև չկարողացավ բնական իրողություններն ու պատմական անցքերը «պատշաճեցնել իր կենսական շահերին»: Այդ պատճառով նա չկարողացավ դրսևորել նաև իր «մշակութային ողջ կորովը»: Հայը չկարողացավ օգտվել ոչ միայն Հայկական բարձրավանդակի առավելություններից, այլև գաղափարական այնպիսի ուժից (որի համար շատ արյուն թափեց), ինչպիսին քրիստոնեությունն է: Հայոց ողբերգության մյուս պատճառն այն է, որ հայը գերագանցապես ներկայապաշտ է և իրապաշտ, այսինքն՝ կարճատեսի պես ներկայից անդին ոչինչ չի տեսնում՝ ո՛չ անցյալը և ո՛չ էլ ապագան, այլ «գտնում է ներկայի կոպիտ փաստերի ազդեցության տակ»: Հայոց ողբերգությունների մյուս պատճառը հայոց նկարագրի դուալիստական բնույթն է՝ հայի մեջ հակադիր ուժերի և հակումների, հակադիր դիրքորոշումների առկայությունը: Հայը արևապաշտ է, բայց քնամուլ է, իդեալիստ է, բայց դրամապաշտ, հայրենասեր է, բայց անձնապաշտ, իմացական է, բայց ոչ կռահող, խելք ունի, բայց ո՛չ երևակայություն, գիտապաշտ է, բայց ծուլանում է դրանից օգտվել, գոռոզ է, բայց հարմարվում է նվաստացմանը, քաջ է, բայց խորտակումի զգացում չունի, խիստ է, բայց անկարգապահ, երազատես է, բայց ներկայի գերին, ունի ուժի պաշտամունք, բայց ո՛չ հզորության կամք, արդարամիտ է, բայց ո՛չ ճշմարտասեր, ցեղ է, բայց գերադասում է ժողովրդի բարոյականը, իրեն համարում է ազգայնական, բայց ապրում է աշխարհաքաղաքացու սկզբունքներով: Առհասարակ հայությունը զուրկ է քաղաքական նպատակի և գաղափարական համոզմունքների կայունությունից: Միննույն անձը մեկ երեսով ներկայանում է որպես ցեղապաշտ, մյուսով՝ ընկերավար, մեկով՝ իդեալիստ, մյուսով՝ մատերիալիստ. «Բարոյական անկայունութիւնը կը ստեղծէ մտածումի ցրածութիւն,

երկրորդը՝ նպատակի անորոշութիւն, իսկ վերջինը՝ ճիգի, գործունէութեան աննպատակութիւն» (էջ 91): Եթե հայի «շուռ տված», հակադրություններից տուչորվող էության մեջ գոյություն չունի ձևակերպված նպատակ, ապագայի տեսլական, ապա պատմության մեջ թե՛ անցյալում, թե՛ ներկայում և թե՛ ապագայում, «անդեկ ու անգաղափար» գանգվածը միշտ էլ մատնվելու է անհաջողության: Հայոց ձախողումների ընդհանրական պատճառներից է պատմական զգացումի, կազմակերպվելու մշակույթի և ապագայի մասին տեսլականի կամ նպատակի բացակայությունը: Եթե չկա նպատակի հատակություն, նշանակում է, որ պատահական հանգամանքները պետք է որոշեն ազգի ճակատագիրը: Հարկ է նշել, որ հայի էության վերոնշյալ երկատվածությունը բնավ էլ բարոյական առաջընթացի կամ հոգևոր թռիչքի, նորի ստեղծման աղբյուր չէ, որովհետև այդ հակադրություններից մեկը ըստ էության կեղծ ու ձևական է, ընդ որում, որպես կանոն, կեղծը (բացասականը) գերիշխում է ճշմարիտի (դրականի) նկատմամբ: Հ. Ասատրյանն էլ է նշում, որ հայը «**ընդունակ չէ ոգու երկու ուղղություններ կրել իր անձի մեջ**» (էջ 101): Անձնապաշտը, դրամապաշտը, ներկայապաշտը երբեք չեն կարող լինել իսկական հայրենասեր (վտանգի դեպքում նրանք կա՛մ դառնում են պարտվողական, կա՛մ էլ անմիջապես լքում են հայրենիքը), հպարտը կարող է հայտնվել նվաստացուցիչ վիճակում, բայց երբեք չի նվաստանա և չի կորցնի իր ազգային արժանապատվությունը, սեփական ազգի հոգևոր արժեքները՝ մշակույթը, լեզուն, կրոնը, ավանդույթները չգնահատողը և չպահպանողը չի կարող լինել ազգասեր և այլն:

Ըստ Հ. Ասատրյանի՝ հային բնորոշ է նաև խոսքի և գործի հակասությունը, հատվածականությունը, անպատասխանատվությունը, պարտվողականությունը, անինքնաճանաչողությունը, անկարգապահությունը, օտարահակությունը, օտարածին արժեքների գերադասումը ազգայինից, գիտականության (հոգեգիտության) ու բարոյական կորովի պակասը, նպատակի, իշխելու, ճշմարտությունը բացահայտելու կամքի բացակայությունը և այլն, որոնք տարբեր ձևերով և պատճառներով (ոչ միայն կենսաբանական) դրսևորվել են հայոց բազմադարյա պատմական կյանքի ընթացքում՝ լրացնելով հայոց ողբերգությունների ներքին պատճառների ցանկը: Չնայած այս թերիներին, որոնցից մի քանիսը վերածվել են «անհաղթահարելի չարիքների», այնուհանդերձ Հ. Ասատրյանը լավատես է, վստահ, որ ինչպես մարդն ունակ է ինքն իրեն հաղթահարելու, այնպես էլ ազգերը կարող են բուժել իրենց ներքին տկարությունները և հոգեւորոգման ու ինքնամաքման միջոցով հասնել իրենց նպատակին: Իբրև ոգեպաշտ փիլիսոփա, նա կարծում է, որ դրա համար հարկավոր են «ներցեղային սրբութեան փիլիսոփայություն» և ոգին վերանորոգելու ճիգ, որովհետև ոգու մեջ գործում է տիեզերաստեղծ ուժը՝ Աստծո կամքը, և առհասարակ՝ «ոգու ներգործությունն է իմաստաւորում բնութեան ամէն մի երեւոյթը և պատմութեան դէպքերը», որ առանց ոգու իմացության հնարավոր չէ հասկանալ պատմությունը: Միաժամանակ նա կարծում է, որ իր քարոզած

վարդապետությունը՝ տարոնականությունը, միայն ընտրյալների համար է, բարոյական նորոգումի ընդունակ այն մարդկանց համար, ովքեր «**սրտի կսկիծով**» ապրում են ներկան և «**հոգու աչքով տեսնում երջանիկ ապագան**», ովքեր ուզում են «**յեղաշրջել ճակատագիրը**»: Այլ խոսքով՝ պրիմորդիալիստ Հ. Ասատրյանը ակամա դառնում է կոնստրուկտիվիզմի կողմնակից այն իմաստով, որ ընդունում է մարդու ու ազգի բնության վերաշինության ու վերակառուցման գաղափարը: Բայց տվյալ դեպքում ծագում է այն հարցը, թե կարո՞ղ են այդ փոքրաթիվ ընտրյալները վերափոխել «ցեղային» հոգեգծերը կորցրած, միայն սեփական հոգսերով ապրող, անձնապաշտ, ներկայապաշտ, դրամապաշտ բազմաքանակ այն «ոչընտրյալներին», որոնք ոչ միայն չեն մտածում, այլև չեն ուզում մտածել վերանձնական նպատակի, ազգային արժեքների, ազգի և Հայրենիքի մասին: Պատմական և ներկա օրերի փորձը ցույց է տալիս, որ դա այնքան էլ դյուրին գործ չէ, եթե անգամ այդ ընտրյալներին օժտենք դուցազնական գծերով և հանձին նրանց տեսնենք Աստծո կամքը կատարողների: Ավելին, եթե նկատի ունենանք իրավական պետության գոյությունը, ապա հասարակության վերափոխումը ազգայնական նման գաղափարախոսությամբ գործնականում ոչ թե անհավանական է, այլ այն կարող է դառնալ բռնության ու քաոսի, սոցիալական ցնցումների և պետականության կործանման պատճառ:

Այս առումով հայոց ողբերգությունների ու պարտությունների հիմնական պատճառներից է նաև այն, որ դարերի հոլովությամբ հայոց համար ճակատագրական պահերին հայոց ընտրանին չի կարողացել «արթնացնել» և իր հետևից տանել «ոչընտրանուն»: Այդ ընտրանին լինելով անինքնաճանաչ, էրբեմն անվճռական, պատկերացում չունենալով ոչ իր կարողությունների և ոչ էլ ժողովրդի տրամադրությունների ու ցանկությունների մասին, հաճախ փորձել է անիրատեսական, ռոմանտիկական կամ իռացիոնալ, զուտ քարոզչական միջոցներով հասնել նպատակին: Հարդյունս՝ ընտրանին ստիպված գիտակցաբար միայնակ հերոսացել է, իսկ ժողովուրդը բռնել է «կրավորական նահատակության» կամ գաղթի ճանապարհը: Թե՛ մեկը և թե՛ մյուսը ոչ միայն չեն հասել իրենց բաղձալի նպատակին, այլև միասին կորցրել են այն, ինչ ունեին մինչև այդ:

Թեև Հ. Ասատրյանի փիլիսոփայական հայացքներում ակնհայտ են վիճահարույց կետերը՝ պայմանավորված էթնիկական հանրությունների կյանքում կենսաբանական տվյալների և բնական միջավայրի ու աշխարհագրական գործոնների դերի բացարձակացմամբ, ազգայինի և սոցիալականի փոխհարաբերության, էթնիկական հանրությունների էվոյուցիայի վերաբերյալ մերձգիտական (առասպելական) պատկերացումներով, ազգայնական գաղափարախոսության միջոցով ազգի վիճակը վերափոխելու երազանքով, այդուհանդերձ այսօր էլ արդիական է մնում հայրենապաշտ մտածողի թե՛ ցանկություն-տես-

լականը՝ գիտականորեն (պատճառագիտորեն) ուսումնասիրել հայոց պատմությունը, հայոց մտածելակերպի և գործելակերպի (անշուշտ, առանց ցեղի մասին ժամանակավրեպ ու առասպելախառն պատկերացումների) վերլուծության և իմաստավորման հիման վրա մշակել հայոց աշխարհատեսության, պատմափիլիսոփայության և հայոց հոգեբարոյական նկարագրի մասին գիտական հայեցակարգեր, և թե՛ հորդորը՝ մարտահրավերներին դիմակայելու, դժվարությունները հաղթահարելու և հայկականությունը պահպանելու համար հարկավոր է համախմբվել համազգային նպատակի շուրջը և առաջնորդվել ազգային արժեքներով ու ավանդույթներով:

СЕЙРАН ЗАКАРЯН – *Философские основы идеологии Айк Асатрян*. – Айк Асатрян (1900-1956) – философ, национальный деятель, соучредитель движения «Таронаканутюн» (Таронство), – один из видных деятелей армянской философии первой половины XX века, который использовал философию для обоснования своей национальной идеологии. В статье представлены следующие теоретико-философские положения, лежащие в основе идеологии Асатряна: а) он рассматривает коренные вопросы прошлого, настоящего и будущего армянской нации через призму социально-биологического направления примордиалистской теории этнологии, б) он также биологизирует познавательный процесс, рассматривая его как биологическое явление, механизм приспособления к окружающей среде, и рассматривает истину как инструмент для достижения успеха, в) Противопоставляя научному пониманию исторического развития этнических общностей, он создает мифический образ рода, в котором род рассматривается как «причина и основа существования нации и народа», причем в формировании родоплеменного характера он абсолютизирует не только наследственные данные, но и роль природной среды, г) признает существование мифического «национального духа», который наследуется через «кровь», и в духе действует воля Божия, и вообще «воздействие духа придает смысл всякому явлению природы и событиям истории», д) на основе историко-философского материала анализируя исторический путь армян и психо-морального облик армян, делая глубокие выводы, он считает субъективные факторы основной причиной армянских неудач и трагедий. Для выхода из создавшейся сложной ситуации предлагается использовать национальную идеологию для исправления дефектов идентичности и преобразования «испорченной» природы нации. Если отбросить устаревшие и мифические представления о расе, духе и т. д., то можно сказать, что его много идей и следующий призыв остается актуальным и сегодня: чтобы противостоять современным вызовам, преодолеть трудности и сохранить национальную идентичность, необходимо объединиться вокруг национальной цели и опираться на национальные ценности.

Ключевые слова: Айк Асатрян, Гарегин Нжде, цехакронутюн, таронаканутюн, философия, националистическая идеология, этнические общности, национальный дух, национальная идентичность

SEYRAN ZAKARYAN – *Philosophical Foundations of Hayk Asatryan's Ideology*. – Hayk Asatryan (1900-1956), a philosopher, national figure, co-founder of the Taronakanutyun (Taron Nationalist) movement, is one of the prominent figures of Armenian philosophy of the first half of the XX century, who excellently uses philosophy to justify his nationalist ideology. The article presents the following theoretical-philosophical propositions underlying Asatryan's ideology: a) he considers the vital questions of the past, present and future of the Armenian nation through the lens of the socio-biological direction of the primordialist theory of ethnology, b) he also biologizes

the cognitive process, viewing it as biological a phenomenon, a mechanism of adaptation to the environment, and sees the truth as a tool for success, c) Opposing the scientific understanding of the historical development of ethnic communities, he creates a mythical image of the tribe, in which the tribe is considered "the cause and basis of the existence of the nation and the people", moreover, in the formation of the tribal nature, he absolutizes not only hereditary data, but also the role of the natural environment, d) accepts the existence of a mythical "national spirit", which is inherited through "blood", and the will of God works in the spirit, and in general, "the influence of the spirit gives meaning to every phenomenon of nature and the events of history", e) analyzing the Armenian historical process and Armenian identity based on historical-philosophical material, making deep conclusions, he considers subjective factors to be the main cause of Armenian failures and tragedies. In order to get out of the created difficult situation, it is proposed to use the nationalist ideology to correct the defects of the identity and transform the "depraved" nature of the nation. If we ignore the outdated and mythical notions about race, spirit, etc., we can say that his lots of ideas and following exhortation remains relevant today: in order to face modern challenges, overcome difficulties and preserve national identity, it is necessary to unite around a national goal and rely on national values.

Key words: *Hayk Asatryan, Garegin Nzhdeh, Tseghakronutyun, Taronakanutyun, philosophy, nationalist ideology, ethnic communities, national spirit, national identity*

ԵՐԿԻՆՈՍԱՅՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՑԹԻ ՈՒՂԻՆԵՐԸ)

ՀՈՒՓՄԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ * 

Մ. Մ. Բախտինի երկխոսայնության տեսությունը, սկսած 1960-ականների վերջից՝ նրա ստեղծագործությունների թարգմանությունից ու հրատարակումից հետո, զգալի ազդեցություն ունեցավ արևմտյան գրականագիտության հիմնական ուղղությունների, դրանց տեսության ու մեթոդաբանության զարգացման վրա:

«Միջտեքստայնություն» եզրույթն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել 1967 թ. հետկառուցվածքաբանության տեսաբան Յու. Կրիստևայի կողմից՝ «Բախտին, բառ, երկխոսություն և վեպ» հոդվածում: Նա, հիմքում ունենալով Մ. Բախտինի երկխոսայնության տեսությունը, իր ուսումնասիրություններում փոխակերպում ու զարգացնում է միջտեքստային կապերի գաղափարը: Արդի իրականության համատեքստում դիտարկելով Մ. Բախտինի «բազմաձայնության» տեսությունը՝ Յու. Կրիստևան տեսականորեն հիմնավորում է, որ յուրաքանչյուր տեքստ երկխոսության մեջ է մեկ այլ տեքստի կամ տեքստերի հետ, որոնցից յուրաքանչյուրն ունակ է դառնալու նոր ձևավորվող տեքստերի համար սկզբնաղբյուրային հիմք:

Թեև Յու. Կրիստևայի առաջադրած միջտեքստայնության տեսությունն ակներևաբար հարուստ լիցքեր է ստանում Մ. Բախտինի երկխոսայնության տեսությունից, այնուամենայնիվ միջտեքստայնությունը երկխոսայնության տեսության հայելային անդրադարձը չէ, այլ հետկառուցվածքաբանական հայեցակարգի համատեքստում դրա վերաիմաստավորումն ու փոխակերպումը:

Հոդվածում տեսության համեմատական տիպաբանական քննության են ենթարկվում Մ. Բախտինի երկխոսայնության ու Յու. Կրիստևայի միջտեքստայնության տեսությունները: Բախտինի հայեցակարգը համեմատվում է հետկառուցվածքաբանական ուղղվածություն ունեցող արևմտյան գրական քննադատության միջտեքստայնության տեսության հետ:

Բանալի բառեր – կառուցվածքաբանություն, հետկառուցվածքաբանություն, հետմոդեռնիզմ, երկխոսայնություն, միջտեքստայնություն, տեքստ, մշակույթ, խոսույթ, ֆենոտեքստ, զենոտեքստ, նշանակում

* **Հոփսիմե Զաքարյան** - բանասիրական գիտությունների թեկնածու

Рипсиме Закарян - кандидат филологических наук

Hripsime Zakaryan - Candidate of Philological Sciences

Էլ. փոստ՝ zakaryan_hripsime@mail.ru. ORCID: <https://orcid.org/0009-0004-2158-644X>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 06.03.2024

Գրախոսվել է՝ 11.03.2024

Հաստատվել է՝ 12.07.2024

© The Author(s) 2024

1960-1970-ական թթ., երբ կառուցվածքաբանությունն (ստրուկտուրալիզմը) իր տեղն աստիճանաբար զիջում էր հետկառուցվածքաբանությանը (պոստստրուկտուրալիզմին), ձևավորվում են գաղափարական և գեղարվեստական որոշակի նպաստակներ հետապնդող խնդիրներ, որոնք ձևի նվաճումներով, աշխարհայեցողությամբ ու գաղափարաբանությամբ կամա թե ակամա «ձեռնոց են նետում» 18-րդ դարի վերջից ձևավորված գեղարվեստական հայեցակարգերին: Այն (հետկառուցվածքաբանությունը) նախ մնաց, այսպես ասած, «լուսանցքային» գոտում, հետո աստիճանաբար զբաղեցրեց առաջնային տեղ: Մ. Բախտինի առաջադրած գրական դաշտում զարգացող գործնաբանության (պրագմատիկայի) ու խոսույթի (դիսկուրսի) վերլուծության բազմաթիվ ու բազմազան հոսանքները, ընդօրինակման-յուրացման տեսությունը, միջտեքստայնությունը, սոցիալական քննադատությունը և այլն աստիճանաբար պարտադրեցին գեղարվեստական իրողություններն ընկալել նոր եզրերից, նոր դիտանկյունից, որտեղ տեքստն ու սեփական համատեքստն անբաժանելիորեն միաձուլվում են¹:

Ֆրանսիացի փիլիսոփա, «տեքստային պրակտիկայի», հետկառուցվածքաբանության տեսաբան Յու. Կրիստևայի ուսումնասիրությունները հենվում են բախտինյան հանցակարգերի վրա՝ կենտրոնանալով նախ և առաջ իմացաբանական համատեքստի վրա: Գրական ասպարեզում միջտեքստայնության ի հայտ գալը համընկնում է կետարյա տիրապետությունից հետո կառուցվածքաբանության անկմանը: Արդյունքում միջտեքստայնությունը ձևավորվում է տեսական ու մեթոդաբանական մի շարք հանգուցային հարցերը բուռն թափով լուծելու ու զարգացնելու միտումով ուղեկցվող ուրույն պայմաններում: Այն հաստատվում է հետկառուցվածքաբանության ծաղկումով, որն իր փորձով ու գեղագիտական ծրագրերով ծանրանում էր մասնավորապես մի հանգուցային հարցի՝ «տեքստի ներուժի վրա՝ իր ներփակությամբ, տեքստային յուրահատուկ համակարգով, տրամաբանությամբ: Միջտեքստայնությունը դառնում է եթե ոչ աշխարհի, ապա տեքստային հորիզոնները բացելու-բացահայտելու-լայնացնելու միջոց, որի օգնությամբ տեքստային փակ սահմանները փոխարինվում են տեքստային բաց սահմաններով, այլ կերպ ասած՝ կառուցվածքաբանությունից անցում է կատարվում նոր համակարգի, որն ընդունված է անվանել հետկառուցվածքաբանություն²:

«Միջտեքստայնություն» եզրույթն առաջին անգամ կիրառել է 1967 թ. Յու. Կրիստևան՝ «Critique» հեղինակավոր պարբերականում տպագրված «Բախտին, բառ, երկխոսություն և վեպ» («Bakhtine, le mot, le dialogue et le roman») հոդվածում: Այդտեղ նա, հիմքում ունենալով ֆրանսիացի ընթերցողների համար դեռևս անծանոթ բախտինյան երկխոսայնության տեսությունը, մասնա-

¹ Տե՛ս **Maingueneau D.** Le discours littéraire. Paratopie et scène d'énonciation. Paris: Armand Colin, 2013, էջ 5:

² Հմմտ. **Compagnon A.** Le Démon de la théorie. Littérature et sens commun. Paris: Seuil, 1998, էջ 128:

վորապես՝ «Բովանդակության, նյութի և ձևի խնդիրը բանավոր գեղարվեստական ստեղծագործության մեջ» (1924 թ.) աշխատությունում առաջադրված հիմնադրույթները (որում հեղինակն առաջադրում է այն դրույթը, որ մշակույթն ու պատմությունը ներթափանցում են տեքստային տարածություն, իսկ տեքստը՝ մշակութային պատմություն), սեփական գեղագիտական տեսության տիրույթում շրջանցում է Մ. Բախտինի երկխոսայնության (դիալոգիզմի) տեսության սկզբունքին հատուկ՝ գեղարվեստական տեքստի ձևավորման ու իրացման խնդրում իր մասնակցությունն ունեցող ավանդական «հեղինակ-հասցեատեր» կաղապարին բնորոշ սուբյեկտիվ գործոնները: Նա (Յու. Կրիստևան) բախտինյան «միջսուբյեկտիվություն» եզրույթը փոխարինում է նոր եզրույթով՝ գործածելով «միջտեքստայնություն» եզրույթը՝ ընդհանուր տեքստային խոսույթի շրջանակներում հաղորդակցական փոխազդեցությունը դիտարկելով որպես գրական ստեղծագործությունների ծագման ու բովանդակության հարափոխության հիմնական գործոն: Համաձայն Յու. Կրիստևայի՝ տեքստի «երկվալենտությունը» երկակի ընթերցման հնարավորության համար հիմքեր է կառուցում: Դա մեկնաբանվում է այսպես. ««Նպատակային թեմա» հորիզոնական առանցքն ու «տեքստ-համատեքստ» ուղղահայաց առանցքը համընկնում են՝ բացահայտելով մի կարևոր իրողություն. յուրաքանչյուր բառ (տեքստ) բառերի (տեքստերի) խաչմերուկ է, որտեղ կարելի է կարդալ առնվազն մեկ այլ տեքստ: <...> Հորիզոնական առանցքը (առարկա-ստացող) և ուղղահայաց առանցքը (տեքստ-համատեքստ) ի վերջո համընկնում են: <...> Ինքնին լինելով ոչ այլ ինչ, քան խոսույթ, ստացողն ընդգրկված է նաև գրքի խոսույթային ունիվերսումի անսահմանության մեջ»³: Այսպիսով, հորիզոնական առանցքը նրա կողմից սահմանվում է երկխոսություն, ուղղահայացը՝ երկվալենտություն, ինչը ենթադրում է, որ պատմությունը (իրականությունը) ամփոփված է տեքստում, իսկ տեքստը՝ պատմության մեջ: «Համաձայն Բախտինի՝ այս երկու առանցքները, որոնք նա անվանում է համապատասխանաբար երկխոսություն և երկիմաստություն, հստակորեն չեն տարբերակվում»⁴, և ահա այս կետում «միջսուբյեկտիվություն հասկացությունը փոխարինվում է միջտեքստայնությամբ»⁵: «Բախտինյան «երկխոսությունը» տեքստում ի հայտ է բերում ոչ միայն սուբյեկտիվային, այլև հաղորդակցական, ավելի ճիշտ՝ միջտեքստային սկիզբ. այդ երկխոսության լույսի ներքո «անհատականություն-տեքստի սուբյեկտ» հասկացությունը սկսում է աղոտանալ, որպեսզի իր տեղը զիջի այլ երևույթի՝ տեքստի երկվալենտությանը»⁶: Ելնելով բախտինյան այն գաղափարներից, որ սեփական ստեղծագործության արարման ճանապարհին ստեղծագործողը

³ Kristeva J. Sémiotiké, recherche pour une sémanalyse, coll. «Tel Quel», Paris, Éditions du seuil, 1969, p. 145.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 148:

երկխոսական հարաբերություն է ծավալում անցյալի ու ներկայի գեղարվեստական ստեղծագործությունների հետ՝ Յու. Կրիստևան ձևակերպում է «միջտեքստայնություն» հասկացակարգը, որը ձևավորվել է Մ. Բախտինի միկրոերկխոսության անանձնականացման ճանապարհով: Մակրոերկխոսությունն ու միջտեքստայնությունն ընդհանրանում են, քանի որ երկուսն էլ փոխազդեցություն կամ գործընթաց են, որոնցից յուրաքանչյուրի համար ձևավորվում է համապատասխան կադապարը, և միմյանցից տարբերվում են նրանով, որ երկուսն էլ ձևավորվել են մեթոդաբանական երկու տարբեր մոտեցումների հիմքերի վրա: Մ. Բախտինի մոտեցումը ֆենոմենոլոգիական է⁷, այս հիմքով Բախտինյան մակրոերկխոսությունը միջսուբյեկտիվային է և սահմանվում է որպես հաղորդակցական գործառույթ՝ «ձայների» փոխհարաբերակցություն: Իսկ Յու. Կրիստևան հաղորդակցական կադապարը կառուցում է նշանաբանական (սեմիոլոգիական) հիմքերի վրա, քանի որ, իբրև Բախտինյան երկխոսության այլընտրանք, նա առաջադրում է միջտեքստային երկխոսության գաղափարը, որը դրսևորվում է խոսքային միավորների իմաստային երկարժեքության (ամբիվալենտության) մեջ: Այսպիսով, խարսխվելով Մ. Բախտինի երկխոսության, կառնավալի գաղափարի վրա՝ Յու. Կրիստևան կերտում է անկախ կառուցվածք, որն արտացոլում է հետմոդեռնիստական գեղագիտության հասկացակարգային իմաստավորման մոտեցման կերպը: Նա ձգտում է թափանցել տեքստի առանձնահատկությունների մեջ և բացահայտել նրա ներքին օրինաչափությունները: Մ. Բախտինի առաջադրած հայեցակարգերը, համաձայն որոնց՝ ստեղծագործողը փոխհարաբերակցում է ոչ միայն իրեն շրջապատող իրականության, այլև անցյալ ու ներկա, հեռավոր ու մերձավոր նախորդների գրական ստեղծագործությունների հետ, Յու. Կրիստևան տեսական իր վերլուծություններում առանձին հարցերի ճշտամբ ու մանրամասնումով վերաիմաստավորում է՝ տեղափոխվելով այլ՝ գիտական, սոցիալապատմական և մշակութային համատեքստ, իսկ առավել կոնկրետ՝ այն իմաստավորվում է գեղարվեստական տեքստի տիրույթում՝ տեքստերի միջև ծավալված երկխոսությամբ: Տեքստը դիտարկվում է որպես պատմական-մշակութային հարացույց կամ «անդրնշանագիտական («transsémiotique») համընդհանրություն»⁸, անսկիզբ ու անեզերք նշան, որը ներառում է գոյություն ունեցող մշակութային համակարգերի ծածկագրերն ու իմաստային ամենատարբեր

⁷ Ст'ю Калыгин А. И. Философия поступка как феноменология необязательного действия // Язык, сознание, коммуникация. М., изд. МАКС Пресс, 2004, вып. 26, էջ 98-111: Ст'ю ևսև՝ Березовская И. П. Экзистенциально-феноменологическая интерпретация Другого в философии М. Бахтина и Ж.-П. Сартра // Византия, Европа, Россия: социальные практики и взаимосвязь духовных традиций. Архив конференции. Выпуск 1, материалы международной научной конференции (Санкт-Петербург, 1-2 октября 2021 г.) / Отв. ред. О. Н. Ноговицын: ФНИСЦ РАН: РХГА. СПб., изд. РХГА, 2021, էջ 189-194:

⁸ Стилистический энциклопедический словарь русского языка / под ред. М. Н. Кожинной. 2-е изд., испр. и доп. М., изд. «Флинта; Наука», с. 217.

կառույցները՝ համաժամանակյա ու տարժամանակյա ընդգրկումներով: Երկու հեղինակների մոտեցումները, այսպիսով, կարելի է ասել, հիմնվում են երկու հնարավոր հայեցակարգերի տարբերման վրա՝ գործառական (հաղորդակցական) և շրջափոխական (էվոլյուցիոն): Շրջափոխական հայեցակետը տեքստի քննությունն է նրա ձևավորման ու հետագա ձևափոխության առումով: Ստացվում է, որ զարգացնելով և ավելի խորացնելով Մ. Բախտինի գեղագիտական հայացքների ու գաղափարների առանձնահատկությունները, բախտինյան հայեցակարգերը տարբեր կերպ են մեկնաբանվում նշյալ համատեքստում և ձեռք բերում սկզբունքորեն այլ որակ: Հարկ է նշել նաև, որ հեղինակը, իհարկե, հիմնովին չի շրջանցել բախտինյան մոտեցումներն ու ձևակերպումները. ըստ անհրաժեշտության հենվել է դրանց վրա: Նրա հայեցակարգի էությունն այն գաղափարն է, որ «յուրաքանչյուր տեքստ կառուցվում է որպես քաղվածքների խճանկար, յուրաքանչյուր տեքստ ինչ-որ՝ այլ տեքստի յուրացումն ու փոխակերպումն է: Դրան զուգահեռ՝ միջսուբյեկտիվություն հասկացության տեղում ընկած է միջտեքստայնություն հասկացությունը, և պարզվում է, որ բանաստեղծական լեզուն ենթական է առնվազն կրկնակի ընթերցման»⁹: Տեքստի իմաստը կապված է ընթերցողի հիշողության հետ, սերտորեն աղերսված է առկա այն ազդակի կամ այսպես կոչված «իմաստային դաշտի» հետ, որը տվյալ պահին իր վրա է կենտրոնացնում ընթերցողի ուշադրությունը: Այսպես, եթե որևէ մեկի ուշադրությանն ենք ներկայացնում մի կոնկրետ թեմա կամ իմաստային հյուսվածք, կոնկրետ ընթերցողի հիշողության մեջ իսկույններ կհայտնվեն այն հասկացությունները, որոնք անմիջականորեն կապված են հենց այդ թեմայի հետ: Տեքստը դառնում է հիշողության մեջ ամփոփվածի էությունը, նախօրոք իմացածի ճանաչումն ու վերարտադրումը: Այսպիսով, տեքստի թե՛ գործառական, թե՛ շրջափոխական քննությունը նաև ֆենոմենոլոգիական քննություն է, որի պարագայում փորձ է արվում տեքստն ընկալել անհատական փորձի ուղիներով:

Հեղինակի՝ տարբեր մշակութային տեքստերի ընդհանուր ակնարկներին վերաբերող աշխատությունների մեջ առանցքային մի գաղափար է զարգանում բոլոր տեքստերը միավորող ու նրանց համար ընդհանուր ինչ-որ օրենքների առկայության մասին, որը հենված է գլխավորապես տարորակ տեքստային համակառույցների համեմատության, հիմքերի նույնացման, տարաբնույթ տեքստային տարրերի փոխներթափանցման գաղափարի վրա և այլն: Տեքստը պարունակում է մշակութային, գրական, սոցիալ-պատմական, հոգեբանական ու փիլիսոփայական ենթաշերտեր, որոնք երբեմն դրսևորվում են որպես ծածկազրված նշաններ:

Եթե յուրաքանչյուր տեքստ գտնվում է մեկ այլ տեքստի կամ մեկ այլ խոսույ-

⁹ Kristeva J. Sémiotiké, recherche pour une sémanalyse, 1969, p. 145.

թի հանգույցում, միջտեքստայնությունը դառնում է, ինչպես պնդում է Ռ. Բարտը, «յուրաքանչյուր տեքստի նախապայման, ինչպիսին էլ որ այն լինի»¹⁰: Գեոտեքստի հասկացակարգն իր ներհատուկ իմաստավորման շարժունակ գործընթացով ու մշակութային կամ տեքստային ոլորտների հետ յուրահատուկ փոխհարաբերակցությամբ տրամաբանորեն առաջ է մղում գրական խոսքն ընկալել «ոչ թե որպես ելման կետ (կայուն իմաստ), այլ տեքստային մակերեսների հատման կետ, տարաբնույթ տեքստերի երկխոսություն՝ գրողի, հասցեատիրոջ (կամ կերպարի), ներկայի կամ նախորդ մշակութային համատեքստի հետ»¹¹, ինչը նաև ենթադրում է, որ տեքստի իմաստը երկփեղկված կամ «երկորակ» բնույթի է: Եվ այստեղ «առաջադիր խնդիրը» ոչ թե կայուն իմաստներ որոնելն է, այլ այն սահմանները, որտեղ տեքստը «երկորակ» բնույթ է ստանում, սահմանակցում-փոխհարաբերակցում այլ տեքստերի հետ: Մոտեցման այս կերպը թույլ է տալիս «դուրս գալ» տեքստային սահմաններից դեպի վերտեքստային տարածություն և կամրջել այդ տարաբնույթ սահմանները, տեքստային ոլորտները մոտեցնել արտատեքստային տարածությանը, որը, ըստ էության, նույնպես տեքստ է: Ստացվում է, որ Յու. Կրիստևայի դիտարկումներում տեքստը սահմանվում է որպես յուրօրինակ տարածություն, որն իր մեջ խտացնում է համընդհանրական իմաստային հյուսվածքն ու մշակութային ծածկագրերը, հետևապես՝ գեղարվեստական տեքստը դիտարկվում է համընդհանրական գեղարվեստական խոսույթի համատեքստում: Այդ փոխհարաբերակցության արդյունքում տեքստը ձեռք է բերում բազմաչափություն՝ մի կողմից կապվելով համընդհանուր գեղարվեստական ավանդույթի հետ, մյուս կողմից՝ թույլ տալով դրսևորել սեփական անսահման իմաստային հնարավորությունները: Համաձայն Յու. Կրիստևայի՝ տեքստային մակերեսների այդօրինակ հատուղին է ձևավորում միջտեքստային տարածություն, իսկ այն ձևավորող գեղարվեստական ստեղծագործություններն ու տեքստային այլևայլ տարրեր փոխհարաբերակցականորեն ներսուզվում են իմաստափոխանակման շղթայական-շարունակական ընթացքի մեջ. «Երկխոսությունը յուրաքանչյուր բառի (ստեղծագործության՝ Հ. Չ.) մեջ բառ է նշմարում բառի մասին»¹² (այս պարագայում «բառ» հասկացությունը հարկ է ընկալել ոչ թե ուղղակիորեն, այլ փոխաբերական իմաստով): Արդյունքում գեղարվեստական տեքստը մշտապես ձեռք է բերում հավելյալ ենթատեքստեր՝ լայնացնելով սեփական իմաստային սահմանները, շարժական կապեր է ձևավորում միջտեքստային տարածության այլ տարրերի հետ: Յու. Կրիստևան հենվում է լեզվի ու մտածողության մարքսիստական հայտնի դրույթի վրա¹³, որից էլնելով

¹⁰ Barthes R. Texte (théorie de), Encyclopedia Universalis, Paris, Encyclopedia Universalis, 1973, vol. 22, p. 461.

¹¹ Kristeva J. Sémiotiké, recherche pour une sémanalyse, 1969, p. 144.

¹² Kristeva J. «Préface» in, Bakhtine, Mikhaïl, La poétique de Dostoïevski, Paris, Seuil, 1970, p. 14.

¹³ Առավել մանրամասն տե՛ս Бахтин М. М. Марксизм и философия языка. М., изд. «Лабиринт», 1993, 192 էջ:

նա երկխոսայնությունը դիտարկում է ոչ թե պարզապես գաղափարները իրականացնելու, մտքերն ու զգացմունքները դրսևորելու հնարավոր միջոց, այլ բացառապես տեքստի տարածության մեջ բառի դրսևորման միջոց. «<...> բառի կարգավիճակը՝ որպես տեքստի նվազագույն միավոր, դառնում է կառուցվածքային մոդելը մշակութային (պատմական) միջավայրի հետ կապող միջնորդ, [քանի որ] հենց կարգավիճակ հասկացությամբ բառը զետեղվում է տարածության մեջ. այն՝ որպես ամբիվալենտ տարրերի հավաքակազմ, գործում է երեք չափումներում (սուբյեկտ-ընդունող-համատեքստ)»¹⁴ այսկերպ միաժամանակ տեքստի տարածության մեջ առանձնացնելով երեք չափում: Այլ կերպ ասած՝ տեքստային ակունքների և տեքստերի փոխազդեցության բնորոշ գծերն ապահովում են տարբեր ժողովուրդների մշակութային տարրերի փոխադարձ կապը, դրանց միաժամանակյա համագոյակցությունը յուրաքանչյուր կոնկրետ ստեղծագործության տարածության մեջ և մասնակցությունը վերջինիս բովանդակության, իմաստային ծավալումների սահմանման խնդրում: Տեքստերի մերձավորության «պատճառը» նախ և առաջ հարկ է փնտրել մշակութային մերձավորության մեջ: Յուրաքանչյուր գեղարվեստական ստեղծագործություն ձևավորվում է ընդհանրական միջտեքստային տարածության ներազդեցությամբ: Կենտրոնացած լինելով այս տարածության մեջ՝ յուրաքանչյուր գրական ստեղծագործություն, ներհատուկորեն փոխկապակցվելով տարասեռ տեքստերի հետ, համաձուլվում է այս կամ այն տեքստային համատեքստում: Յուրաքանչյուր տեքստ բազմաթիվ այլ տեքստերից հյուսված նոր հյուսվածք է: Խաչավորման այդ գործընթացում ձևավորվում են նոր տեքստեր, հին տեքստերը դրսևորվում են նոր բովանդակությամբ կամ իրենց իմաստային այլ գործածումով: Արմատներով դրանք կապված են նախօրինակին, թեև արդիական բովանդակությամբ այլևս նոր են: Այդ կերպ այն ձևավորում է մշտափոփոխ/շարժական կապեր՝ դրսևորելով սեփական իմաստային ներուժը, ընդհանուր իմաստն ու հնարավոր մեկնությունների հավանականությունը. «Բանաստեղծական տեքստը երկնվում է մեկ այլ տեքստի միաժամանակյա հաստատման ու ժխտման բարդ շարժման մեջ»¹⁵, և տեքստից տեքստ, տարբերակից տարբերակ ձևավորվում է նոր որակ:

Տեքստը տարբեր նշանային համակարգերի շարժունակ ծավալումներով բարդ համատեքստային կառույց դիտարկելու հիմքով Յու. Կրիստևան դրանում տարբերակում է երկու փոխհարաբերակցված շերտ՝ «ֆենոտեքստ» («phénotexte») և «գենոտեքստ» («génotexte»)՝¹⁶: Ֆենոտեքստը ամբողջական տեքստն է՝ բազմաթիվ նշանային համակարգերից հյուսված կառուցվածք: Այն

¹⁴ **Kristeva J.**, Sémiotiké, recherche pour une sémanalyse, 1969, p. 144.

¹⁵ **Kristeva J.** La Révolution du langage poétique, Éditions du Seuil, coll. « Tel quel », Paris. 1974, p. 343.

¹⁶ «Գենոտեքստ» և «ֆենոտեքստ» երևույթների մասին առավել մանրամասն տե՛ս **Kristeva J.** La Révolution du langage poétique, 1974, էջ 60:

ընդհանրական ու ամփոփ տեղեկատվություն է, որի նպատակը որոշ տեղեկությունների հաղորդակցական փոխանցումն է: Մրան նախորդում է լեզվական հյուսվածքի ու սուբյեկտի ձևավորման արարումը, որի հիմքերի վրա իրականանում է նշանակումը (սիգնիֆիկացիան)¹⁷: Յու. Կրիստևան այս ընթացակարգային գործընթացը սահմանում է որպես «գենոտեքստ»: Գենոտեքստը ո՛չ կառուցվածք է, ո՛չ էլ կառուցվածքաստեղծ գործոն. այն անսահման նշանակիչ է («significant»), այն նշանակիչների բազմազանության ամբողջականությունն է, որոնք գտնվում են մշտատև սկզբնավորման ու փոխազդեցության գործընթացում՝ իրականացնելով իմաստային կառույցների շարունակական փոխհաղորդակցումն ու փոխակերպումը: Այն իր բնույթով չունի կայուն կառուցվածք և առանձնանում է անսահման իմաստային բազմակարծությամբ՝ ձեռք բերելով կարգավորվածություն ու ներփակություն միայն ֆենոտեքստի երկրորդական մակարդակում¹⁸:

Համաձայն Յու. Կրիստևայի հայեցակարգերի՝ ցանկացած գեղարվեստական դիտարկվող տեքստ, ցանկացած վեպ «նշանագիտական պրակտիկա է, որում հնարավոր է ընթերցել բազմաթիվ հիմնավորումների համադրված հետքեր»¹⁹: Տեքստը և՛ միասնական է, և՛ բազմակազմ, և որպես այդպիսին՝ այն կարող է լինել տարատեսակ մեջբերումների, հղումների ու արտացոլումների համակեցության տարածություն, որոնք ներթափանցում են ստեղծագործության կառուցվածք ուղղակի կամ անուղղակի մեջբերումների, ռեմինիսցենցիաների կամ այլ միջոցներով²⁰: Թեև ֆենոտեքստի արտակա մակարդակում յուրաքանչյուր տեքստ ձգտում է ամբողջականության ու ներփակության մերձավոր ու անկախ ընդհանրություններով հանդերձ, այնուամենայնիվ որոշակի մակարդակում պահպանում է այն մեջբերությունների ներակա իմաստները, որոնց հիմքերի վրա կառուցվում ու զարգանում է: Այսինքն՝ ցանկացած տեքստ դրսևորվում է իբրև իմաստաբովանդակային տարաբնույթ շերտերի յուրահատուկ ամբողջություն՝ այլ տեքստերի համանման դրսևորումների հետ ունենալով ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Այսօրինակ մոտեցումը հիմք է տալիս տեքստն ընկալել որպես տարաբնույթ աղբյուրներից հունավորվող երկբնույթ համակարգ, որն իր մեջ՝ նոր ձևավորվող տեքստային տիրույթում, խտացնում, ընդօրինակում ու փոխակերպում է հարստացուցիչ աղբյուրներից ներառած տարրեր, որը ոչ միայն իմաստային կապ է հաստատում տարբեր տարրերի միջև, այլև հատկապես այս կամ այն միավորների միջոցով է, որ իր մեջ խտացնելով իրեն նախորդող տեքստահատվածի հիմնական իմաստը՝ ամբողջացնում է իմաստային մթնոլորտը:

¹⁷ Տե՛ս **Kristeva J.**, Sémiotiké, recherche pour une sémanalyse, 1969, էջ 223:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 223-225:

¹⁹ Նույն տեղում, էջ 53:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 194:

Այսպիսով, յուրաքանչյուր ստեղծագործություն, գեղարվեստական, պատմական ու սոցիալական արդիական համապատկերում իր մեջ համասեռում է տարաբնույթ բազմոբակ տեքստային տարրեր:

Մ. Բախտինի «ես»-ի և «դու»-ի «հաղորդակցումը» («ես» և «մյուս») Յու. Կրիստևայի հայեցակարգերում փոխակերպվում է, օժտվում միանգամայն այլ ֆրոյդական մեկնությամբ: Ըստ Ջ. Ֆրոյդի՝ հոգեկան յուրաքանչյուր գործողություն հարկ է դիտարկել որպես գիտակցական, անգիտակցական ու նախագիտակցական շերտերի գիտակցված փոխմիասնություն²¹ (այդ եռամիասնությունից ձևավորվում է «ես»-իդեալը (ich-ideal)): Այսպես, Մ. Բախտինի պսիխոլոգիզմն իր տեղը զիջում է ֆրոյդյան հոգեվերլուծությանը, որի համատեքստում Յու. Կրիստևայի հայեցակարգերում երկփեղկված գիտակցությունը ձևակերպվում է ոչ թե որպես երկու գիտակցությունների երկխոսություն, պայքար գիտակցության և ենթագիտակցության միջև, այլ հակառակը՝ տեքստ-գիտակցություն-ենթագիտակցություն հարաբերության արծարծման տեսանկյունից այն գաղափարն է առաջադրվում, որ տեքստի իմաստն անխուսափելիորեն ձևավորվում է անգիտակցականի և գիտակցականի, անընկալելիի ու ընկալելիի փոխհարաբերակցված միահյուսումից: Թերևս նաև այս հիմքով է հատկանշվում Յու. Կրիստևայի և Մ. Բախտինի հայեցակարգերի էական տարբերությունը: Յու. Կրիստևայի ընդգծեց գիտակցությունը ենթագիտակցականից տարբերակելու անհրաժեշտությունը՝ համարելով, որ ենթագիտակցությունը զրկում է անհատին ազատությունից՝ նրան անճանապարհ ու անդուռ իրականության ուղիներով տանելով, այսպես ասած, «կազմաքանդման»²²: Մ. Բախտինի և սեփական հայեցակարգերի տարբերության մասին խոսում է նաև ինքը՝ Յու. Կրիստևայի՝ Բախտինյան տեսության էությունը հասկանալուն ու բացատրելուն միտված դիտարկումներում դատողություններ անելով Ֆ. Դոստոևսկու վեպերի բազմաձայնության հնարավոր այլ մեկնաբանության մասին: Մեծապես ազդվելով Ջ. Ֆրոյդի և ֆրանսիացի հոգեվերլուծաբան ու փիլիսոփա Ժ. Լականի (հարկ է նշել, որ վերջինիս հայեցակարգերի հիմքում ևս Մ. Բախտինի հայեցակարգն է) գաղափարներից՝ Յու. Կրիստևայի «երկփեղկված սուբյեկտ» (ichspaltung) հասկացությունը ձևակերպում է որպես գիտակցության մեջ երկու ոլորտի առկայություն՝ «խորհրդանշական» ու «նշանագիտական», և սրանով պայմանականորեն ընդլայնում առհասարակ տեքստի ընկալման սահմանները: Այս սահմանագծումը կարծես թե համոզիչ է, քանի որ Յու. Կրիստևայի կենտրոնանում է ոչ թե սուբյեկտի, այլ տեքստի վրա: Նա

²¹ «Անգիտակցականը» հոդվածում Ջ. Ֆրոյդը մասնավորապես նշում է, որ «նախագիտակցականի մեծ մասը առաջանում է անգիտակցականից»: Առավել մանրամասն տե՛ս **Freud S.** The unconscious, (1915). SE 14, էջ 191:

²² Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Kristeva J.** «Psychanalyse et littérature» <http://www.kristeva.fr/psychanalyse-et-liberte.html> (մուտք՝ 06.12.2023):

«Երկփեղկված սուբյեկտի» գաղափարը փոխանցում է տեքստի ներքին կառուցվածքի վերլուծության տարածություն, որի մեջ, համաձայն նրա հայեցակարգի, համագոյակցում են երկու տեսակի տեքստեր կամ երկու տարածություններ՝ խորհրդանշական ու նշանագիտական, որոնք արտացոլում են սուբյեկտի երկփեղկված գիտակցությունը, տրամաբանականի և անտրամաբանականի, գիտակցության և ենթագիտակցության հավերժական պայքարը: Նշանագիտականի ու խորհրդանշականի կապն ուղիղ համեմատական է «գենոտեքստ» և «ֆենոտեքստ» հասկացությունների փոխհարաբերակցությունների միջև կապին: Ինչպես արդեն նշվել է, Յու. Կրիստևան տեքստի ներքին կառուցվածքում առանձնացնում է այսպես կոչված ֆենոտեքստը, որի գործառույթը բովանդակություն, մակերեսային նշանակություն փոխանցելն է, և գենոտեքստը, որը սահմանվում է որպես լեզվի անպարփակ տարածության խորքային հիմք, տեքստային մակարդակ ինքնին «անտես» ու «անձև», որում չկա սուբյեկտիվություն կամ հաղորդակցական մտադրություն. այն լեզվական կառույցից դուրս ծավալվող երևույթ է, որի գործառույթը թաքնված իմաստային դաշտը փոխանցելն է, որում արտացոլվում է ինքնապարփակ ենթագիտակցականի ոլորտը, բանականության ներըմբռնողական հարաշարժությամբ կերտված ստեղծագործական հրաշագործությունը, որն արտահայտվում է այնպիսի հնչութաբանական միջոցներով, ինչպիսիք են ռիթմը, առձայնությունը, եղանակը և այլն: Եվ սրանով հեղինակը, կարելի է ենթադրել, մոտենում է նախագաղափարների աշխարհին: «Երկփեղկված սուբյեկտ» հասկացության այդօրինակ ձևակերպումը և ենթագիտակցականի ոլորտն արտացոլող գենոտեքստի առանձնացումը նույնպես մեծապես պայմանավորված են 20-րդ դարի գրական ուղղություններով, առաջին հերթին՝ մոդեռնիզմի գեղարվեստական գեղագիտությամբ: Արդի գրականության առանցքային խնդիրն է պատկերել ոչ թե այն, ինչ արտաքին կեղևում է, այլ այն, ինչը ենթագիտակցության, հոգեկանի խորքային շերտերում է:

«Միջտեքստայնությունը մեկ կամ մի քանի նշանային համակարգերի տրանսպոզիցիա է մյուսի մեջ, դա ոչ այնքան փոխառության, ֆիլիացիայի կամ ընդօրինակման խնդիր է, որքան հիմնականում անգիտակցական հետքեր, որոնք դժվար է մեկուսացնել»²³: Յու. Կրիստևան այս պարագայում «Բանաստեղծական լեզվի հեղափոխություններ» ուսումնասիրության մեջ «միջտեքստայնություն» եզրույթը փոխարինում է «տրանսպոզիցիա» եզրույթով, ինչը թարգմանաբար նշանակում է «փոխանցում, տեղափոխում»: Յու. Կրիստևայի մեկնությամբ՝ «տրանսպոզիցիայի» էությունն այն է, որ նախկինում գոյություն ունեցող տեքստերը՝ իբրև որոշակի համակարգային միասնություն, սկզբունքորեն տարբեր միտումներով գործածելու, նոր բովանդակությամբ օժտելու

²³ Kristeva J. La Révolution du langage poétique, 1974, p. 60.

նպատակով տեղափոխվում են մշակութային ու պատմական նոր համատեքստ, որն այժմեական է դառնում իրեն բնորոշ ավանդույթի տիրույթում և նոր մշակութային տարածության մեջ՝ նոր տեքստային կառույցում, երբեմն այնպես համաձուլվում նոր տեքստային համակառույցին, որ համեմատական ուսումնասիրության միջոցով է միայն հնարավոր դառնում նրանց մշակութային անհատական որակների բացահայտումը: Նոր եզրույթ ներմուծելով՝ հեղինակն ընդգծում է տրանսպոզիցիայի և միջտեքստային փոխազդեցության այնպիսի ձևերի միջև տարբերությունը, ինչպիսիք են ընդօրինակումը, ավանդույթի շարունակությունը և այլն, որոնք, նրա կարծիքով, 20-րդ դարում արդեն սպառել են իրենց արդիականությունն ու փոխարինվել նոր՝ միջտեքստային փոխհարաբերակցության ձևերով:

Միջտեքստայնության տեսության ձևավորմանն ու զարգացմանը նվիրված ուսումնասիրությունների շարքում իրենց անփոխարինելի տեղն ունեն հետկառուցվածքաբանության մեկ այլ ներկայացուցչի՝ Ռ. Բարտի աշխատությունները, համաձայն որոնց՝ տեքստը կառուցված է մշակութային տարբեր շերտերում ձևավորված տարաբնույթ տեքստերից, որոնց միջև ձևավորվում է երկխոսական կապ, միջտեքստային բարդ փոխհարաբերակցություն:

Ըստ Յու. Կրիստևայի՝ բախտինյան դիտարկումներում Ֆ. Դոստոևսկու տեքստը դրսևորվում է որպես տարբեր տրամասույթային «աստիճանակարգերի» բախման դաշտ: Այդօրինակ տեքստը «կառույց» չի ձևավորում. այն զրկված է սուբյեկտի ու իմաստի միասնություններից: Այդպիսի բազմաձայնային տեքստը չունի սեփական գաղափարաբանությունը, քանզի չունի սեփական գաղափարաբանական սուբյեկտը²⁴, յուրաքանչյուր տեքստում «կարելի է կարդալ առնվազն մեկ այլ տեքստ»²⁵: Ներտեքստային իրականությունը մշտապես ենթարկված է անհատական փորձին, անհատական ընկալմանն ու գնահատմանը: Գեղարվեստական տեքստի համակառույցը ծածկագրվում է հեղինակային մտադրություններով և ընթերցման գործընթացում անցնում է ընթերցողական անհատական տեսակետի, հայացքների միջով: Ինչպես արդեն նշել ենք, Մ. Բախտինի առանցքային տեսական նվաճումներին ֆրանսալեզու ընթերցողն առաջին անգամ ծանոթացել է 1967 թ. Յու. Կրիստևայի վերոնշյալ ուսումնասիրության միջոցով: Այն հեղինակը նախ ներկայացնում է կարդացած գիտական գեկուցմամբ (որին ներկա էր նաև իր ուսուցիչ Ռ. Բարտը), այնուհետև հրատարակում է «Critique» պարբերականում: Իսկ 1968 թ. Ռ. Բարտը գրում է իր հանրահայտ «Հեղինակի մահը» հոդվածը, որը դառնում է ֆրանսիական հետկառուցվածքաբանության հիմնաքարային բաղադրիչներից մեկը: Ռ. Բարտի աշխարհայացքի և դրանով պայմանավորված տեսական հիմ-

²⁴ Հմն. **Kristeva J.** «Une Poétique ruinée», dans la Poétique de Dostoïevski de Mikhaïl Bakhtine, trad Isabelle Kohtcheff, Pans, Seuil, 1970, էջ 18:

²⁵ **Kristeva J.**, Sémiotiké, recherche pour une sémanalyse, 1969, p. 145.

նավորումների առանձնահատկությունները հստակեցնելու համար անհրաժեշտ է ամենից առաջ կենտրոնանալ Մ. Բախտինի երկխոսայնության/պոլիֆոնիզմի տեսության խորքային իմաստի վրա: Երկխոսայնության հայեցակարգում բազմաթիվ առանցքային նշանակություն ունեցող հարցադրումների հետ Մ. Բախտինն առանձնացնում է նաև տեքստի ընկալման խնդիրը: Տեքստը կառուցվում է «արտատեքստային համատեքստի» համապատկերում, հետևապես դրա բովանդակության ու նշանակության յուրացման դեպքում հնարավոր է իմաստաբովանդակային նրբերանգների մասնակի փոխակերպում: Համաձայն Մ. Բախտինի՝ տեքստը պարունակում է անթիվ այլ տեքստային տարածություններ, որոնց հետ որոշակի իմաստային հանգույցներում կարող է փոխկապակցվել-փոխհարաբերակցվել: Նրա բնորոշմամբ՝ «տեքստն ինքնին իր չէ, և հետևաբար երկրորդ գիտակցությունը՝ ընկալողի գիտակցությունը, ոչ մի կերպ չի կարող բացառվել կամ չեզոքացվել»²⁶, ինչը նշանակում է, որ տեքստի «համահեղինակ» է նաև հեղինակի հետ երկխոսական հարաբերություն ծավալած ընթերցողը, և քանի որ գեղարվեստական տեքստում ներդրված տեղեկատվությունն իր բնույթով համադրական/զուգահեռական է, ընթերցողն իր ընկալողական, դատողական, զգայական զուգորդություններով «ի գորու» է շրջանցելու այնտեղ ամփոփված ծածկագրերն ու դրանց հարաբերակցությունները և սեփական հայեցողությամբ ձևավորելու տեքստի իմաստաբովանդակային համակառույցը, ընդարձակելու իմաստային ծավալի շրջանակները: Հաշվի առնելով տեքստային իմաստի շարժունակ բնույթը՝ այն ենթակա է փոփոխությունների՝ պայմանավորված ընթերցողի ընկալումներով, ընթերցման ժամանակով և այլն: Այսպիսով, այս պարագայում առաջին հերթին հարկ է նկատի առնել այն հանգամանքը, որ ինչպես Յու. Կրիստոսյայի դեպքում, բարության մեթոդի ուղղորդիչ սկզբունքը ևս բախտինյան հայեցակարգն է: Միջտեքստայնության հասկացակարգը, որ նախ և առաջ իմաստավորվեց կառուցվածքաբանության ու հետկառուցվածքաբանության տեսաբանների՝ Ռ. Բարտի, Ժ. Լականի, Մ. Ֆուկոյի, Ժ. Դերրիդայի ուսումնասիրություններում, որոնցում ողջ մշակութային տարածությունն ընկալվում է որպես համընդհանրական «միջատեքստ», ինչը յուրաքանչյուր նոր ձևավորվող տեքստի համար դառնում է նախատեքստ, հունավորվում է Մ. Բախտինի հայեցակարգերից:

РИПСИМЕ ЗАКАРЯН – От диалогизма к теории интертекстуальности (пути современной европейской культуры). – Теория диалогизма М. М. Бахтина, начиная с конца 1960-х годов, после перевода и публикации его произведений, оказала значительное влияние на основные направления западного литературоведения, их теорию и методологическое развитие.

Несмотря на современные теоретические обоснования использования термина «интертекстуальность», феномен интертекстуальности-идея взаимосвязи разных текстов, до сих пор

²⁶ Бахтин М. М. Эстетика словесного творчества. М., изд. «Искусство», 1979, с. 285.

является давно сложившейся и вполне обоснованной реальностью. Однако термин «интертекстуальность» впервые был введен в оборот в 1967 году. Термин был впервые введен теоретиком постструктурализма Кристевой в статье ««Бахтин, слово, диалог и роман». Опираясь на теорию диалогизма М. Бахтина, она в своих исследованиях трансформирует и развивает идею интертекстуальных связей. Рассматривая теорию «полифонизма» М. Бахтина в контексте современной действительности, Ю. Кристева предполагает, что каждый текст находится в диалоге с другим текстом или текстами, каждый из которых способен стать исходный материал для новых текстов.

Хотя теория интертекстуальности, предложенная Ю. Кристевой, очевидно, получает богатые заряды от теории диалогизма М. Бахтина, тем не менее, интертекстуальность является не «зеркальным отражением» теории диалогизма, а ее реинтерпретацией и трансформацией в контексте постструктуралистской концепции.

В статье представлено сравнительно-типологическое рассмотрение теории диалогизма М. Бахтина и теории интертекстуальности Ю. Кристевой. Бахтинская концепция сравнивается с теорией интертекстуальности в западном литературоведении постструктуралистской ориентации.

Ключевые слова: *структурализм, постструктурализм, постмодернизм, диалогизм, интертекстуальность, текст, культура, дискурс, фенотекст, генотекст, сигнификация*

HRIPSIME ZAKARYAN – From Dialogism to the Theory of Intertextuality (the path of modern European culture). – The theory of dialogism by M. M. Bakhtin, starting from the late 1960s, after the translation and publication of his works, had a significant influence on the main directions of Western literary criticism, their theory and methodological development.


Despite modern theoretical justifications for the use of the term “intertextuality,” the phenomenon of intertextuality—the idea of the interconnection of different texts—is still a long-established and well-founded reality. However, the term “intertextuality” was first coined in 1967. The term was first introduced by the poststructuralist theorist Kristeva in the article “Bakhtin, the word, dialogue and the novel”. Based on M. Bakhtin’s theory of dialogism, in her research she transforms and develops the idea of intertextual connections. Considering the theory of “polyphonism” by M. Bakhtin in the context of modern reality, Yu. Kristeva suggests that each text is in dialogue with another text or texts, each of which is capable of becoming the source material for new texts.

Although the theory of intertextuality proposed by Y. Kristeva obviously receives rich charges from M. Bakhtin’s theory of dialogism, nevertheless, intertextuality is not a “mirror reflection” of the theory of dialogism, but its reinterpretation and transformation in the context of a poststructuralist concept.

The article presents a comparative typological examination of M. Bakhtin’s theory of dialogism and J. Kristeva’s theory of intertextuality. Bakhtin’s concept is compared with the theory of intertextuality in Western literary criticism of a poststructuralist orientation.

Key words: *structuralism, poststructuralism, postmodernism, dialogism, intertextuality, text, culture, discourse, phenotext, genotext, signification*

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԻՉ

ՆԵԼԼԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

Մարդկության հոգևոր մշակույթի զարգացման գործընթացում փիլիսոփայության նշանակալի դերը դրսևորվում է ոչ միայն գիտելիքների սովոր ծավալով, այլև ընդհանրապես գիտելիքի ձևավորման, հիմնավորման և արժեքման իր մեթոդաբանությամբ: Որքան էլ մեր միտքը սկզբունքորեն հակված է օբյեկտիվության և ճշգրտության, կենդանի կյանքը, առավել ևս մարդկային իրողությունները եղել ու մնում են տարամետ մեկնաբանությունների, հաճախ համարժեք, բայց և միմյանց հակասող պատկերացումների ծիրում: Եվ դրա «մեղավորը» ոչ թե մեր մտքի թերացումն է կամ անհետևողականությունը, այլ ցանկացած երևույթի հնարավոր նկարագրությունների անսպառելիությունը՝ աշխարհի համընդհանուր իրողությունների հետ համադրություններում: Այսօրինակ հանգամանքը դժվար, եթե չասենք՝ անհնարին է դարձնում հատկապես մարդկային կյանքի երևույթների, դեպքերի ու իրադարձությունների ունիվերսալ սահմանումն ու գնահատականը: Ճշմարտության և մոլորության, բարու և չարի, օգտակարի և վնասակարի, արդարի և անարդարի, ընդունելիի և մերժելիի, լավի և վատի... զատման, տարանջատման միանշանակ չափանիշի հարցը այսօր էլ փիլիսոփայական բուռն բանավեճերի օրակարգում է: Այն խնդիր է հասարակական կյանքի, սոցիալական գործընթացների կազմակերպման պրակտիկայում:

Նման խնդիրների համակարգման և մեկնության առաքելությամբ դեռևս անտիկ մշակույթում կյանքի կոչվեց հռետորիկան՝ իբրև բանավեճի, փաստարկման եղանակով ընդհանուր եզրահանգման, համոզման հասնելու պրակտիկ մեթոդաբանություն, աշխարհայացքային հարցերին փիլիսոփայական հիմնավորմամբ լուծումներ առաջադրելու հնարավորություն: Այդ առաջադրումներում իրենց արդիականությամբ մշտապես առանձնանում են ստատուսների և լոկուսների մասին տեսությունները, որոնք այսօր էլ երբեմն մշակված, բայց ավելի հաճախ տարերայնորեն գործառվում են մասնավորապես դատական և քաղաքական գործընթացներում,

* **Նելլի Ալավերդյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ

Нелли Алавердян – кандидат философских наук, доцент кафедры истории и теории философии и логики ЕГУ

Nelli Alaverdyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor of YSU Chair of History, Theory and Logic of Philosophy

Էլ. փոստ՝ nalaverdyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0005-8313-5000>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 04.06.2024

Գրախոսվել է՝ 06.06.2024

Հաստատվել է՝ 12.07.2024

© The Author(s) 2024

կենդանի ելույթներում, քննարկումներում ու դերատներում: Երդվյալ ատենակալներով դատարանների ներդրման մեր հեռանկարում և քաղաքական դաշտի դեմոկրատացման մեր իրականությունում ավելի քան կարևոր են թվում ընդհանրապես հռետորիկայի և հողվածում ներկայացված տեսությունների լուսաբանումն ու իմացությունը այդ ոլորտներում գործունեություն իրականացնողների համար:

Բանալի բառեր - *պատմական հիշողություն, անցյալի ժառանգություն, հիշողության քաղաքականություն, մարտահրավեր, արժեքային-նորմատիվ համակարգեր, տեղեկատվական պատճառականություն, տեխնոլոգիական դետերմինիզմ*

Մարդկային գործունեության յուրաքանչյուր բնագավառում մեծապես կարևորվում է անցյալի ժառանգության պահպանումը: Պատմական հիշողության անհրաժեշտությունը պահանջում է ճանաչել ոչ միայն անցյալի անցյալականությունը, այլև ներկայությունը: Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ սոցիալականի տարբերակման գրեթե բոլոր փուլերում պատմական հիշողությունը ոչ միայն նպաստում է հասարակական կյանքի օրգանականության ու շարունակականության պահպանմանը, այլև, որպես մշակութորեն համակարգված արժեքային համակարգ, կատարում է էթնոպաշտպանական գործառույթ: Մի բան ակնհայտ է՝ ներկան պետք է վերափոխի անցյալն այնքանով, որքանով վերջինս կառավարում է իրեն:

Սոցիալական համակարգի կառուցարկման տեսանկյունից պատմական հիշողությունը ապահովում է ներկայի ու անցյալի կապը և հնարավորություն է տալիս կողմնորոշվելու անցյալից ներկա և ներկայից անցյալ «ուղևորվելու» դժվարին գործընթացում: Այս փոխադարձ անցումների շնորհիվ մարդը դառնում է իր պատմական կեցությունը որոշող սուբյեկտ: Բնչպես իրավացիորեն նկատում է Պ. Ռեիկորը, առանց անցյալին ձուլվելու հնարավոր չէ ձևակերպել ու բնութագրել ներկան. «Եթե ժամանակը անցնող բոլորների հաջորդական շարք է, ապա հիշողությունը առկայության տեսանկյունն է»¹:

Եթե նախորդ այսպես կոչված «դանդաղ ժամանակների» հասարակություններում պատմական հիշողությունը դիտարկվում էր որպես անցյալի վերարտադրման միջոց, ապա դինամիկ հետարդիականության համատեքստում պահանջվում է հիշողության արժեհամակարգի արդիականացում, որպեսզի այն ներառվի սոցիալական համակարգի զարգացման ծրագրի մեջ և դառնա «ապագայի» բաղադրատարր: Նման մոտեցման պատճառներից մեկն այն է, որ ժամանակակից աշխարհում պատմական հիշողության սուբյեկտը (ազգը, հասարակությունն ու անհատը) ասես օտարվել է «այստեղ» ու «հիմա» ընթացող կյանքի ընթացքից, զրկվել սոցիալական համակարգը ամբողջացնող այն պատումներից, որոնք առկա են պատմական հիշողության մեջ, ուստի ստիպված է ամբողջովին ապավինել կյանքի կազմակերպման մշակույթի անձնական

¹ Рикер П. Память, история, забвение, М., «Наука», 2004, с. 214.

տարբերակին: Հանգամանք, որ նրան դարձնում է հասարակական ամբողջից օտարված «մանկուրտ» գործակալ: Մինչդեռ հիշողությունը ոչ միայն անցյալը իրական արժեք դարձնող, այլև սոցիալական իրադարձությունները առաջ մղող, երբեմն նաև ուղղորդող գործոն է: Բայց պատմական հիշողությունը իմաստավորելու և ներառելու համար «այստեղ և հիմա» ընթացող կյանքի կազմակերպման գործընթացներում, այն կրողը պետք է ունենա որոշակի հոգևոր պատրաստվածություն, որպեսզի կարողանա պատմական անդրադարձ կատարել և վերհուշի օգնությամբ անցյալը կապել ժամանակակից սոցիոմշակութային գործընթացներին²:

Պատմական հիշողության խնդիրը քննարկվում է տարբեր գիտակարգերում՝ փիլիսոփայություն, հոգեբանություն, ազգագրություն, պատմություն, սոցիոլոգիա, որոնցից յուրաքանչյուրը փորձում է բացահայտել, թե ներկա իրադարձությունների ընկալումը ինչ չափով է կախված անցյալի իրադարձությունների իմացությունից և գնահատումից: Եվ դա պատահական չէ, որովհետև պատմական հիշողությունը սոցիալական գիտակցության հզոր կարգավորիչներից է, որում ներառված են ինչպես սոցիոմշակութային, այնպես էլ պատմական, տնտեսական, գաղափարախոսական բազմաթիվ գործոններ:

Պատմական հիշողությունը դիտարկվում է որպես ազգային՝ պետական և հանրային անվտանգության ապահովման առանցքային բաղադրիչ, որի հիմքի վրա կարող են համախմբվել անհատները, հասարակություններն ու ազգերը՝ արժևորելով հոգևորը և հրաժարվելով բացարձակ նյութապաշտությունից: Հենց ազգն է, որ ստեղծում է ընդհանուր տարածականություն, որտեղ հստակ ընդգծվում է ազգային ինքնությունը: Պատմական հիշողությունը անհրաժեշտ նախադրյալ և գործիք է ազգային համախմբման համար: Մակայն ազգային ինքնությունը և այդ ինքնության շրջանակներում կայուն զարգացումն ու համախմբումը պետք է հիմնված լինեն պատմական հիշողության վրա, ինչը հնարավորություն է տալիս քաղաքակրթելու ազգային կապիտալը, լեգիտիմացնելու քաղաքական և տնտեսական իշխանությունները:

Պատմական հիշողության հուսալիության հարցերը կապված են պատմական գիտելիքների և ճանաչողության առանձնահատկությունների հետ: «Ժամանակը ոչ միայն բացահայտում է նոր կապեր, իրադարձությունների փոխհարաբերություններ, այլև հաճախ ստիպում է մեզ այլ կերպ իմաստավորել անցյալի որոշ փաստեր: Բացի այդ, փոխվում են մեր ընդհանուր պատկերացումները մարդու և հասարակության մասին: Եվ այս նոր գաղափարների լույսի ներքո մենք սկսում ենք անցյալում տեսնել այն, ինչ նախկինում չէինք տեսնել»³: Այս առումով կարևոր ու արդիական է պատմագիտական տեղեկատվության ճիշտ

² Տե՛ս **Фукуяма Ф.** Великий разрыв, М., 2004, էջ 12-15:

³ **Лекторский В. А.** Знания о прошлом в современной культуре. Вопросы философии, № 8, 2011, с. 4-5.

մտտեցումը: Խոսքը անցյալի հետքերը ուսումնասիրելու, անցյալի փաստերի իսկությունը հաստատելու, անցյալը հասկանալու և բացատրելու մեթոդների, պատմական փաստեր ընտրելու չափանիշների մասին է: Անցյալի իրադարձությունների միջև կապի պարզաբանումը առնչվում է պատմական գիտելիքների մեկ այլ յուրահատուկ հատկանիշի: Այսպես, պատմաբաններն անընդհատ վերագնահատում են անցյալը և վերաշարադրում պատմությունը: Փաստորեն, «սուբյեկտիվություն ընդդեմ օբյեկտիվության» կանոնական անվանումը մի կողմից ընդգծում է պատմաբանի անձնական ներգրավվածությունը գիտելիքի գործընթացում, մյուս կողմից՝ սոցիալական, իսկ ավելի ստույգ ինստիտուցիոնալ ներգրավվածությունը: Պատմաբանի երկակի ներգրավվածությունը պատմական գիտելիքի միջսուբյեկտիվության մեկնաբանման պարզ հետևանք է, որը մարդկանց շրջանում զուգակցվում է երկու տեսակի այլության միջոցով՝ որպես օտար և որպես անցյալ էակ, որին Դիլթայը ավելացնում է. «լրացուցիչ այլություններ՝ օտարի այլությունը, անցյալի այլությունը, արձանագրության այլությունը, որոնք համակցված են և սահմանում են պատմական գիտելիքների դերը հոգևոր գիտությունների ոլորտում»⁴:

«Պատմական հիշողությունը» հաճախ բնութագրվում է որպես «անցյալի հիշողություն», «կոլեկտիվ հիշողություն», «սոցիալական հիշողություն», «մշակութային հիշողություն», «հիշողության քաղաքականություն» և այլն: Չի անտեսվում նաև այն, որ մարդկանց և հասարակությունների պատմական հիշողության ձևավորմանը նպաստում են ոչ միայն պատմաբանների գրառումները, այլև, արվեստի տարբեր ճյուղերի տեսա- և ձայնասարտադրանքները: Պատմական հիշողության ձևավորմանը նպաստում են թանգարանային ցուցադրությունները, ճարտարապետական կառույցները, փողոցների ու բնակավայրերի անվանումները:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը «հիշողության քաղաքականության» իրականացման նոր հնարավորություններ է ստեղծում: Ջարմանալի չէ, որ «պատմական հիշողությունը» հետազոտության և գործնական գործունեության ոլորտ է, որտեղ «հանդիպում են» վերաբերմունքը, մտածելակերպը և նորմատիվ համակարգերը, որոնց միջև հարաբերությունները բնութագրվում են ոչ միայն որպես «փոխլրացում» և «փոխհարստացում», այլ նաև որպես «մերժում», «բախում» և «պայքար»: «Պատմական հիշողության» վերաբերյալ դիսկուրսը սովորաբար ենթադրում է, որ արհեստավարժ պատմական հանրությունը պետք է արտադրի ոչ միայն գիտական գիտելիք, այլև անցյալի մասին զանգվածային սոցիալական գաղափարներ: Պատմաբանն այդպիսով ներգրավվում է ««ուժի և հիշողության», «ուժի և մոռացության» դաշինքների ստեղծման մեջ և ենթարկվում է իր ժամանա-

⁴ Рикер П., նշվ. աշխ., էջ 469:

կակից քաղաքական իրականությունը «պատմականացնելու» ևս մեկ գայթակհության»⁵: Որոշ գիտնականներ պատմական հիշողության ուսումնասիրությունը կապում են սոցիալական և հումանիտար գիտելիքների կառուցվածքի, բովանդակության և մեթոդաբանության խորը փոփոխությունների հետ և անհրաժեշտ են համարում հաշվի առնել «գիտնականների նոր հայեցակարգային զարգացումները փիլիսոփայության, հոգեբանության, բանասիրության և մշակութային ուսումնասիրությունների ոլորտում»⁶:

Հաշվի առնելով ժամանակակից աշխարհում տեղեկատվական պատերազմները՝ անհրաժեշտություն է առաջանում պատմական հիշողությունը կարևորելու նաև փիլիսոփայության տեսանկյունից:

1. Պատմական հիշողությունը որպես դժվար դիտարկելի գործընթաց

Պատմական հիշողության փիլիսոփայությունը կարելի է դիտարկել որպես հիշողության կրող, իրեն ճանաչող և վերջինիս բովանդակությունը գնահատող մարդու կենսափիլիսոփայության մաս: Ժամանակակից ֆրանսիացի վերլուծաբան Մ. Հալբվակսը պատմական հիշողությունը որպես կենսափիլիսոփայություն հետևյալ կերպ է ներկայացնում. «Ես հիշում եմ Ռեյմար, քանի որ այնտեղ ապրել եմ մի ամբողջ տարի: Հիշում եմ նաև Ժաննա դը Արկին, որը Ռեյմարում էր: Այնտեղ թագադրվեց Չարլզ VII-ը, քանի որ ես կարդացել եմ այդ մասին: Ժաննա դը Արկը այնքան հաճախ է ներկայացվել թատրոնում, ֆիլմերում և այլն, որ ես իսկապես դժվարանում եմ նրան պատկերացնել Ռեյմարում: Միևնույն ժամանակ, ես լավ գիտեմ, որ չէի կարող ականատես լինել բուն իրադարձությանը. ես այստեղ սահմանափակված եմ կարդացած կամ լսած բառերով, դարերի ընթացքում վերարտադրված նշաններով, որոնք այն ամենն են, ինչը ինձ է հասնում անցյալից: Նույնը վերաբերում է մեզ հայտնի բոլոր պատմական իրադարձություններին»⁷: Հասկանալի է, որ Մ. Հալբվակսը փաստորեն պատմական հիշողություն է համարում միայն բավականին հեռավոր անցյալի հիշողությունը: Ժամանակակից հետազոտողները, սակայն, պատմական հիշողությունը չեն սահմանափակում միայն վաղ անցյալին առնչվող իրադարձություններով՝ գտնելով, որ համեմատաբար ոչ վաղ անցյալի «կենդանի հիշողությունը» ևս պատմական հիշողության մաս է: Անհատի պատմական հիշողության բովանդակությունը չի կարող ձևավորվել միայն այն տվյալներից և գիտելիքներից, որոնք համապատասխանում են պատմության մեջ ընդունված հավաստիության չափանիշներին: Հասարակության պատմական հիշողության վրա էական ազդեցություն ունեն գրականության ու արվեստի ներկայացուցիչները, որոնց ազ-

⁵ Мони́н М. Апология культуры. Три прочтения «Времени и рассказа» Поля Рикера. М. Прогресс-Традиция, 2019, с. 154.

⁶ Мальшкнн Е. Две метафоры памяти. СПб., 2011, с. 37.

⁷ Хальбвакс М. Социальные рамки памяти. М., «Новое издательство», 2007, с. 86.

դեցությունն արժեքային-նորմատիվ համակարգերի գործունեության վրա ավելի հզոր է, քան գիտնական պատմաբանի մասնագիտական վարքագիծը: Օրինակ՝ գրականության ու արվեստի գործերն ակնհայտորեն անհնար են առանց գեղարվեստական հորինվածքի: Կամ մասնագիտական էթիկայի կանոնները լրագրողին պարտավորեցնում են տարածել և մեկնաբանել միայն հավաստի տեղեկատվությունը, ոչ մի դեպքում չխեղաթյուրել փաստերը և առավել ևս՝ չտարբերել փաստերը կարծիքներից ու ենթադրություններից: Սակայն, երբ խոսքը վերաբերում է քաղաքացիական դիրքորոշման և անձնական նախասիրությունների արտահայտմանը, լրագրողը շատ ավելի մեծ ազատություն ունի, քան գիտնականը: Եվ, վերջապես, «պատմաբանների կողմից պատմության էության գոյաբանության ակնկալիքը կարող է բացահայտվել որպես «մետաֆիզիկայի» ներխուժում հումանիտար գիտությունների դաշտ, որոնք ցանկանում են վերացնել անցյալի ցանկացած կասկած: Պատմական գոյության հերմենևտիկայի հետ կապված խնդիրները ճիշտ ժամանակին հաշվի չառնելը անհասկանալի է թողնում պատմական գիտելիքների իմացաբանությունը: Մեթոդի մասին բանավեճից բացի, ավելի խորը պատճառը պատմության մեջ անցյալը ներկայացնելու խնդրի բուն բնույթն է»⁸:

Եթե դիտարկում ենք պետական քաղաքականությունը, ապա ակնհայտորեն տեսնում ենք, որ այդ քաղաքականության վրա ազդում են արժեքային-նորմատիվ տարբեր համակարգեր, որոնց փոխազդեցությունը բավականին բարդ է: Զարմանալի չէ, որ պետության կողմից «անցյալի քաղաքականության օգտագործումը» իրականացվում է ոչ թե մեկ, այլ բազմաթիվ (առնվազն մի քանի) «հիշողության քաղաքականության» շրջանակներում: Այս հանգամանքը քաղաքագետների կողմից երբեմն ընկալվում է որպես թերություն, ինչը վկայում է քաղաքական ռազմավարությունների մշակման և իրականացման համար անհրաժեշտ պատշաճ մտքի և համահունչության բացակայության մասին: Այնուամենայնիվ, ժամանակակից աշխարհում «հիշողության քաղաքականության» ոլորտում հայեցակարգային պարզության և հետևողականության իդեալների իրականացման օրինակները հազիվ թե արժանի լինեն ընդօրինակման: Պատմական հիշողության հարցերով զբաղվող գիտնականները գտնվում են գիտական ընդհանուր գիտելիքներին բնորոշ իդեալների և նորմերի շրջանակում: Գիտությունը, գեներացնելով և ուսումնասիրելով վերացական առարկաները, ձգտում է մշակել հստակ սահմանումներ, ստեղծել և նպատակաուղղված կիրառել խիստ մեթոդներ և համակարգված կազմակերպել ձեռք բերված գիտելիքները: Այնուամենայնիվ, պատմական հիշողության՝ որպես գիտության վերացական օբյեկտի բնութագրերը նույնպես էապես կախված են պատմական հիշողության հատկություններից՝ որպես սոցիալական բազմաթիվ գործոնների ազդեցության օբյեկտ:

⁸ Рикер П., նշվ. աշխ., էջ 398:

Պատմական հիշողության «համընդունելի» սահմանման բացակայությունը բացատրվում է նրանով, որ այն ուսումնասիրվում է տարբեր գիտությունների շրջանակներում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր մոտեցումները, որոնք ընդգծում են այդ բարդ երևույթի որոշակի կողմերը: Որպես կանոն՝ սոցիոլոգներն ու քաղաքագետները իրենց աշխատություններում «անցյալի քաղաքական օգտագործումն» ինքնին ընկալում են որպես անխուսափելի և անհրաժեշտ: Քննարկման առարկան այս երևույթի ուսումնասիրության մոտեցումներն են, «քաղաքական օգտագործման» առկա պրակտիկայի գնահատման չափանիշները, ինքնին գնահատականները, ինչպես նաև կանխատեսումները, ակնկալիքներն ու առաջարկությունները: Որոշ հեղինակներ անցյալի քաղաքականությունն օգտագործելը համարում են «խորհրդանշական քաղաքականության» մաս, այսինքն՝ գործունեություն, որը ներառում է սոցիալական իրականության մեկնաբանման որոշակի մեթոդների արտադրություն և նպատակային կիրառում⁹: Միննույն ժամանակ, խորհրդանշական քաղաքականությունը դիտվում է ոչ միայն որպես հանրային քաղաքականության մի մաս, որը որոշակի առումներով փոխարինում է «իրական» քաղաքականությանը, այլ նաև որպես իրականության կառուցման միջոց՝ ազդելով «իրական» քաղաքականության վրա: Բնութագրելով «անցյալի օգտագործման» հետ կապված խնդիրները՝ կարելի է ասել, որ «ազգային համերաշխության մոբիլիզացման համար անցյալի խորհրդանիշների, իրադարձությունների և գործիչների ցանկը մնում է ծայրահեղ սակավ», «անցյալի հեղինակությամբ ժամանակակից պետական քաղաքականության լեգիտիմացման հիմնական «բեռը» ընկնում է խորհրդային ժառանգության վրա»¹⁰: Զանգվածային գիտակցության եմպիրիկ ուսումնասիրությունները թույլ են տալիս սոցիոլոգներին եզրակացնել, որ «վերջին տարիներին Հայրենական մեծ պատերազմի մասին պատկերացումները թողնում են «կենդանի հիշողություն», տեղափոխվում հեռավոր անցյալի հիշողություն, որոնցում շատ քիչ մասնակիցներ և ականատեսներ են մնացել: Միննույն ժամանակ, նման իրադարձությունների և դրանց մասնակիցների մասին տեղեկատվությունը և գիտելիքները ակտիվանում են մարդկանց հիշողության մեջ հիմնականում կառավարության քաղաքականության շնորհիվ, որոնք, ի թիվս այլ բաների, նպաստում են պատմական հիշողության «մասնավորեցմանը»»¹¹: Պատմական հիշողության «հատուկ» տարբերակների (ընտանիք, սոցիալական փոքր խումբ, տեղական համայնք) տարածմանը նպաստում են ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները,

⁹ Տե՛ս Гидденс Э. Устроение общества: очерк теории структуризации. М.: «Академический Проект», 2005, с. 206.

¹⁰ Молодкина Л. К вопросу о феноменологии памяти, «Вестник Московского университета», 2007, № 6, с. 95.

¹¹ Серапионова Е. Социальные последствия войн и конфликтов XX века: историческая память. М., СПб: «Хестор-история», 2014, с. 286.

առանց որոնց հնարավոր չէ արխիվներից և այլ աղբյուրներից տեղեկատվության հասանելիությունը:

Պատմական հիշողությունը կարևորվում է որպես «հասարակության արժեքային ներուժը» մոբիլիզացնելու գործոն՝ մեր ժամանակի մարտահրավերներին արձագանքելու համար: Վերոնշյալը, սակայն, չի նվազեցնում հասարակության «հիշողության գերին» լինելու վտանգը այն վիճակում, որը դժվարացնում է այսօրվա (և վաղվա) մարտահրավերների համարժեք գնահատումը, սեփական հնարավորությունների ըմբռնումը և որպես հետևանք՝ ռազմավարական և մարտավարական ճիշտ որոշումներ կայացնելը:

2. «Տեղեկատվական պատճառականություն» և հիշողության քաղաքականություն

Փիլիսոփայությունը հնագույն ժամանակներից ձգտել է կապել մարդկության անցյալը, ներկան և ապագան, որոշել պատմության շարժիչ ուժերը և ուրվագծել ապագան: Ընդունված է տարբերակել պատմության փիլիսոփայության երկու հիմնական տեսակ¹²: Առաջինը պատմաբանությունն է կամ պատմության «էական» փիլիսոփայությունը, որը խնդիր է դնում բացահայտելու մարդկության պատմության ընդհանուր օրինաչափություններն ու իմաստները: Երկրորդ տեսակը պատմության քննադատական փիլիսոփայությունն է, որը հետազոտում է ոչ թե պատմությունը որպես իրականություն, այլ պատմական գիտությունը, և որը հետաքրքրված է այս գիտության գիտելիքներով, տրամաբանությամբ և պատմական հետազոտության մեթոդներով: Այստեղ տեղին է խոսել պատմական գիտության փիլիսոփայական խնդիրների մասին¹³: Սակայն պետք է նշել, որ միշտ չէ, որ հնարավոր է հստակ սահման գծել պատմության փիլիսոփայության այս տեսակների միջև: Պատմական գործընթացի փիլիսոփայական ըմբռնումը պահանջում է ուշադրություն պատմական գիտության մոտեցումներին և մեթոդներին, իսկ պատմական գիտության փիլիսոփայական խնդիրների ուսումնասիրությունը անհնար է պատմական գործընթացի մասին գիտելիքների բացակայության պայմաններում: Քանի որ պատմության փիլիսոփայությունը ներառում է նաև պատմական գիտակցության ուսումնասիրությունը բառի լայն իմաստով, պատմական հիշողության փիլիսոփայությունը պատմության փիլիսոփայության մի մասն է:

Հաշվի առնելով ժամանակակից հասարակության առջև ծառայած մարտահրավերները՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել «տեխնոլոգիական դետերմինիզմ» կոչվող մոտեցման հնարավորություններին (Ռ. Արոն, Կ. Բոլդվինգ, Դ. Գելբերթ, Դ. Բեյ): Պետք է նշել, որ «տեխնոլոգիական դետերմինիզմը» լայն իմաստով ոչ թե սոցիալական օրգանիզմը համապարփակ նկարագրելու

¹² St' u **Филатов В.** История, историософия и методология истории. Наука глазами гуманитария, «Прогресс», М., 2005, էջ 484-498:

¹³ St' u **Блюхер Ф., Федор Н.** Философские проблемы исторических исследований. М., 2004, էջ 49:

միջոց է, այլ հետազոտության ընդհանուր ուղղություն, որն ընդգծում է տեխնոլոգիական (և գիտատեխնիկական) համակարգերի և կառույցների կարևորությունը՝ որպես հասարակության որակական հատկանիշները ցուցանող միջոց: Նման համակարգերի և կառույցների դերը սովորաբար համարժեքորեն չի գնահատվում այլ մոտեցումներում, որոնք կենտրոնանում են սեփականության հարաբերությունների, կառավարման ձևերի կամ մշակութային ավանդույթների վրա: Հանգամանքները, որոնք դրդում են պետությանը և հասարակությանը գիտակցելու «տեխնոլոգիական բեկման» անհրաժեշտությունը որպես երկրի գոյատևման պայման, կարող են «շրջադարձային» լինել պատմական գիտակցության և պատմական հիշողության համար: Խոսքը գիտական և տեխնոլոգիական «ճեղքումներ» իրականացնելու և հասարակության ստեղծագործական ներուժը կենսական խնդիրներ լուծելու համար մոբիլիզացնելու պատմական փորձի մասին է:

Տեխնոլոգիական շրջադարձը ներառում է գիտության և տեխնիկայի՝ պատմության մեջ հետազոտողների կուտակած գիտելիքների շարժը երկարաժամկետ հիշողությունից դեպի հասարակության ակտիվ հիշողություն: Խոսքը գաղափարների, հայտնագործությունների և գյուտերի պատմության, տեխնիկական սարքերի և տեխնոլոգիական համալիրների պատմության և այն մարդկանց պատմությունների մասին է, որոնք այս ամենը հնարավոր դարձրին: «Ակտիվ հիշողությունը նման տեղեկություններով լցնելը կնպաստի հասարակության (իսկ ապագայում՝ մարդկության) համերաշխության՝ հետին պլան մղելով երկար ժամանակ մշակված «վնասվածքի» և «պատմական մեղքի» հիշողությունը»¹⁴:

Այն պնդումը, որ առաջընթացի գաղափարը հնացել է, սովորական է դարձել քաղաքական փիլիսոփայության մեջ: Սակայն ոչ ոք չի պարտավորվում լրջորեն հերքել գիտության և տեխնիկայի ոլորտում առաջընթացը, ներառյալ մարդկային հարմարավետ կյանքի համար անհրաժեշտ խոշոր տեխնոլոգիական համալիրների ստեղծումը: Տեխնոլոգիաների լայն տեսլականը, որն ընդգրկում է կառավարչական, մանկավարժական և հետազոտական տեխնոլոգիաները, թույլ է տալիս օրակարգում դնել այս ոլորտում ընդհանրապես առաջընթացի և մասնավորապես սոցիալական առաջընթացի փոխհարաբերության հարցը: Տեխնոլոգիական առաջընթացի գաղափարը կարող է համախմբող դառնալ ժամանակակից հասարակության համար՝ համախմբելով մարդկանց ստեղծագործական կարողությունները:

Անցյալից դասեր քաղելը ներառում է ինչպես դրական, այնպես էլ բացասական փորձի ըմբռնում՝ հաշվի առնելով տնտեսական, իրավական, բարոյական գործոնների դերը: Տրամաբանական է ենթադրել, որ պատմական հիշողությունը ուղղված է ոչ թե կառավարման կառույցների (և դեկավար անձանց)

¹⁴ Буллер А., Линченко А. Простить? О феномене исторического непростания и бескомпромиссной памяти, «Вопросы философии», № 11, с. 59.

կարճաժամկետ խնդիրների լուծմանը, այլ երկարաժամկետ ազգային ռազմավարությանը: Պատմական հիշողությունը քաղաքական վարքը, գիտակցությունը ձևավորող կարևոր բաղկացուցիչներից է: Այն իր էներգիայով (շատ դեպքերում՝ չգիտակցված) հասարակությանը (ազգին, էթնոսին, անձին) մղում է ինչպես ինստիտուցիոնալացված որոշակի վարքագծի, այնպես էլ բաժանում է քաղաքական տարածությունն ու ժամանակը: Պատմական հիշողությունը անցյալի վերլուծման ակտիվ, կառուցողական գործընթաց է և տեղեկատվական հոսքերի վերականգնում, որոնք տվյալ պատմական ժամանակաշրջանում ապահովում են առավելագույն կենսունակություն: Անցյալի ընտրությունը հնարավորություն է տալիս ռացիոնալ մակարդակում պատմական հիշողությունից կանչելու այն հատվածը, որի հետագա գեներացումը կապահովի կենսունակություն՝ միևնույն ժամանակ զտելով տեղեկատվական աղմուկը: Կարելի է ենթադրել, որ պատմական հիշողությունը անշարժ երևույթ չէ, այլ անընդհատ փոփոխվող է, որը պայմանավորված է տվյալ ժամանակահատվածի մարտահրավերներով: Ինչպես անցյալն է ազդում ներկայի վրա, այնպես էլ ներկան է մեծապես որոշում, թե ինչպես կրնկալվի և կվերծանվի անցյալը: Հիշողությունները հող են ստեղծում իրենց իսկ հավերժացման համար: Ա. Բերգսոնի խոսքերով՝ «Մեր կյանքի ամենօրյա իրադարձությունները հանդես են գալիս հիշողության ձևով, իսկ հիշողությունը բաց չի թողնում ոչ մի մանրուք և ամեն մի փաստին ցույց է տալիս իր տեղն ու ժամանակը»¹⁵:

НЕЛЛИ АЛАВЕРЯН – Историческая память как компонент ценностно-нормативной системы общества. – В статье рассматриваются вопросы исторической памяти, факторы, ее формирующие, основные формы проявления и механизмы передачи. Историческая память рассматривалась с двух точек зрения. Во-первых, философию исторической памяти можно рассматривать как часть биофилософии человека, несущего память, познающего себя и оценивающего ее содержание, во-вторых, историческая память выделена как фактор мобилизации «ценного потенциала общества» для ответа на вызовы современности. Учитывая вызовы, стоящие перед современным обществом, в статье особое внимание уделено возможностям подхода, получившего название «технологический детерминизм», который заставляет осознать необходимость «технологического прорыва» как условие выживания страны и который может быть соответствующим «переломом» в историческом сознании и для исторической памяти. Речь идет об историческом опыте реализации научно-технических «прорывов» и мобилизации творческого потенциала общества для решения жизненно важных задач.

Историческая память является одним из важных компонентов, формирующих политическое поведение и сознание. Оно делает прошлое настоящей ценностью, значимой частью нашей жизни и движущей силой важнейших общественных событий. Историческая память своей энергией подталкивает общество к определенному институционализированному поведению и разделяет историческое пространство и время. В этом процессе расшифровка и переоценка исторической памяти является важной предпосылкой обеспечения непрерывности и жизнеспособности нормальной трансформации общества.

¹⁵ **Бергсон А.** Творческая эволюция. Материя и память. Минск, 1999, с. 207-208.


Ключевые слова: *историческая память, наследие прошлого, политика памяти, бросать вызов, ценностно-нормативные системы, информационная причинность, технологический детерминизм*

NELLI ALAVERDYAN – *Historical Memory as a Component of Society's Value-Normative System.* – The article deals with the issues of historical memory, the factors that form it, and the main forms of manifestation and transmission mechanisms. Historical memory was considered from two perspectives. First, the philosophy of historical memory can be considered as a part of the biophilosophy of a person who carries memory, knows himself and evaluates its content, secondly, historical memory is important as a factor for mobilizing the "valuable potential of society" to respond to the challenges of our time.

Taking into account the challenges faced by modern society, the article paid special attention to the possibilities of the approach called "technological determinism", which makes one realize the need for "technological breakthrough" as a condition for the survival of the country, and which can be a corresponding "turning point" in historical consciousness and historical for memory. It is about the historical experience of implementing scientific and technological "breakthroughs" and mobilizing the creative potential of society to solve vital problems. Historical memory is one of the important components shaping political behavior and consciousness. It makes the past a real value, a significant part of our life and a driving force for the most important social events. Historical memory, with its energy, drives society to certain institutionalized behaviors, and divides historical space and time. In this process, the decoding and revaluation of historical memory is an important prerequisite for ensuring the continuity and vitality of the normal transformation of society.

Key words: *historical memory, a heritage of the past, memory politics, challenge, value-normative systems, informational causality, technological determinism*

ՎԻՐՏՈՒԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՂԱԶԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննարկվում են վիրտուալության և իրականության կապին, փոխհարաբերություններին առնչվող հարցեր, համեմատական վերլուծության միջոցով բացահայտվում են իրականության որպես արտաքին աշխարհի և վիրտուալության գոյաբանական տարբերակման հիմքերը: Փորձ է արվում որոշելու վիրտուալության գոյաբանական կարգավիճակը կեցության համակարգում: Հոդվածի նպատակն է բացահայտել վիրտուալության դիրքը իրականությունների աստիճանակարգման մեջ, նյութական իրականության հետ նմանություններն ու տարբերությունները, ինչպես նաև հեռանկարային հնարավորություններն ու մարտահրավերները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում վիրտուալության հասկացության հստակեցմանը, փորձ է արվում ներկայացնելու դրսևորումների ողջ շրջանակը, որն ընդգրկում է սովյալ հասկացությունը: Քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ֆիզիզկապես անհաղթահարելի գոյաբանական սահմանները, պայմանական և հոգեկան իրականությունների հասկացությունները՝ վիրտուալության հետ հարաբերության համատեքստում: Վիրտուալության գոյաբանական կարգավիճակը գնահատելու նպատակով անդրադարձ է կատարվում վիրտուալ օբյեկտների ստեղծմանը, դրանց կախվածությանը ֆիզիկական իրականությունից, վիրտուալ աշխարհների ինքնավարությանը, պատկերայնությանը, ինտերակտիվությանը, ինչպես նաև վստահելիության ու կայունության աստիճանին: Քննարկման արդյունքում արվում է հետևություն, որ վիրտուալությունը ամբողջականության, զգայական ընկալման, հագեցվածության, լիարժեք ինքնուրույնության բացակայության և մի շարք այլ առումներով զիջում է ֆիզիկական իրականությանը՝ նպատակ չունենալով հաղթահարելու այդ իրականությունը, մրցակցելու դրա հետ կամ դուրս գալու դրա սահմաններից:

* **Ղազար Ավետիսյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ

Казар Аветисян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ

Ghazar Avetisyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at YSU Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics.

Էլ. փոստ՝ ghazar.avetisyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0005-4301-1935>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.05.2024

Գրախոսվել է՝ 05.06.2024

Հաստատվել է՝ 12.07.2024

© The Author(s) 2024

Բանալի բառեր – վիրտուալություն, իրականություն, հաստատուն իրականություն, պայմանական իրականություն, իրականության մոդալություն, ֆունկցիոնալ պայմանականություն, գեղարվեստական իրականություն, վիրտուալության սահման

Գիտատեխնիկական զարգացման արդյունքում առօրյա և գիտական լեզվում հաճախակի հանդիպող եզրույթներից է դարձել «վիրտուալ իրականություն» հասկացությունը: Թեև ժամանակակից հասարակությունն անպատկերացնելի է սոցիալական գործընթացների վիրտուալացումից դուրս, և հիմնախնդիրը քննվել է տարբեր մասնագետների կողմից, այնուամենայնիվ հարցին առնչվող շատ խնդիրներ մնում են չպարզաբանված, չվերլուծված, ուստի հետազոտություններն այս ոլորտում շարունակվում են: Հատկապես արդիական է վիրտուալության գոյաբանական կարգավիճակի քննարկումը, քանի որ օրեցօր զարգացող թվային տեխնոլոգիաների, մասնավորապես արհեստական բանականության, VR-տեխնոլոգիաների և հիպերբնական անիմացիոն տեխնոլոգիաների ֆոնին վիրտուալության և իրականության տարանջատումն ավելի է դժվարանում, առաջանում են իրականության և վիրտուալության սահմանների որոշման, վիրտուալության և իրականության հարաբերակցության, նմանությունների, տարբերությունների և տարանջատման հիմքերի խնդիրներ: Առօրյա՝ ոչ վիրտուալ իրականությանը տարբեր հեղինակներ տվել են մի շարք անվանումներ (կոնստանտ իրականություն, նյութական իրականություն, ֆիզիկական իրականություն, առօրյա իրականություն, ռեալություն և այլն): Տերմինաբանական խառնաշփոթից խուսափելու նպատակով հոդվածում ոչ վիրտուալ իրականությունը պայմանականորեն կանվանենք պարզապես *իրականություն*, իսկ վիրտուալ իրականությունը՝ *վիրտուալություն*:

Վիրտուալության գաղափարը քննարկել են դեռևս անտիկ և միջնադարյան մտածողները, սակայն այն իրապես արդիական է դարձել նոր ժամանակների միջառարկայական հետազոտություններում, գիտության մեջ և տեխնիկայում: Այս է պատճառը, որ վիրտուալության հարցում առկա են փիլիսոփայական մի շարք մոտեցումներ. կոմունիկատիվ (Մ. Մակլուհեն), դիֆերենցիալ (Ժ. Դելյոզ), սիմուլյատիվ (Ժ. Բոդրիյար), սուբյեկտային (Բ. Գ. Կոստունցև), սիմվոլիկ (Վ. Մ. Ռոզին), տեխնոլոգիական (Ա. Վ. Յուլիվիդ) և այլն:

Վիրտուալությունն ընդգրկում է ըմբռնումների լայն շրջանակ, որում հաճախ ներառվում են նաև հոգեկան և հոգեբանական մի շարք երևույթներ, ինչպիսիք են երազները, տեսիլքները, հայուցինացիաները, ինչպես նաև կինոյի և գրականության քվազիիրականությունները: Նման մոտեցումն իհարկե արդարացի է, քանի որ կարելի է գտնել այդ իրականությունները միավորող շատ բնութագրիչներ, սակայն իրականությունների ողջ բազմազանությունը միայն վիրտուալության հանգեցնելը բարդացնում է դրա վերլուծությունը: Այդ իսկ պատճառով վիրտուալության սահմանումների բազմազանությունից հարկ է առանձնացնել այն մեկը, որը թույլ է տալիս ավելի հստակ համեմատել այն այլ

իրականությունների հետ: Տարբեր սահմանումներում ընդհանուրն այն է, որ վիրտուալությունը դիտարկվում է որպես մեթոդների, սկզբունքների և տեխնիկական միջոցների համալիր, որն ապահովում է իրական աշխարհի համակարգչային մոդելավորման և դրա վրա ինտերակտիվ ազդեցության հնարավորությունը¹: Մահմանումներից մեկի համաձայն՝ «վիրտուալությունը իրականության տեսակ է, որը ստեղծվում է համակարգչային կամ ոչ համակարգչային տեխնիկայի հիման վրա, ինչպես նաև իրագործում է հետադարձ կապի սկզբունքները, որոնք թույլ են տալիս մարդուն բավականին արդյունավետ գործել վիրտուալության աշխարհում»²: Այլ խոսքով՝ վիրտուալությունը կարելի է սահմանել որպես արհեստական միջավայր՝ ստեղծված մեծամասամբ համակարգչային տեխնոլոգիաների միջոցով, որոնք ինտերակտիվ ազդեցության հնարավորություն են տալիս:

Դասական փիլիսոփայության շրջանակներում էմպիրիկ իրականության գոյաբանական կարգավիճակին առնչվող հարցերը սովորաբար հանգում են դրա գոյության մոդալության որոշմանը՝ ո՞րն է, թե՞ իդեալական, իրական է (ակտուալ), թե՞ հնարավոր (պոտենցիալ), օբյեկտի՞վ է, թե՞ սուբյեկտիվ և այլն: Երբ ընթանում ենք դասական գոյաբանության ուղղությամբ, որն ի վերջո հանգում է ավանդական երկվությանը (դիխոտոմիա)՝ կեցություն և գիտակցություն, արտաքին և ներքին աշխարհներ, բառեր և իրեր, մեր կամքից անկախ՝ առնչվում ենք իրականության ֆիզիկական օբյեկտիվ գոյության խնդրին: Եվ անգամ այդ խնդրի լուծման պարագայում երաշխավորված չէ, որ կիմանանք, թե ինչպիսի իրականության հետ գործ ունենք: Չէ՞ որ տեղի ունեցողի ֆիզիկական առկայությունը դեռևս իրականության երաշխիք չէ: Դա կարող է լինել խաղային կամ պայմանական իրականություն, ինչպիսին է օրինակ՝ թատրոնի բեմական իրականությունը: Վիրտուալության խնդիրների դիտարկումը լիովին փոխում է աշխարհի մասին դասական պատկերացումները, այն ձեռք է բերում բազմամակարդակության և բազմազանության գծեր, իսկ իրականությունը դառնում է բազմաշերտ և տարբերակային: Վիրտուալության ընկալումը ենթադրում է մետաֆիզիկական նվազագույն կայունություն և վստահություն իրականության օբյեկտիվության հարցում:

Նյութական գոյերի աշխարհը հակադրվում է ոչ նյութական, հետևաբար նաև՝ վիրտուալ աշխարհին: Մակայն վիրտուալությունն ունի նյութական (մարդու զգայարանների վրա ազդեցությամբ), օբյեկտիվ-իդեալական (համակարգչային տեխնոլոգիաներում տրամաբանության կարևորությամբ), սուբյեկտիվ-իդեալական (պարամետրերը կարող են փոփոխվել սուբյեկտի կամքով) կեցություններին բնորոշ հատկություններ:

¹ St' u Севальников А. Ю. Онтологические аспекты виртуальной реальности // Виртуалистика: экзистенциальные и эпистемологические аспекты. М., 2004, էջ 210:

² Розин В. М. Существование, реальность, виртуальная реальность // Концепция виртуальных миров и научное познание. СПб., 2000, с. 58.

«Իրականության զգացողությունը», որն ուղիղ կախված է դրա հետ կապից, պրագմատիստ մտածողներ Ջ. Դյուիի և Ա. Ջեյմսի կարծիքով, ձևավորում է մարդու վերաբերմունքը տեղի ունեցողի հանդեպ³: Դա կարող է լինել առանձին դիտողի (դիտողի դիրքորոշում) կամ էլ՝ աշխարհի իրադարձություններում անմիջականորեն ներգրավվածի կարգավիճակով (մասնակցի դիրքորոշում), որի պարագայում մասնակիցը ձևավոխում է այդ իրադարձություններն իր գործողություններով: Այսպիսով՝ կարող ենք հանգել իրականությունների կամ ենթաշխարհների բազմազանության գաղափարին, որտեղ որպես «առաջնային իրականություն» ընդունվում է զգայական տվյալների աշխարհը: Պրագմատիստների տեսությունը շարունակություն է գտել սոցիալական ֆենոմենոլոգիայում, որն առաջնային իրականությունը մեկնաբանում է իբրև անմիջական եղելություն և սուբյեկտի համար նշանակություն ունեցող կենսական աշխարհ, ինչը, ըստ Շյուցի, համապատասխանում է, այսպես կոչված, «բնական դիրքորոշմանը» («առօրեականության հորիզոն»): Նրա համար կենսական աշխարհը «ինտերսուբյեկտիվ աշխարհն է, որն ընդհանուր է բոլորիս համար: Դա այն աշխարհն է, որի հանդեպ մենք ունենք ոչ թե տեսական, այլ ծայրահեղ գործնական հետաքրքրություն»⁴:

Մարդու անձնական ներգրավվածությունը տեղի ունեցողին, ինչը թույլ է տալիս նրան իրենից դուրս գտնվող ռեալությունը բնութագրել որպես անհրաժեշտ իրականություն, կարող է կայանալ նաև բացահայտ պայմանական իրականությունների պարագայում: Եվ հակառակը՝ լրիվ անտարբեր մարդու համար իրականությունը կորցնում է *իրականության* մոդալությունը: Իրականությունը «գունագրվում է» այն դեպքում, երբ արտահայտվածությամբ զիջում է մեր ապրումներով հագեցած իր նմանակ-սիմուլյակրներին, քանի որ, երբ նմանակը դառնում է իրականություն, իրականությունը դառնում է նմանակ⁵:

Հաղորդակցության նոր ձևերի և կիբերմշակույթի ձևավորմանը նպաստող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, հեղինակի/դիտողի ինքնանույնականանցման հետ փորձերի վրա հիմնված պոստմոդեռնիստական մշակույթի և փորձարարական թատրոնների պրակտիկան ծնում են *ֆունկցիոնալ պայմանականության* հասկացության անհրաժեշտություն, որն արդիական է դարձնում մարդու առաջատար դերը, նրա ինքնասուբյեկտիվ դիրքորոշման նշանակությունը (մասնակցի կամ դիտողի կարգավիճակում) իրականության սահմանման հարցում:

Յույց տալով ֆիզիկապես անհաղթահարելի գոյաբանական սահմանների

³ Տե՛ս **John Dewey and James Alexander McClellan** Applied Psychology: An Introduction to the Principles and Practice of Education, LLC, 2019, էջ 47-48:

⁴ **Шюц А.** Избранное: мир, светящийся смыслом / пер. с нем. и англ. М., 2004, с. 403.

⁵ Տե՛ս **Бодрийяр Ж.** Симулякры и симуляции. М., 2015, էջ 81:

անցանելիությունը՝ ֆունկցիոնալ պայմանականությունը տեսանելի է դարձնում պայմանականության (իրականության) չափանիշների մոբիլությունն ու ճկունությունը, դրանց կախվածությունը իրադարձությունների ազենտի հետ մարդու ինքնանույնականացումից, այսինքն՝ իր պատկանելությունից որոշակի իրականությանը, ինչը հնարավորություն է տալիս ունենալու մասնակցի դիրքորոշումը նաև պայմանական իրականության պարագայում: Ֆունկցիոնալ պայմանականությունը ձևավորում է իրականության հետ փոխհարաբերության միանգամայն նոր տեսակ: Իրեն հատուկ ինտերակտիվության շնորհիվ «լոգոում է» գոյաբանական սահմանները՝ ընդ որում չհավակնելով չեղարկել դրանք, և հակառակը՝ գոյաբանորեն բաց իրականությունները պարփակում է ֆունկցիոնալ սահմաններով (որպես կանոն՝ գեղարվեստական), ինչի հաշվին մարդը կտրվում է տեղի ունեցողից: Այսպիսով՝ ֆունկցիոնալ բաց սահմանների ինտերակտիվությունը թույլ է տալիս անգամ սկզբունքորեն պայմանական իրականությունները համարել բաց (թեև՝ ի տարբերություն իրականության՝ ոչ գոյաբանական իմաստով):

Վիրտուալության առանձնահատկությունն այն է, որ այն հնարավորություն է տալիս միաժամանակ մասնակցելու գոյաբանորեն տարանջատված երկու իրականությունների իրադարձություններին: Ընդ որում, ի տարբերություն երազատեսության, այդ մասնակցությունը պայմանավորված չէ իրականություն ձևացող պատրանքով: Վիրտուալությունում պատրանքը ո՛չ պատճառն է, ո՛չ էլ պայմանը, այլ պարզապես տեղի ունեցողում լիարժեք ներգրավվելու հետևանքն է:

Իրականությունը գոյաբանական տեսանկյունից լինում է փակ, իսկ ֆունկցիոնալ տեսանկյունից՝ բաց: Այս համատեքստում վիրտուալությունը դրսևորվում է որպես պայմանական իրականություններից մեկը՝ համատեղելով գոյաբանորեն փակ իրականությունների (առաջին հերթին՝ գեղարվեստական աշխարհների) և ֆունկցիոնալորեն բաց հոգեկան իրականությունների հատկությունները՝ առանց դրանց միաձուլվելու:

Այնուամենայնիվ, ֆունկցիոնալ առումով բաց լինելը, ինչը հետադարձ կապի և ինտերակտիվ կառավարման ազդեցության օգնությամբ լոգոում է վիրտուալ իրականության և մարդու միջև գոյաբանական սահմանը, ամեն դեպքում չի կարող չեղարկել այդ սահմանի գոյաբանական բնույթը: Վիրտուալությունը սահմանափակված է պայմանական իրականության գոյաբանական կարգավիճակով և չի միաձուլվում իրականությանը իր պայմանականության հաշվին:

Գոյաբանական առումով փակ լինելը, ինչը թույլ չի տալիս լիարժեք ներկա լինել և մասնակցել տեղի ունեցողին, այդպիսով բացառում է իր հանդեպ լիակատար վստահությունը և ապահովում է «ամեն ինչ կրկնելու» հնարավորությունը, ինչպես նաև տալիս է անխոցելի լինելու զգացողություն: Կրկնելու և իրադարձությունները նոր սցենարով զարգացնելու հնարավորությունը ցույց է

տալիս վիրտուալ աշխարհի տարբերակային, բազմամոդուսային բնույթը:

Գոյաբանական առումով փակ լինելը հրապուրում է աշխարհի հանդեպ թվացյալ իշխանությամբ (ցանկացած պահի այն կարելի է «միացնել» և «անջատել»): Դա պայմանավորված է վիրտուալության, այսպես կոչված, «ճնշումով», որը լրջորեն զիջում է իրականության (ֆիզիկական, նորմատիվ, սոցիալական, հոգեկան և այլն) ճնշմանը, որի իմպերատիվ և իշխանական ներկայությունը ըստ Փ. Բերգերի և Թ. Լուքմանի, չեն կարող անտեսել անգամ սոլիփսիզմի կամ դևիանտության կողմնակիցները⁶: Վիրտուալությունը հաճախ խաղարկում է այդ ճնշումը՝ տարածելով այն, ազդելով դրա վրա և պայքարելով դրա դեմ՝ արտաքին անունության, պլյուրալիստականության միջոցով: Բացի այդ, վիրտուալությունը բնութագրվում է գոյաբանական անպատասխանատվությամբ: Վիրտուալության ենթակա լինելու կարգավիճակը նշանակում է, որ այն «ամբողջությամբ չի բխում սոցիալականի մեխանիզմներից և օրենքներից և հետևաբար՝ թաքնվում է գոյաբանական պատասխանատվությունից»⁷:

«Վիրտուալ աշխարհի հասկացությունը պարունակում է պոստեցիալության և ճշմարտության երևույթները»⁸: Հետևաբար՝ վիրտուալության գոյաբանական կարգավիճակին անհնար է միանշանակ գնահատական տալ: Վիրտուալությունն ունի աշխարհների ստեղծման կարողություն: Ընդ որում՝ վիրտուալ աշխարհը բնութագրվում է ինքնավարության, պատկերայնության, գրավչության նույնպիսի աստիճանով, ինչպիսին գեղարվեստական աշխարհներին է, իսկ ինտերակտիվությամբ անգամ գերազանցում է դրանց: «Վիրտուալ օբյեկտները գոյաբանորեն չեն զիջում իրենց ստեղծող հաստատուն իրականությանը»⁹: Վիրտուալության ինքնավարությունն առաջին հերթին դրսևորվում է սեփական ժամանակով՝ անցյալով ու ապագայով: Վիրտուալությունն ունի սեփական տարածությունը, որը նույնական չէ ո՛չ նյութական, ո՛չ էլ սուբյեկտիվ իրականության ոլորտների հետ, ունի սեփական սահմանները, ինչպես նաև գոյության կանոնները:

Այնուամենայնիվ, չնայած իրենց ինքնավարությանը և որոշակի ինքնուրույնությանը՝ ըստ Ս. Ս. Հորուժեի՝ «վիրտուալ երևույթները միշտ բնութագրվում են ինչ-որ մասնակիությամբ կամ կիսաիրագործվածությամբ, ունեն որոշակի կիսատություն, սովորական էմպիրիկ ռեալության այս կամ այն բնութագրիչների բացակայություն: Այդ կիսատությունը թույլ չի տալիս հասնել կայուն, հաստատուն գոյության ու ներկայության»¹⁰: Վիրտուալությունը

⁶ Sté u Berger P. & Luckmann T. The social construction of reality. In Social Theory Re-Wired, Routledge, 2016, էջ 95:

⁷ Таратута Е. Е. Философия виртуальной реальности. СПб., 2007, с. 80.

⁸ Маньковская Н. Б. Эстетика постмодернизма. СПб., 2000, с. 243.

⁹ Иванов А. Е. Виртуальная реальность // История философии: энцикл., Минск, 2002, с. 185.

¹⁰ Хоружий С. С. Род или недород? Заметки к онтологии виртуальности // Вопросы философии. 1997, № 6, с. 54.

բնութագրվում է գոյաբանական հասկությունների կիսաարտահայտվածությամբ, անգամ կարելի է ասել գոյաբանական խոցելիությամբ: Վիրտուալ իրադարձությունում կեցությունը չի հասնում լիարժեք իրագործման, ուստի և կարելի է պնդել, որ այն «կեցության ինքնավար տեսակ չէ, այլ ինչ-որ ինքնատիպ ենթահորիզոն, էներգիաների գոյաբանական հորիզոններում ամենացածրը»¹¹: Ըստ Ռ. Ինգարդենի՝ դա բացատրվում է նրանով, որ գոյաբանորեն փակ իրականությունների օբյեկտները (ինչպես գեղարվեստական, այնպես էլ վիրտուալ) օժտված են «հետերոնոմիկ» ոչ ինքնուրույն գոյությամբ¹²: Այդպիսի օբյեկտների գոյության համար անհրաժեշտ է ֆիզիկական կրող կամ, ըստ Ն. Ա. Նոսովի տերմինաբանության, «կոնստանտ» (հաստատուն) իրականություն, որն ունակ է վիրտուալ օբյեկտներին զգայականորեն ընկալելի ձև հաղորդելու՝ մոտեցնելով դրանք հոգեկան ֆենոմեններին (երևակայություն, պատկերացում և այլն)¹³:

Վիրտուալությանը բնորոշ են հատվածականությունը, իրականությանը հատուկ «հագեցվածության» բացակայությունը: Այն «շրջանակային» բնությի է, այսինքն՝ գոյաբանորեն սահմանափակված է ծրագրային կամ գեղարվեստական չափանիշներով:

Զգայական ընկալման տեսանկյունից վիրտուալությունը կարողանում է փոխանցել տեսողական և լսողական ձևերը՝ ընկալման փորձը հնարավորինս մոտեցնելով իրականությանը: Մակայն վիրտուալությունն անկարող է տալ շոշափելիքի, համի, հոտի զգայությունների հնարավորությունը: Վիրտուալության ներսում մարդը դառնում է ֆիզիկապես պասիվ, զգացողություններն ապրում է իր երևակայության, այլ ոչ թե օբյեկտիվ իրականության հաշվին¹⁴:

Վիրտուալ գոյությունը պահանջում է իր կեցության աստիճանից դուրս ինչ-որ բանի, մասնավորապես՝ իրականության հետ համագործակցություն: Այն կարող է գոյություն ունենալ միայն հաստատուն, էմպիրիկ իրականության հետ համեմատվելով¹⁵: Վիրտուալությունը նպատակ չունի հաղթահարելու իրականությունը կամ դուրս գալու դրա սահմաններից: Իրականության և վիրտուալության կապող օղակը մարդն է, դեռ ավելին՝ հենց մարդն է վիրտուալությանը գոյության իրավունք տալիս: Մարդուն անսահման հնարավորություններ տվող, մարդու կողմից ստեղծված և նրա շնորհիվ գոյություն ունեցող վիրտուալությունը իրականությունների աստիճանակարգման մեջ հեռանկարում կարող է հաստատուն իրականությանը հավասար կամ առաջնային դիրք գրավել: Վիրտուալության գոյությունը ստիպում է նոր մոտեցմամբ դիտարկել

¹¹ Նույն տեղում, էջ 61:

¹² Տե՛ս Ինգարդեն Ք. Исследования по эстетике. М., 1962, էջ 101:

¹³ Տե՛ս Носов Н. А. Виртуальная реальность // Вопросы философии, 1999, № 10, էջ 151:

¹⁴ Տե՛ս Юхвид А. В. Виртуология: культурно-философские аспекты // Вестник МГОУ. ФН. № 3, 2010, էջ 115:

¹⁵ Տե՛ս Таратута Е. Е., նշվ. աշխ., էջ 81:

գոյարանական և սոցիալական մի շարք ֆենոմեններ և նորովի իմաստավորել մարդկության զարգացման հնարավորությունները:

КАЗАР АВЕТИСЯН – *Онтологические проблемы взаимосвязи виртуальности и реальности.* – В статье обсуждаются вопросы, связанные с взаимосвязью, отношениями виртуальности и реальности, посредством сравнительного анализа раскрываются основы онтологического различия реальности как внешнего мира и виртуальности. Делается попытка определить онтологический статус виртуальности в системе бытия. Цель статьи – раскрыть положение виртуальности в ранжировании реальностей, сходства и различия с материальной реальностью, а также перспективные возможности и вызовы. В статье особое внимание уделяется уточнению понятия виртуальности, делается попытка описать весь спектр проявлений, которые охватывает данное понятие. Обсуждаются такие вопросы, как физически непреодолимые онтологические границы, концепции условной и психической реальностей в контексте отношения к виртуальности. С целью оценки онтологического статуса виртуальности рассматривается создание виртуальных объектов, их зависимость от физической реальности, к автономности, образности, интерактивности виртуальных миров, а также к степени надежности и стабильности. В результате обсуждения выясняется, что виртуальность уступает физической реальности в целостности, чувственном восприятии, насыщении, отсутствии полной самостоятельности и ряде других аспектов без цели преодолеть эту реальность, конкурировать с ней или выйти за ее пределы.

Ключевые слова: *виртуальность, действительность, константная реальность, условная реальность, модальность реальности, функциональная обусловленность, художественная реальность, граница виртуальности*

GHAZAR AVETISYAN – *Ontological Problems of the Relationship between Virtuality and Reality.* – The article discusses issues related to the relationship between virtuality and reality, through comparative analysis reveals the foundations of the ontological distinction between reality as the outside world and virtuality. An attempt is made to determine the ontological status of virtuality in the system of being. The purpose of the article is to reveal the position of virtuality in the ranking of realities, similarities and differences with material reality, as well as promising opportunities and challenges. In the article, special attention is paid to clarifying the concept of virtuality, an attempt is made to describe the entire range of manifestations that this concept covers. Issues such as physically insurmountable ontological boundaries, concepts of conditional and mental realities in the context of attitudes to virtuality are discussed. In order to assess the ontological status of virtuality, the creation of virtual objects, their dependence on physical reality, autonomy, imagery, interactivity of virtual worlds, as well as the degree of reliability and stability are considered. As a result of the discussion, it turns out that virtuality is inferior to physical reality in integrity, sensory perception, saturation, lack of complete independence and a number of other aspects without the goal of overcoming this reality, competing with it or going beyond it.

Key words: *virtuality, reality, constant reality, conditional reality, modality of reality, functional conditionality, artistic reality, border of virtuality*

ПОНИМАНИЕ «СТРАДАНИЯ», «БОЛИ» И «ЧЕЛОВЕЧЕСКОГО БЫТИЯ» В ПСИХОАНАЛИЗЕ И ФИЛОСОФИИ

ՆԵԼԼԻ ԱՐՕՅԱՆ* 

Երևանский государственный университет

В данной статье анализируется уникальный аспект человеческого существования, который занимает важное место как в психологии, так и в философской антропологии с его многочисленными значениями, противоречиями, сложностями и невозможностью полного понимания сути. Рассматривается проблема восприятия жизни и смерти, биологические и психологические характеристики человеческой неполноценности, постоянное состояние недостатка, обусловленное наличием границы, которую необходимо преодолевать для поддержания жизнедеятельности, а также осознания неизбежности окончания человеческого существования.

В статье представлен краткий обзор ключевых компонентов человеческого бытия, таких как страдание – феномен, который свидетельствует о стремлении к преобразованию, переход от существования к не существованию, как переживание собственной завершенности и конечности. Рассматривается трагичность человеческого бытия и страдание с точки зрения философа-богослова Г. Нарекаци.

Анализируется специфика переживания боли, т.е. ее связь с культурными и этническими особенностями личности. Боль рассматривается как важная характеристика эволюции живого мира и базовый признак существования человека, оказывающая значимое влияние на его бытие. Рассмотрен также вопрос о смысле жизни в контексте различных точек зрения философской антропологии, экзистенциальных философов и психоаналитиков.

Ключевые слова: философия, психоанализ, страдание, боль, человеческое бытие, экзистенциализм, познание, жизнь, смерть, влечение

Феномен человеческого бытия является едва ли главной темой философской антропологии. Эта проблема рассматривается в трудах многих философов; но охватить ее целиком не под силу никакой философской или психологической системой, насколько она многообразна и сложна. Постижение человека возможно

* **Նելլի Արոյան** – кандидат психологических наук, доцент кафедры социальной и клинической психологии ЕГУ

Նելլի Հարոյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի դոցենտ

Nelli Haroyan – Candidate of Psychological Sciences, Associate Professor at YSU Chair Social and Clinical Psychology

Էլ. փոստ nelharoyan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0009-0008-6542-6594>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 24.05.2024

Գրախոսվել է՝ 27.05.2024

Հաստատվել է՝ 12.07.2024

© The Author(s) 2024

только через раскрытие предельной сложности и многозначности его существования. В человеке, как считалось с древних времен, ценно не только то, что явлено, но главным образом то, что сокрыто. И роль психоанализа в исследовании того, что сокрыто, является незаменимым.

Человек - определяется различными концепциями как рациональное, разумно-нравственное, биосоциальное, символическое существо, но все эти определения только касаются его внешней природы и не улавливают подлинной сущности человека, так как в нем скрыто неведомое, превосходящее известно¹.

Средневековый гениальный мыслитель, теолог и антрополог Г. Нарекаци в своей великой работе «Книга скорбных песнопений» стремится осознать эту непостижимость. Он пишет: «...И так, я так и не разгадал самого себя и никогда не смогу узнать, чьей рукой, по чьему образу и ради чего был создан»². Эти слова заставляют задуматься и понять, что человек - вечная тайна, скрытая от нас самих.

Платон в свое время отмечал, что сущность человека – это сложный текст, написанный мелкими буквами, который философы должны расшифровать. Человек – это алгоритм противоположностей.

В психоанализе мы также видим, что метапсихология Фрейда основана на идее сосуществования противоречий в психике.

Однако человек – не только противоречивое, но и недостаточное существо. Истоки этой нехватки, которую человек переживает как на биологическом, так и на психологическом уровнях, следует искать в онтологии – науке о бытии.

Недостаточность, как биологическая и психологическая характеристика, присуща всем живым существам. Она представляет собой постоянное состояние нехватки, которая обусловлена наличием границы, за которую необходимо выходить, чтобы поддерживать жизнедеятельность. Зигмунд Фрейд указывал, что первичная граница, установленная сознанием, связана с отделением индивидуального «я» от внешнего мира³. Г.Гегель также указывал на парадоксальную природу границы; несмотря на то, что она разделяет два различных существа, она одновременно объединяет их⁴.

Граница между внутренним и внешним миром человека в психоанализе является ключевым понятием. Граница символизирует ощущение недостатка, создает ощущение собственного «Я» в мире, но всегда связана с «Другим». Вся жизнь, все эмоции и ощущения сосредоточены на этой границе, и только через контакт с окружающей средой человек чувствует себя живым.

Травматичность первого опыта ощущения этой границы подчеркивается З.Фрейдом, так как переход через нее требуется для удовлетворения влечений. О.Ранк определял само рождение как травматический опыт, а К.Юнг расширил понятие «не-Я» на коллективное бессознательное. С.Грофф рассматривал травму рождения с трансперсональной и экзистенциальной позиций, отмечая ее роль в

¹ Гуревич П. Расколотость человеческого бытия. Рос. акад. наук. Ин-т философии. М.: ИФРАН. 2009.

² Нарекаци Гр. Книга скорбных песнопений. Пер. с древнеарм. и коммент. М.О. Дарбинян-Меликян и Л.А. Ханларян. М.: Наука. 1988, с.152.

³ Захарова Е. В. Фрейд об онтологической недостаточности человека. Травма быть живым. Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. // Вопросы теории и практики. 2011. № 3 (9): в 3-х ч. Ч. II. С. 59-64.

⁴ Гегель Г. В. Ф. Энциклопедия философских наук. Философия духа. М.: Мысль. 1977. 471 с.

формировании недостаточности личности в целом⁵.

По биологической точке зрения, человек является продуктом природы, и его способности, потребности и стремления реализуются через саму природу. В отличие от животных, которых можно точно описать через опыт их существования, направленного на удовлетворение инстинктов, человек также обладает социальной и культурной программами.

Философские антропологи также указывают на то, что человеческое бытие одновременно имманентно и трансцендентно, телесно и духовно, проявляется в природном, социальном и субъективном бытии. Именно поэтому его нельзя описать через систему определений. Чтобы раскрыть природу человека, важно осознавать трагическое бытие человеческого существования.

Категория существования проявляется через концепции бытия - сущности-существования. Если исходить из известного утверждения, согласно которому существование и сущность во всех отношениях означают одно и то же /Уильям Оккам/, то и сущность человека выражается в его существовании. Так как в философии бытие постулируется в контрасте с небытием, его можно понять и осмыслить только через сопоставление с небытием. Если есть бытие, то необходимо существование и небытия. Небытие рассматривается как онтологическая категория, по сути совпадающая с понятием «ничто», которое означает отрицание и отсутствие бытия⁶.

Древнегреческий философ Парменид рассматривал мышление как критерий существования и небытия, считая, что бытие, или сущее, может быть мыслимо, а небытие, или несущее, не может быть предметом мышления. Примечательно также мысль другого древнегреческого философа – Демокрита: он отождествлял небытие с пустотой.

Анализируя размышления философов о пустоте, в контексте взаимосвязи мышления и бытия, можно обнаружить связь с травматическими явлениями, которые происходят на раннем этапе развития психики младенца. Эти явления уже были описаны многими психоаналитиками, и в клинической практике они называются аннигиляцией и поглощением пустотой. Внутренняя пустота рассматривается в контексте возникновения психотической защиты, о которой писал З. Фрейд (отбрасывание), Ж. Лакан (форклюзия), А. Грин (белый психоз), У. Бион (уничтожение интегрирующей альфа-функции).

Согласно Фрейду, жизнь и смерть - это два противоположных направления бытия, две психофизические реальности. Фрейд рассматривал жизнь как вторичную по отношению к смерти, поскольку считал, что целью жизни является смерть. Он исходил из точки зрения, что основанием всех изменений и движений в жизни является небытие, к которому стремится бытие. Небытие, или «принцип нирваны», является онтологическим основанием системы Фрейда и целью жизни⁷. Еще Ге-

⁵ **Захарова Е. В.** Фрейд об онтологической недостаточности человека. Травма быть живым. Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. // Вопросы теории и практики. 2011. № 3 (9): в 3-х ч. Ч. II. С. 59-64.

⁶ **Гуревич П.** Расколотость человеческого бытия. Рос. акад. наук. Ин-т философии. М.: ИФРАН. 2009.

⁷ **Захарова Е. В.** Фрейд об онтологической недостаточности человека. Травма быть живым. Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. // Вопросы теории и практики. 2011. № 3 (9): в 3-х ч. Ч. II. С. 59-64., **Фрейд З.** Влечения и их судьба // **Фрейд З.** По ту сторону принципа удовольствия /пер. с нем. Минск: Харвест. 2004.

раклит утверждал, что жизнь и смерть взаимосвязаны: все существующее находится в непрерывном становлении, и через этот процесс живое несет в себе смерть, а смерть несет в себе жизнь. Таким образом, по его мнению, в диалектике жизни и смерти нет места для страданий. Однако, человеческое бытие содержит в себе компоненты страдания, боли и смысла жизни.

Боль является базовым признаком существования человека и оказывает значительное влияние на его бытие. Боль воспринимается медициной как важная характеристика эволюции живого мира.

Многочисленные медицинские исследования указывают на то, что чувствительность к боли может быть связана с культурными и этническими особенностями личности. Важную роль в уровне болевой чувствительности играют также гнев, ненависть к врагу, религиозная экзальтация и другие субъективные факторы, такие как способность переключать внимание на другие объекты, психологический настрой и сила воли. Гипофиз реагирует на эти факторы, снижая интенсивность болевых ощущений. Примечательно то, что философы всегда обращали особое внимание на физическую боль, не сводя ее только к религиозному дискурсу. С точки зрения гуманистической мысли, проблема преодоления боли на личностном и общественном уровнях имеет глубокий гуманистический смысл. Боль всегда является ударом по человеческому бытию, его целостности и свободе, поскольку человек должен реализовать не только свою духовность, но и физическое существование⁸. Виктор Франкл утверждал, что именно в глубокой боли и страдании кроется высший смысл человеческого существования, так как через такие переживания достигается основная цель - любовь к жизни и другому человеку⁹.

Страдание также является изначальной концепцией буддизма, утверждающего, что жизнь - это страдание, и поэтому жить значит страдать. Боль является необходимым элементом страдания и, следовательно, существования. Итак, возникает триада: существование - страдание - боль¹⁰.

Изначально слово «страдание» указывало на стремление к трансформации, переходу от существования к несуществованию, поэтому страдание можно определить как переживание собственной завершенности, конечности¹¹.

Следует отметить, что с началом развития психологии как самостоятельной научной дисциплины понятие страдания разделялось на две составляющие. Психологи исследовали его психофизиологические особенности, механизмы влияния на психические функции и организм. В философии другая сторона понятия страдания, которая рассматривается как этическая категория, поскольку практически все философы затрагивали проблему страдания, его связь с проблемами смысла жизни, свободы, необходимости, морали и взаимоотношений с людьми.

При широком охвате этико-философских подходов можно выделить две формы понимания страдания и жизни в целом. Первое понимание заключается в том, что

⁸ **Антюхина А. В.** Боль и страдание: философское осмысление. Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. // Вопросы теории и практики. 2013. № 4 (30): в 3-х ч. Ч. I. С. 25-28.

⁹ **Франкл В.** Воля к смыслу: М.:Апрель Пресс, ЭКСМО Пресс. 2000.

¹⁰ **Попова О. Ф.** Избегание страдания как экзистенциальная установка формирования зависимости // «Философия, этика, религиоведение». Акмеология, научно-практический журнал 2017. № 3/63/. С. 82-26.

¹¹ См. там же **Антюхина А. В.**

жизнь гармонична и разумна, а страдание включено в эту гармонию как неотъемлемая часть. Второе понимание гласит, что жизнь не имеет разума, полна страданий и бедствий, и является результатом слепой воли.

Страдание имеет двоякое значение: позитивное и негативное. Позитивное значение заключается в том, что каждая творческая деятельность, такая как рождение чего-то нового, связана со страданием. С другой стороны, преодоление страдания - это возможность духовного преобразования личности, ее совершенствования и обращения к своему духовному измерению, где заложены ценности и смыслы. Отрицательное значение страдания проявляется тогда, когда оно деформирует и разрушает внутренний духовный мир и спокойствие человека на протяжении длительного времени.

Экзистенциальные психологи отмечают, что страдания, с их негативными переживаниями, имеют потенциал превратиться в значимый опыт, способствующий развитию личности и выполняющий конструктивную функцию. Однако для этого необходимо радикально выйти за пределы простой замены отрицательного опыта на положительный и перейти в сферу ценностей (например: «Что мне это дает?»). Такой подход дает возможность рассматривать страдания не как проявление злой и безучастной судьбы, а как знак, указывающий на то, что в нас существовали те качества, которые могут привести к качественному росту личности.

Платон считал, что душа может достичь бессмертия, только познавая себя в переживании идеи «к свету мирового духа»; при этом познавательная способность рассматривается им как соединительная нить с божественным разумом, а страдание при этом -необходимый и сопутствующий процесс.

Мистики относились к страданию как к способу восприятия и познания, в котором они стремились найти свою отраду и пребывали внутри переживания, в котором и «видели себя». В этом контексте страдание рассматривалось ими как ключ к пониманию себя и мира.

Согласно антропологической модели личности В. Франкла, у человека существуют три неразрывных измерения: физическое, психическое и духовное. Поэтому каждое из них вносит свою трансформированную боль в жизнь человека. Боль олицетворяет ее конечность и одновременно отражает полноту и исполненность в жизни. Следовательно, страдание является «фундаментальной ценностью» человека, свидетельствующей о его отношении к жизни. В теории Франкла особое значение уделяется трансценденции, которая позволяет человеку подняться над физическим и психическим измерениями и войти в сферу духовного, что формирует новое, этическое измерение духа .

Человек, который стремится избежать страданий, желает уменьшить себя до двухмерных размеров и оказывается в тупике, поскольку, как указывал Франкл, этическое «Я» не исчезает, через страдания трансформируется и остается душевно живым¹².

В страданиях мы раскрываемся, становимся сильнее и богаче. Человек, отвлекаясь или «оглушая» себя, стремится сделать себя «невеждой», пытаясь уйти от реальности. Беспокойство и отчаяние человека в отношении ценности своей жизни являются духовными страданиями, а не психическими расстройками. Виктор

¹² Франкл В. Воля к смыслу: М.: Апрель Пресс, ЭКСМО Пресс. 2000. с.97.

Франкл в своей работе «Воля к смыслу» обозначает «трагическую триаду человеческого бытия, состоящую из боли, смерти и вины»¹³. Боль все же является основным и универсальным атрибутом человеческой жизни. Претерпевание боли оставляет глубокий след в бытие человека, часто коренным образом меняя его. Боль заставляет человека задуматься над смыслом своей жизни или же еще сильнее полюбить ее. В глубоком страдании и боли заключается высший смысл человеческого бытия, поскольку через такие переживания достигается главная цель - любовь к ближнему и к жизни. Именно в сострадании происходит свободное отречение от себя во имя других. Фридрих Ницше, представитель немецкой «философии жизни», говорил о «мудрости боли», так как она принадлежит к «родоохранительным силам». Ницше отмечал, что есть люди, которые наоборот, находят свою величайшую силу именно в страданиях, но это героические личности¹⁴.

Душевные страдания, достигающие своего максимума, испытываются как горе. Опыт горя - одна из мистических тайн духовной жизни личности.

Трагичность человеческого существования, его форма, соответствующая духу времени, выражена в богословско-философском произведении «Книга скорбных песнопений» Григория Нарекаци. В этой работе отражается трагедия разумного бытия, столкновение человека с «духовной гибелью», всеохватывающая трагедия жизни, происходящая из борьбы добра и зла, человеческого и божественного, земного и трансцендентного.

Вечная борьба между противоположностями неизбежно приводит к страданию и скорби, ибо человек постоянно ощущает разрыв между своими желаниями и реальностью, между своей душой и телом, между своим земным существованием и стремлением к божественному. Этот внутренний конфликт неразрешим и приносит человеку боль и страдания.

Ключевым элементом в процессе преодоления страдания является осознание человеком своего греховности и недостатков. Он понимает, что человек несовершенен, что его природа обременена грехом и эгоизмом, что он подвержен страстям и слабостям. Трагическое понимание этой незавершенности приводит к осознанию своей ответственности перед миром и перед Богом.

Нарекаци обращается к Богу не только за прощением и милосердием, но и за силой и мудростью в борьбе со злом и страданием. Он ищет ответы на вопросы о смысле жизни, о цели существования, о справедливости и добродетели. Его скорбные песни становятся мостом между человеком и Богом, между земным и небесным, между трагедией и надеждой. Нарекаци утверждает, что только в поиске истины и добра человек может найти смысл и цель своей жизни, преодолеть трагичность своего бытия и обрести вечную радость и спасение.

Однако страдания Нарекаци не являются личными страданиями, они принадлежат всем, ибо его «Я» растворено в каждом, т.е. страдает не Личность, а Человек. Он мучается болью всех и молится за спасение всех. Глубоко страдая за мир, наполненный людскими бедами, за мир, где в «горниле бедности мучаются люди». Он стремится стать защитником людей перед Божьим судом и молится ради них:

¹³ См. там же **Франкл В.**

¹⁴ **Ницше З.** Сочинения: 2-х т.М.: Рипол Классик,1998, Т. 2. с. 347

«Сам я — молящийся богу посланец мира сего» 15,- говорит Нарекаци. Как истинный верующий и подлинный гуманист, он не мог оставаться безразличным к земным страданиям людей, и поэтому для него на одной чаше весов была реальная жизнь людей, а на другой все: библейские истины, взятые в совокупности. И какой великой и всеобъемлющей' должна была быть любовь к страдающему человеку, и насколько глубока печаль, рожденная от сознания безвыходного существования человека, чтобы стать поводом для восстания против библейских истин. Считая себя виновным за все, что рождает «в мыслях неизменную печаль и переживания», за всю ту несправедливость и земное злое, увиденное его глазами, он берет на свои плечи еще большую ответственность. «Виновен я весь, во всем, перед всем, перед провиденьем твоим, господи, перед откровеньем твоим, перед проявлением твоим, перед нисхождением твоим устрашающим, перед виденьем, коего сподобились очи мои, коим взыскан я взыскательнее, чем Евангелием» 16. И последовательно подчеркивая безграничную положительность трансцендентного бытия и противопоставив Богу земную жизнь, т.е. бытие человека как бедственную реальность, как «долину слез», Нарекаци, поляризуя небесное и земное, человеческое и божественное, еще более выразительно показывает трагичность человеческого бытия.

Нарекаци оспаривает также один из фундаментальных положений христианской религии, согласно которой, человек страдает из-за собственных грехов и в результате изначального зла, присущего ему, ибо это означало бы искоренять все усилия человека, направленные на самосовершенствование. То есть это значило бы, что отождествление человеческой сущности со злом отрицает красоту и возвышенность души, тем самым ведя к потере ее духовной целостности. Как указывал К. Г. Юнг, зло всего лишь половина архетипа, дремлющего в коллективном бессознательном, «но если бы душа была полна одним лишь злом, то никакой властью не удалось бы сделать ее привлекательной для нормального человека»¹⁷. Он любит жизнь и страдающего человека и, как гуманист, верит в возможность духовно-нравственного развития человека.

По мнению Нарекаци, земное существование человека становится еще более трагичным от осознания двойственности и противоречивости разума и ограниченности его возможностей постичь смысл и сущность бытия. В процессе поиска смысла бытия у него рождается понимание трагичности человеческого бытия и перед ним стоит тягостная дилемма «быть или не быть» разумному бытию. Хотя Нарекаци принимает, что путем совмещения разума и божественной благодати, самопознания и богопознания возможно преодолеть не только отчуждение человека от Бога, но и отчуждение между людьми, т.е. раздвоенность и противоречивость человеческого бытия, однако сознание невозможности изменить жизнь человеческими силами доводит поэта до отчаяния, и он предпочитает небытие бедственному существованию и скорбит о рождении человека.

Экзистенциальные философы рассматривали страдание так же как необходимое условие человеческого бытия. Страдание проявляется даже в телесности человека, которая подвержена травмам, болезням, старению и физической смерти,

¹⁵ Нарекаци Гр. Книга скорбных песнопений. Пер. с древнеарм. и коммент. М. О. Дарбинян-Меликян и Л.А. Ханларян. М.: Наука. 1988. с. 104.

¹⁶ См. там же Нарекаци Гр, с. 109.

¹⁷ Юнг К. Г. Душа современного человека // Архетип и символ. М.: Ренессанс, с. 152.

когда происходит разрушение и утрата всех физиологических функций. Изначально человек сталкивается с пониманием неизбежности прекращения своего существования и подвержен экзистенциальному напряжению, протестуя против смерти всем своим существом, как духовным, так и социальным. Русский философ и экзистенциалист, Н. Бердяев, отмечает, что у человека есть внутренние противоречие: он стремится к бесконечности, ищет вечность в глубинах своего бытия, но в то же время он ограничен, временен и смертен¹⁸.

Идеи Фрейда о страдании и смысле жизни соответствуют мыслям экзистенциалистов. В своей работе «Неудобство культурой», Фрейд говорит о смысле жизни и страданиях, подчеркивая, что «нас поджидают страдания со всех сторон: от нашего тела, склонного к деградации и распаду, с предупреждающими сигналами боли и страха - без них мы не можем обойтись; от внешнего мира, который может беспощадно навести на нас свои огромные, неумолимые и разрушительные силы; наконец, от наших взаимоотношений с другими людьми»¹⁹. Однако очевидно следующее, что безболезненное существование, в конечном счете, является бездейственным, так как лишено активности и переживаний человека, избегая страданий, человек только увеличивает их и теряет связь с переживанием ценности жизни; он отчуждается не только от себя, но и от самой жизни.

Важно отметить, что идеи З. Фрейда сыграли значительную роль в научном понимании проблемы травмы. Благодаря его вкладу в анализ данной проблемы, травма стала рассматриваться как рана, нанесенная как телу, так и психике человека. В целом, его психоаналитический подход стал основой для терапии травмы.

Таким образом, пытаясь обобщить сложные понятия бытия, боли и страдания, следует заключить словами З. Фрейда, который указывал, что вопрос о смысле человеческой жизни ставился бесчисленное количество раз, но удовлетворительного ответа на него пока не найдено, возможно, его вообще не существует²⁰.

ՆԵՒԼԻ ՀԱՐՈՑԱՆ – «Տառապանք», «ցավ» և «մարդկային գոյություն» հասկացությունները հոգեվերլուծության և փիլիսոփայության մեջ – Հոդվածում վերլուծվում է մարդկային գոյության եզակի ասպեկտը, որը կենտրոնական տեղ է գրավում փիլիսոփայական մարդաբանության մեջ՝ իր բազմաթիվ իմաստներով, հակասություններով, բարդություններով և դրա էությունը լիովին հասկանալու անհնարինությունը: Դիտարկվում են կյանքի և մահվան ընկալման խնդիրը, մարդու թերաթեքության կենսաբանական և հոգեբանական բնութագրերը, սահմանային իրադրության առկայությամբ պայմանավորված՝ մշտական դեֆիցիտի վիճակը, որը պետք է հաղթահարվի՝ կյանքը պահպանելու համար, ինչպես նաև վախճանի անխուսափելիության գիտակցումը: Հոդվածում ներկայացված են մարդկային գոյության հիմնական բաղադրիչների համառոտ ակնարկը, որոնցից է տառապանքը, մի երևույթ, որը ցույց է տալիս վերափոխման ցանկությունը, անցումը գոյությունից դեպի չգոյություն՝ որպես սեփական ամբողջականության և վերջնականության փորձ: Մարդկային գոյության ողբերգությունը դիտարկվում է փիլիսոփա-աստվածաբան Գ. Նարեկացու տեսանկյունից:

¹⁸ См. там же Гуревич П.

¹⁹ Фрейд З. «Неудовольство культурой». Санкт-Петербург, Издательство: Фолио, Подарочные издания художественной литературы. 2013.

²⁰ См. там же Фрейд З.

Տառապանքը՝ իբրև մարդու գոյության անհրաժեշտ բաղադրիչ, հանգամանալից քննարկվում է նաև էկզիստենցիալ փիլիսոփաների կողմից: Վերլուծվում է ցավի փորձի առանձնահատկությունը, ինչը ցույց է տալիս, որ ցավի նկատմամբ զգայունությունը կարող է կապված լինել անհատի մշակութային և էթնիկական բնութագրերի հետ: Ցավը համարվում է կենդանի աշխարհի էվոլյուցիայի կարևոր հատկանիշ և մարդու գոյության հիմնական նշան, որը էական ազդեցություն ունի նրա գոյության վրա: Դիտարկվում է նաև կյանքի իմաստի հարցը էկզիստենցիալ փիլիսոփաների և հոգեվերլուծաբանների տարբեր տեսակետների համատեքստում:


Բանալի բառեր – փիլիսոփայություն, հոգեբանություն, տառապանք, ցավ, ողբերգություն, մարդկային կեցություն, էկզիստենցիալիզմ, հոգեվերլուծություն, ճանաչողություն, կյանքի իմաստ, մղումներ

NELLI HAROYAN* – *Understanding of «Suffering», «Pain» and «Human Existence» in Psychoanalysis and Philosophy.* – This article analyzes a unique aspect of human existence that occupies a central place in philosophical anthropology with its multiple meanings, contradictions, complexities and the impossibility of fully understanding its essence. The problem of the perception of life and death, the biological and psychological characteristics of human inferiority, the constant state of deficiency caused by the presence of a boundary that must be overcome to maintain life, as well as the awareness of the inevitability of the end of human existence are considered. The article provides a brief overview of the key components of human existence, such as suffering - a phenomenon that indicates the desire for transformation, the transition from existence to non-existence, as an experience of one's own completeness and finitude. The tragedy of human existence and suffering is examined from the point of view of the philosopher-theologian G. Narekatsi. This state is a necessary condition of human existence, studied by existential philosophers. The specificity of the experience of pain is analyzed, which indicates that sensitivity to pain may be associated with cultural and ethnic characteristics of the individual. Pain is considered as an important characteristic of the evolution of the living world and a basic sign of human existence, which has a significant impact on his existence. In addition, the question of the meaning of life is considered in the context of various points of view of existential philosophers and psychoanalysts.

Key words: *philosophy, psychology, suffering, pain, human phenomenon, existentialism, psychoanalysis, cognition, life, drives*

* Материалы данной статьи были представлены на VIII-ой Международной конференции Армянской Психоаналитической Ассоциации и Франко-Армянской Психоаналитической Ассоциации: «Будущее военного невроза и его психические последствия». 06-07.07.2023

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԶՆՆՈՒՄԻ ԿԱՐՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱԴԴՍԱՐՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Ժամանակակից պատերազմներում տեղեկատվական-քարոզչական բաղադրիչի նշանակության կարևորումը արմատապես փոխել է ռազմական բախումների բնույթը: Նվազ ռեսուրսներով, առանց ռազմական ուժի կիրառման հակառակորդ պետության ղեկավարության, բնակչության և զինված ուժերի բարոյահոգեբանական վիճակի, ինչպես նաև դիրքորոշումների, տրամադրությունների վրա ազդելու ռազմավարությունը դարձել է կարևոր գործոն ռազմական հակամարտությունների զինանոցում: Պատահական չէ, որ արդի պատերազմներում «ծանրության կենտրոնը» դարձել է հակառակորդի ՁՈՒ զինծառայողների մտավոր կարողությունները, հուզականային հատկությունները՝ նպատակ ունենալով բարոյական հյուծման, անգործության, տագնապի, նյարդահոգեկան անկայունության զգացումների ձևավորմամբ ընկճել մարտական ոգին:

Սույն հոդվածի նպատակն է համապարփակ ուսումնասիրել նոր սերնդի պատերազմներում տեղեկաբազմաբանական ներգործության դերն ու նշանակությունը՝ ցույց տալով դրա ազդեցությունը զինծառայողների մարտական ակտիվության վրա: Նպատակին հասնելու համար օգտագործվել են միջգիտակարգային տեսական վերլուծության հետևյալ մեթոդները՝ համեմատական, ընդհանրացման, համակարգման: Ուսումնասիրության արդյունքում հոդվածագիրը եզրակացնում է, որ արդի պատերազմներում առաջնային նշանակություն ունեն տեղեկատվական-քարոզչական և հոգեբանական ձեռնարկումները, որոնք հնարավորություն են տալիս նվազ

* **Սվետլանա Բադդասարյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ՀՀ ազգային անվտանգային հետազոտությունների ու կանխատեսումների խմբի ավագ լաբորանտ, ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

Светлана Багдасарян – кандидат психологических наук, старший лаборант группы исследований и прогнозирования национальной безопасности Армении института арменоведения ЕГУ, научный-аналитик центра исследований стратегического лидерства и управления НИУО МО РА

Svetlana Baghdasaryan – Candidate of Psychological Sciences, Senior laboratory assistant of the Armenian National Security Research and Forecasting Group of YSU Institute of Armenian Studies, Research Fellow, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

Էլ. փոստ՝ svetlana.baghdasaryan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0000-0001-5677-3107>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 27.05.2024

Գրախոսվել է՝ 06.06.2024

Հաստատվել է՝ 12.07.2024

© The Author(s) 2024

ռեսուրսներով հասնելու ցանկալի նպատակի, նույնիսկ մարտական գործողություններից առաջ: Ջինծառայողների մարտական ակտիվության բարձրացմանը նպաստող կարևոր գործոններից են տեղեկույթի ճշգրտությունը և բացասական տեղեկութափոխանակման ներգործությունից պաշտպանվածությունը, որոնց հնարավոր է հասնել մարտական, այդ թվում հոգեբանորեն պատրաստման ընթացքում:

Բանալի բառեր – *զինծառայողներ, մարտական ակտիվություն, տեղեկութափոխանակման ներգործություն, ժամանակակից պատերազմներ, ծանրության կենտրոն, մարտական պատրաստում, բարոյալքում, կամքի կոտորում, արտաքին և ներքին գործոններ*

Արդի պատերազմներում տեղեկութափոխանակման ներգործության դերն ու նշանակությունը

Ներկայումս սպառազինության և ռազմական տեխնիկայի, այդ թվում գերճշգրիտ զենքի, զորքերի կառավարման ավտոմատացված համակարգերի, պատերազմավարման նոր եղանակների և ձևերի ստեղծումն ու զարգացումը ժամանակակից պատերազմները դարձրել են դինամիկ, հանկարծակի կրճատելով որոշումների ընդունման, մարտական խնդրի կատարման ժամանակը: Արդի պատերազմներում հաղթանակի կարևոր պայման է դարձել ճիշտ որոշումներ ընդունելու և դրանք հաջողությամբ իրագործելու հարցում հակառակորդին գերազանցելու կարողությունը: Այս առումով հիշատակության է արժանի «Բոյնի հանգույց» (OODA Loop) անվանում ստացած ամերիկյան տեսությունը: Գերմանիայում կառավարման արդի համակարգը մշակվել է դեռևս 19-րդ դարի վերջում – 20-րդ դարի սկզբում՝ նախորդ դարերում տեղի ունեցած եվրոպական պատերազմների վերլուծության հիման վրա, և կոչվում է «աուֆտրագստակտիկ» («Auftragstaktik»), ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ արևմտյան պետություններում այն փոխառվել է և ստացել «առաջադրանքային կառավարում» (Mission Command) անվանումը: Դրա էությունն են կառավարման փուլաշրջանի յուրաքանչյուր հատվածում հակառակորդից առաջ անցնելը և ավելի սեղմ ժամկետներում ավելի որակյալ որոշում ընդունելը, և այն հակառակորդից ավելի արագ իրագործելը¹: Բացի այդ, հակառակորդին գերազանցելու կարողությունը

¹ Տե՛ս **Գ. Տավարածյան**, Պաշտպանական բարեփոխումներն ու զինված ուժերի զարգացումը ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ // «Հայկական բանակ», 2022, № 3, էջ 9-23:

* ԱՄՆ Ջորջթաունի համալսարանի պրոֆեսորներ Ք. Ջոյները և Ք. Լոտրիոնտեն նշում են, որ տեղեկատվական պատերազմ վարելու ավանդական միջոցները ներառում են հոգեբանական օպերացիաներ, էլեկտրոնային պատերազմ, ռազմական խորամանկություն, ֆիզիկապես ոչնչացում և տեղեկատվական հարձակում: Օրինակ՝ կառավարությունը կարող է մանիպուլացնել հակառակորդի պատճառաբանությունները (հոգեբանական օպերացիա), թույլ չտալ ստանալ ճշգրիտ տեղեկույթ (էլեկտրոնային պատերազմ), մոլորեցնել հակառակորդին (ռազմական խաբեություն), էլեկտրամագնիսական զենքերն ուղղել հակառակորդի տեղեկատվական համակարգի ոչնչացմանը (ֆիզիկական ոչնչացում) և աղավաղել ճշգրիտ տեղեկույթը՝ առանց ֆիզիկական օբյեկտի տեսանելի փոփոխության (տեղեկատվական հարձակում): Այդ մասին տե՛ս **Christopher C. Joyner, Catherina Lotrionte**. Information Warfare as International Coercion: Elements of a Legal

կարևորվում է ֆիզիկական, մտավոր, բարոյական և հոգեբանական ոլորտներում, քանի որ առանց դրանց միասնության հնարավոր չէ դիմակայել ժամանակակից պատերազմների մարտահրավերներին: Խոսելով ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխությունների մասին՝ պետք է նշել, որ էապես մեծացել են հոգեբանական պատերազմների* դերն ու ռազմական նշանակությունը: Ինչպես նշում է Վ. Նովիկովը, տարբեր մասշտաբների ռազմական գործողություններին նախորդում են ոչ ռազմական բնույթի միջոցառումները կամ այլընտրանքային գործողությունները (լայնածավալ տեղեկատվական ներգործությունները), որոնց նպատակն է ոչ թե ոչնչացնել, այլ վերահսկել հակառակորդին, ինչպես նաև թաքցնել ռազմական ուժ կիրառելու իրական մտադրությունները²: Վերջին շրջանի տեղային պատերազմների, այդ թվում 2016 թ. ապրիլյան մարտական գործողությունների, 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմի, 2022 թ. սեպտեմբերյան մարտական գործողությունների փորձը ցույց է տալիս, որ սպառազինության և ռազմական տեխնիկայի առկայությունը բավարար չէ հակառակորդի նկատմամբ առաջանցիկություն ապահովելու կամ արագ որոշում կայացնելու համար: Հարձակման թիրախ են դառնում ոչ այնքան հակառակորդի զինված ուժերը, որքան նրա բնակչության և ԶՈՒ անձնակազմի մարտական ոգին, պայքարելու կամքը, բարոյահոգեբանական վիճակը: Պետք է նշել, որ տեղեկության հոգեբանական ներգործության հնարները լայնորեն կիրառվել են Պանամայում, Պարսից ծոցի գոտում, Հարավսլավիայում, Աֆղանստանում իրականացված հոգեբանական գործողություններում: Տեղեկութահոգեբանական ներգործության հետաքրքիր օրինակ է «Փոթորիկ անապատում» (1991 թ.) օպերացիան Իրաքի դեմ, որտեղ բուն մարտական գործողություններին զուգահեռ իրականացվել են տեղեկատվական-քարոզչական ու հոգեբանական ձեռնարկումներ: Այս օպերացիան ցույց տվեց, որ տեղեկութահոգեբանական ներգործությունը մարտական զենք է, գորքերի մարտունակության բարձրացման, ինչպես նաև ռազմաճակատի երկու կողմերում զինվորների և սպաների կյանքի պահպանման կարևորագույն գործոն³: Հաջորդ վառ օրինակը ԽՍՀՄ-ի փլուզումն է, որի ժամանակ, ի թիվս այլ գործոնների, կարևոր դեր խաղացին «սառը պատերազմի» շրջանում տեղեկութահոգեբանական ոլորտում իրականացված եռանդուն գործողությունները, որոնք նախատեսված էին դեռևս 1945 թ. Ա. Դալեսի կողմից մշակված ծրագրով⁴: Մարդու գիտակցության վրա նպատակաուղղված ներգործությունը կարող է հանգեցնել կոգնիտիվ (իրականության աղավաղված ընկալումների և կեղծ կարծրատիպերի ստեղծումը, բարոյահոգեբանական գործոնի

Framework. «European Journal of International Law», 2001, Vol. 12, № 5, էջ 825–865, հղում՝ <http://www.ejil.org/pdfs/12/5/1552.pdf>, անցանց՝ 16.02.2024:

² Տե՛ս **Novikov V. K.** Information weapons-weapons of modern and future wars – 3rd ed., ispr. And additional – M.: Hotline – Telecom, 2020, էջ 280:

³ Տե՛ս **Логинов П. К.** Информационно-психологическое воздействие в современных операциях // Военная мысль. 2022, № 5, էջ 60-69:

⁴ Տե՛ս **Վ. Սարգսյան**, Մարտական գործունեության հոգեբանություն, Եր., 2009, էջ 228:

ազդեցության նվազեցումը, հոգևոր արժեքների, աշխարհայացքի, մտածողության, առաջնահերթությունների էական փոփոխումը), աֆեկտիվ (հույզեր, զգացմունքներ, հոգեվիճակներ) կառույցների և մտադրության ձևափոխմանը, որոնք էական ազդեցություն են ունենում նրա վարքի և հուզական համակարգի վրա:

Ռազմական ռազմավարության դասականների հայացքներում նույնպես հստակ արտահայտված են բուն ռազմական գործողություններին զուգահեռ հոգեբանական գործողություններ ձեռնարկելու կարևորությունը: Օրինակ՝ չինացի ռազմական տեսաբան Սուն Ցզինն նշում է, որ պատերազմի բարձրագույն արվեստը (կամ ամենալավ պատերազմը) հակառակորդի ծրագրերը, մտահղացումը խախտելն է, այնուհետև՝ նրա դաշինքները քայքայելը, ապա՝ նրա զորքերը ջախջախելը, իսկ վատթարագույնը՝ ամբողջ պաշարելը: Նա պատերազմը համարում է խաբեության ուղի՝ ապատեղեկատվության ու քարոզչության միջոցով հակառակորդի շարքերում խուճապ ու հուսալքություն տարածելով⁵: Կարլ ֆոն Կլաուզևիցի կարծիքով՝ պետությունը զինաթափելու, դիմադրողականությունը չեզոքացնելու, մտադրությունները փոխելու համար անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել 3 թիրախային օբյեկտների ուղղությամբ՝ «հակառակորդի զինված ուժերի, տարածքի և կամքի»⁶: Բացի այդ, լուրջ գործիք է դարձել արհեստական բանականությունը (ԱԲ), որն ընդլայնում է ապատեղեկատվական արշավների հնարավորությունները և դժվարացնում փաստերը կեղծիքներից տարբերելը: Պատահական չէ, որ առաջատար պետություններում ԱԲ-ի տարբեր տեխնոլոգիաները կիրառվում են արագ, ճշգրիտ տեղեկույթ ստանալու, վերլուծություններ կատարելու, հասարակության և զինծառայողների շարքերում տեղեկութահոգեբանական բացասական ներգործությունը կանխելու կամ տարածելու և այլ նպատակներով: Սակայն ԱԲ-ի տեխնոլոգիաների միջոցով ապատեղեկատվությունը բացահայտելու համար պետք է հաշվի առնել էթիկական սկզբունքները և մարդկային հիմնարար արժեքները⁷:

Ակնհայտ է, որ նման պայմաններում հաղթանակի հասնելու հավանականությունն ավելի է մեծանում, երբ բնակչության և ՋՈՒ անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը պատշաճ մակարդակում է գտնվում: Հարկավոր է առանձնակի ուշադրություն դարձնել զինծառայողների և բնակչության գիտակցության ու հոգեկանի վրա բացասական տեղեկույթի հոգեբանական ներգործության համակարգերի զարգացմանը, որպեսզի հնարավոր լինի հակազդել հակառակորդի կողմից իրականացվող բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը և չթիրախավորվել: Այդ ամենը հնարավոր է մարտական պատրաստման

⁵ Տե՛ս **Սուն Ցզին**, Երկ ռազմարվեստի մասին և **Նիկոլո Մաքիավելի**, Տիրակալը: Աշխատանքային տեքստեր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի հրատ., 2022, № 4, էջ 25:

⁶ «Հատվածներ Կարլ ֆոն Կլաուզևիցի «Պատերազմի մասին» աշխատությունից»: Աշխատանքային տեքստեր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի հրատ., 2020, № 3, էջ 2:

⁷ Տե՛ս **Fátima C. Carrilho Santos**. Artificial Intelligence in Automated Detection of Disinformation: A Thematic Analysis. Journalism and Media, 2023, № 4, էջ 679–687, հղում՝ <https://doi.org/10.3390/journalmedia4020043>, անցանց՝ 06.03.2024:

ծրագրերի վերանայմամբ և անհրաժեշտության դեպքում համապարփակ փոփոխություններով՝ պատերազմավարման եղանակների, տեղեկութահոգեբանական ներգործության նպատակների և հետեվանքների, հոգեբանամասնագիտական պատրաստման նոր մոտեցումների, նմանարկող իրադրությունում անցկացվող պարապմունքների, վարժանքների, մարզումների ու զորավարժությունների կարևորության հաշվառմամբ: Ավելին, որքան վաղ իրականացվեն պատրաստման ծրագրի վերամշակումներն ու արդի պատերազմին համապատասխան փոփոխությունները, այնքան ՋՈւ անձնակազմը պատրաստ կլինի մարտի պայմաններում մարտական բարձր ակտիվություն ցուցաբերել՝ հակազդելով բացասական տեղեկութահոգեբանական ներգործություններին:

Տեղեկութահոգեբանական ներգործությունը զինծառայողների մարտական ակտիվության վրա

Ժամանակակից պատերազմների տիրույթում զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների ուսումնասիրությունները խիստ հրատապ են և բառացիորեն միտված են մարտական իրադրությունում հոգեբանական կայունության պահպանմանը: Մարտական ակտիվությունը մարտի պայմաններում զինծառայողների ֆիզիկական, մասնագիտական ու հոգեկան ռեսուրսները մոբիլիզացնելու և համապատասխան վարքագիծ ցուցաբերելու կարողությունն է, որը մեծապես կապված է տվյալ պահին անձնավորության հոգեֆիզիոլոգիական վիճակի, պահանջմունքների, համոզմունքների և ցանկությունների հետ⁸: Պատահական չէ, որ տեղեկութահոգեբանական ներգործությունը երկու նպատակ ունի. 1. ազդել մարդկանց հոգեկանի բոլոր բաղադրիչների (հույզ, ընկալում, ուշադրություն, հիշողություն, մտածողություն, երևակայություն, խոսք) և վարքի վրա, 2. մանիպուլացնել հակառակորդի տեղեկատվական հնարավորությունները: Համապատասխան պատրաստության վիճակի բացակայության դեպքում բացասական տեղեկույթը կարող է հանգեցնել զինծառայողների՝ տարածության և ժամանակի կողմնորոշման խախտման, ինքնակարգավորման ունակության կորստի, բացասական, ասթենիկ հոգեվիճակների սրման (թշնամուց վախ, խուճապ, ցածր մակարդակի հուզական ինտելեկտ, կասկածներ, համաճառայակիցների նկատմամբ ագրեսիա և այլն), որոնք ուղղակիորեն պայմանավորում են մարտական ակտիվության աստիճանը⁹:

Մասնագիտական գրականության մեջ հիմնականում առանձնացվում են

⁸ Տե՛ս «Факторы, определяющие боевую активность воинов», հղում՝ <http://surl.li/revki>, անցանց՝ 28.02.2024:

⁹ Տե՛ս **Исаев Д., Насонов К.** Современные направления негативного информационно-психологического воздействия на военнослужащих. Способы распознавания и противодействия. Армейский сборник, 2022, № 8, հղում՝ <https://army.ric.mil.ru/Stati/item/422014/>, անցանց՝ 10.02.2024:

հետևյալ արտաքին (սոցիալական ու մարտական) և ներքին (հոգեֆիզիոլոգիական ու հոգեբանական) գործոնները, որոնցում առանձնակի կարևորվում է տեղեկութահոգեբանական ներգործության դերը մարտական ակտիվություն ցուցաբերելիս՝ պայմանավորելով զինծառայողների մարտական ակտիվությունը մարտի դաշտում: Դրանք են՝

1. **սոցիալական գործոններ.** զինվորների վրա դրանց ազդեցությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց հիման վրա են ձևավորվում նրանց վարքի լայն սոցիալական շարժառիթներն ու հաստատուն մարտական կողմնորոշումները: Փորձը ցույց է տալիս, որ զինծառայողների մարտական գործողությունների բնույթը (ակտիվ – պասիվ, անձնուրաց – ինքնապահպանողական և այլն) մեծապես կախված է տվյալ պատերազմի նկատմամբ ժողովրդի ունեցած վերաբերմունքից, դրա նպատակների կարևորության հասարակական ընկալումից, մարդկանց տեղեկացվածության աստիճանից: Դա իր հերթին որոշվում է պատերազմի պատճառների կառուցվածքում (ազգային, սոցիալական, տնտեսական և այլ) շահերի ներկայացվածությամբ: Մարդկանց գիտակցության մեջ պատերազմի պատկերն ստանում է այս կամ այն հուզական գունավորումը՝ կախված այն բանից, թե որքանով են հաջող, ում տարածքում են ծավալվել մարտական գործողությունները, և երկրի բնակչության որ մասն է ֆիզիկապես ու հոգեբանորեն ներգրավված դրանցում¹⁰: Պատերազմող բանակի բարոյահոգեբանական վիճակի ապահովման կարևոր գործոն է թշնամու նկատմամբ ժողովրդի, զինվորների վերաբերմունքը: Պատերազմների փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է դեռ խաղաղ ժամանակ զինվորների մեջ աստվություն սերմանել այն երկրների բանակների նկատմամբ, որոնք իրենց գործողություններում ագրեսիվ հավակնություններ են դրսևորում և պոտենցիալ վտանգավոր են: Իսկ դա նշանակում է, որ ցանկացած պատերազմ մարդկանց ռազմական գիտակցությունը ձևավորելու համար պահանջում է տեղեկութահոգեբանական ներգործության հնարների երկարատև կիրառություն տարբեր ուղղություններով և ոլորտներում:

2. **Մարտական գործոնները** մարտում զինծառայողների այս կամ այն հակազդումները, վիճակը, վարքը պայմանավորող փոփոխականների լայն սպեկտր են: Հետազոտության տվյալների հիման վրա առանձնացվել են հետևյալ գործոնները՝ մարտական գործողությունների տեսակը, պայմանները և ինտենսիվությունը, կիրառվող զենքի առանձնահատկությունները, պաշտպանության միջոցների հուսալիությունը, ժամանակային, բնաշխարհագրական, եղանակակիրմայական պայմանները, կողմերի կորուստների ծավալն ու հարաբերակցությունը, քողարկումը, տեղեկատվական-քարոզչական ու հոգեբանական ձեռնարկումները¹¹: Այստեղ տեղին է նշել նաև Ն. Գոլովինի առաջ

¹⁰ Տե՛ս **Корчемный П. А. и др.** Военная психология: методология, теория, практика. М., 2010, էջ 104:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 105–106:

քաշած՝ «գորքերի ամենամեծ բարոյական առաձգականության սահման» հասկացությունը, ըստ որի՝ որոշակի (25 %) վիրային կորուստներից հետո անձնակազմն այլևս ունակ չէ հաղթելու¹²: Մարտում զինվորի վարքի վրա ազդող էական գործոն է մարտական գործողությունների ինտենսիվությունը: Պարզվել է, որ մեծ ինտենսիվությամբ մարտական գործողությունները նպաստում են զինծառայողների շրջանում արագ հոգնածությանը և հոգեխոցվածքների ընդհանուր թվի աճին: Բացի այդ, հակառակորդի կողմից գանգվածային ոչնչացման զենքի կիրառման մասին միտումնավոր տարածված տեղեկատվությունը կարող է խուճապ առաջացնել մարդկանց մեծ խմբերում և նպաստել միջուկային պայթյունից չտուժած զինվորականների շարքերում բարոյալքմանը¹³:

Այսպես, պատերազմի նպատակը ոչ այնքան հակառակորդին ոչնչացնելն է, որքան նրան քարոզչական, հոգեբանական ձեռնարկումներով վախեցնելը՝ ազդելով մարտական իրավիճակի վերաբերյալ նրա պատկերացումների վրա:

3. **Հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական գործոնների** շարքում, մասնավորապես, առանձնանում է նյարդային համակարգի տեսակը (ուժեղ, թույլ և միջին): Պարզվել է, որ մարտի բացասական գործոնների ուժգնացմամբ պայմանավորված իրադրությունն առաջ է բերում բուժօգնություն պահանջող հոգեբանական լուրջ խանգարումներ և հետևաբար՝ թույլ նյարդային համակարգ ունեցող զինվորների (զինծառայողների ընդհանուր թվակազմի մոտ 15 %-ի) մարտունակության ամբողջական կորուստ: Նման պայմաններում միջին նյարդային համակարգ ունեցող զինվորների (ընդհանուր թվի մոտ 70 %-ը) մարտական ակտիվությունը նվազում է միայն որոշ ժամանակով: Ուժեղ նյարդային համակարգ ունեցող զինվորները (մոտ 15 %) չեն ենթարկվում բարդ իրադրության զգալի հոգեխոցիչ ազդեցությանը: Հաջորդը բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունն է, որը մարտի պայմաններում մեծապես ազդում է զինծառայողի հոգեվիճակի, կամքի, գործողությունների շարժառիթավորման վրա¹⁴:

Ավարտելով մասնագիտական գրականության տվյալների այս համառոտ նկարագրումը՝ նշենք, որ զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնների շարքում էական նշանակություն ունի տեղեկութահոգեբանական ներգործությունը: Այն կարող է մեծացնել զինծառայողի մարտական ակտիվությունը և օգնել մարտական խնդիրը հաջողությամբ կատարելու՝ առանց ժամանակ կորցնելու, մյուս կողմից՝ չճշգրտված, կեղծ տեղեկություն կարող է նվազեցնել մարտական ակտիվությունը և ուշացնել յուրային ու-

¹² Տե՛ս **Ն. Ն. Գուլովին**, Պատերազմի հետազոտություններ, մաս 2: «Աշխատանքային տեսրեր», 2021, № 8, էջ 64:


¹³ Տե՛ս **Караяни А. Г., Сыромятников И. В.**, Военная психология. М.: ВУ, 2016, էջ 49:

¹⁴ Տե՛ս **Корчемный П. А. и др.**, նշվ. աշխ., էջ 105-106:

ժերի գործողությունները: Ասվածը հաստատում է մեր կողմից կատարված հետազոտությունը (2023 թ.), որի նպատակն էր փորձագիտական հարցման և կոնստենտ վերլուծության մեթոդներով (քանակական և որակական վերլուծություն) բացահայտել այն հոգեբանական գործոնները, որոնք պայմանավորում են զինծառայողների մարտական ակտիվությունը: Ըստ քանակական վերլուծության՝ տեղեկույթի ճշգրտությունը և բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից պաշտպանվածությունն ունեն միջին ազդեցություն (50 %), այսինքն՝ հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությունից ՋՈւ անձնակազմի բարձր մակարդակի պաշտպանվածությունը նրանց արդյունավետ և ակտիվ գործունեության կարևոր նախապայմաններից է: Ընդամին, այդ բացասական ներգործությունը, որը տեղեկատվական պատերազմի հիմնական բաղադրիչն է, ներգործում է նաև ընդհանրապես բնակչության վրա՝ ստեղծելով ընդհանուր տրամադրվածություն, որն իր հերթին կարող է զինված ուժերում ձևավորել համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ¹⁵: Տեղեկութահոգեբանական ներգործության միջոցների փոխկապվածությունը զինծառայողների մարտական ակտիվության հետ ներկայացված է ստորև՝ գծապատկերի տեսքով.

Գծապատկեր 1

Չինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող գործոնների փոխկապվածություն



Կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից պատերազմները լուրջ և բարդ պահանջներ են ներկայացնում մարտական գործողություններին մասնակցող անձնակազմին՝ ինչպես տարբեր մակարդակների հրամկազմին, այնպես էլ շարքային մարտիկներին: Տվյալ պահանջներից մեկը նրանց մարտական մեծ ակտիվությունն է, որը պետք է շարունակաբար ու գիտակցաբար դրսևորվի

¹⁵ Տե՛ս Ա. Լոքյան, Ս. Բաղդասարյան, ՀՀ ՋՈւ զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող գործոններ. փորձագիտական գնահատում // «Հայկական բանակ», 2023, № 1, էջ 105-118: DOI <https://doi.org/10.61760/18290108-aal23.1-105>

ամբողջ մարտի ընթացքում՝ հակազդելով բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը: Բացի այդ, հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը հակազդելու կարողությունը պայմանավորված է զինծառայողների և բնակչության կողմից տեղեկույթի քննադատական ընկալումով, պետական մարմինների գործողություններին վստահելով, հակապայքարի համալիր միջոցառումներ ձեռնարկելով:

Այսպիսով, արդի պատերազմներում տեղեկատվական (հոգեբանական) միջոցների դերն ու ռազմական նշանակությունը հնարավորություն են տալիս մինչև մարտական գործողությունները կանխատեսելու պատերազմի ընթացքն ու հավանական ելքը: Այսինքն՝ տեղեկատվական-քարոզչական, հոգեբանական ձեռնարկումները կարող են հանգեցնել իր երկրի համար զինծառայողի հպարտության, հայրենասիրության և բարոյական այլ արժեքների վերացման, հոգեբանական ցածր կայունության, խուճապի, իրավիճակային բարձր տագնապայնության, նյարդահոգեկան անկայունության առաջացման, հրամանատարների հրամանների կատարումից խուսափման և հասարակության շրջանում անվստահության, կասկածի և այլ տրամադրությունների ձևավորման: Հատկապես ԱԲ տեխնոլոգիաները լայն հնարավորություններ են ընձեռում ապատեղեկատվական արշավներ կազմակերպելու, տեղեկույթը հավաքելու, փոխանցելու և օգտագործելու արդյունավետությունը մեծացնելու: Նման պայմաններում խիստ անհրաժեշտ է գտնել զինված հակամարտության ընթացքում կիրառվող տեղեկատվական-հոգեբանական գրոհներին հակազդելու արդյունավետ միջոցներ: Բացի այդ, մարտի դաշտում մարտական բարձր ակտիվություն ցուցաբերելու համար կարևոր են ճշգրիտ տեղեկույթի ստացումը և հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ներգործությանը հակազդելը, որոնք հնարավոր են զինծառայողների՝ արդի պատերազմներին համապատասխան մարտական պատրաստմամբ: Այս համատեքստում առավել քան կարևոր է մշակել և ներդնել հոգեբանամասնագիտական պատրաստման նոր մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմելու տեղեկատվական կամ հոգեբանական պատերազմի դերի և նշանակության, զինծառայողների հոգեվիճակի վրա բացասական տեղեկույթի ազդեցության հետևանքների, դրանց հաղթահարման եղանակների, հակառակորդի կողմից կիրառվող տեղեկատվական-քարոզչական և հոգեբանական ձեռնարկումների մասին՝ նպաստելով իրավիճակի նկատմամբ հարմարվողականության ձևավորմանը:

СВЕТЛАНА БАГДАСАРЯН – Информационно-психологическое воздействие как важный фактор, определяющий степень боевой активности военнослужащих. – Значительное повышение роли информационных (психологических) действий и военного значения информационно-пропагандистских операций в современной войне коренным образом изменило характер войны, имея целью с небольшими ресурсами, без применения военной силы повлиять на руководство государства-противника, душевное состояние конкретных людей, морально-психологическое состояние вооруженных сил, а также на позиции и настроения всего населения. Неслучайно, что

